министров правительства подали в отставку¹⁰³. В создавшихся условиях и учитывая «болезнь» короля. Верховный комиссар Перси Кокс в августе 1922 г. взял в свои руки всю власть. В стране усилились репрессии. По его приказу были запрещены национальные партии, закрыт ряд патристических газет, многие политические деятели были арестованы и высланы¹⁰⁴. Перси Кокс угрожал населению Ирака применить самые крайние меры, если оно будет нарушать «общественный порядок». Спустя месяц Кокс «возвратил» власть королю¹⁰⁵. Однако этот шаг имел свое воздействие на позицию правительства. Последнее пошло на уступку и 10 октября 1922 г. в Багдаде был подписан первый англо-иракский договор. По этому договору Англия обязывалась давать Ираку «советы и помощь» и руководить всем государственным аппаратом. Ирак обязывался принимать на службу британских чиновников, и в финансовых и внешнеполитических вопросах руководствоваться советами англичан. Он не имел права самостоятельно, без согласия Англии назначать и принимать дипломатических представителей. Ирак обязывался принять военную помощь Англии, принимать и осуществлять британские предложения по судебным делам¹⁰⁶. Английский представитель в Ираке являлся верховным комиссаром. Таким образом, Англия сохраняла по этому договору все права, данные ей мандатом, и устанавливала полнейший политический, экономический, финансовый и военный контроль над Ираком. Договор был заключен сроком на 20 лет. Как указывает аль-Хасани, «по этому договору Ирак был отдан в дар Англии»¹⁰⁷. Сам С. Гуревич тоже отмечает, что договор 1922 г. не видоизменил режим мандата и Великобритания по-прежнему была «уполномочена» выполнять свои «обязанности», как держава—мандатарий¹⁰⁸.

¹⁰³ „The Times“, 25.VIII.1922.

¹⁰⁴ См. там же, 30.VIII.1922.

¹⁰⁵ См. И. Левин, стр. 54.

¹⁰⁶ См. «Дипломатический словарь», М., 1960, т. I, стр. 85. «Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914—1956» by J. C. Hurewitz, New York, 1956, vol. 2, p. 111—112.

¹⁰⁷ عبد الرزاق الحسنى... ص 36

¹⁰⁸ См. „Diplomacy in the Near and Middle East“, vol. 2, p. 111.

Весть о заключении договора иракцы восприняли с большим возмущением. В Неджефе власти раскрыли «антиправительственные» заговоры¹⁰⁹. В Багдаде были произведены массовые аресты. Страшась народных выступлений англичане перебросили в Ирак дополнительно индусские войска¹¹⁰. Договор должен был быть ратифицирован парламентом Ирака. Поскольку он еще не существовал, Фейсал I подписал 21 октября 1922 г. указ о проведении выборов в учредительное собрание. Проведение выборов встретило упорное сопротивление народа. По приказанию шиитского духовенства народ бойкотировал выборы¹¹¹. Англичане вынуждены были пойти на некоторые уступки, важнейшая среди которых—сокращение срока договора. По протоколу 30 апреля 1923 г. его срок ограничивался 4 годами. Но вместе с этой уступкой англичане усилили репрессии. Они арестовали и выслали в Иран руководителей шиитского духовенства¹¹². Только после этого удалось провести выборы. Учредительное собрание начало обсуждение вопроса о ратификации договора 29 мая 1924 г. В этот день перед зданием парламента состоялся большой митинг. С лозунгом «Долой договор!» демонстранты требовали отклонения договора. Полиция открыла по ним огонь и несколько демонстрантов было ранено. В самом парламенте обсуждение вопроса шло очень медленно. Большая часть членов парламента колебалась или, как отмечает газета «Дейли геральд», не была настроена принять договор¹¹³. Англия прибегла к угрозам. Она заявила, что если до 11 июня договор не будет ратифицирован, то Великобритания попросит у Лиги Наций санкции на учреждение более строгого контроля над Ираком¹¹⁴. В таких условиях парламент 11 июня 1924 г. 38 голосами против 25 ратифицировал англо-иракский договор¹¹⁵. Парламент состоял из 85 человек, из которых при голосовании 22 человека отсут-

¹⁰⁹ См. «Известия», 17.X.1922.

¹¹⁰ См. там же.

¹¹¹ См. И. Левин, стр. 55.

¹¹² См. S. Longrigg and F. Stoakes, p. 85.

¹¹³ См. „Daily Herald“, 12.VI.1924.

¹¹⁴ См. там же.

¹¹⁵ См. „Matin“, 29.VII.1924.

ствовало, иначе говоря, в пользу договора голосовало менее половины членов парламента. Этот факт сам по себе очень характерен.

Когда народные массы Ирака узнали о ратификации договора, они вышли на демонстрацию, чтобы выразить свой протест. Крупный митинг произошел перед зданием парламента. Против демонстрантов были брошены конные войска, которые и разогнали их. Такая же демонстрация произошла перед королевским дворцом. Народ считал короля ответственным за ратификацию договора¹¹⁶. Маджид Хаддури указывает, что народ Ирака после ратификации этого договора «счел Фейсала изменником, который ради спасения своей шкуры продал страну»¹¹⁷. Патриоты совершили покушение на двух депутатов, выступивших в защиту договора¹¹⁸. Однако все выступления были подавлены и Англия сохранила полностью свои позиции. Более того, Англия использовала Мосульский вопрос для продления своего господства в Ираке. Она не примирилась с мыслью о сокращении срока договора 1922 г.

Долгие годы между Турцией и Ираком шел спор из-за Мосульского вилайета. Турция считала его частью своей территории. Ирак и Англия не желали уступать этот богатый нефтью район Турции. Англия хорошо понимала, что если Мосул перейдет к республиканской Турции, то она не сможет распоряжаться там так, как в Ираке, и, следовательно, лишится Мосульской нефти. Этот спор под давлением Англии Лига Наций решила в пользу Ирака—Мосул окончательно был признан неотъемлемой частью Ирака. Однако Лига Наций поставила перед Англией условие—обеспечить права неарабского населения Мосула, т. е. курдов, и продлить мандатный режим на 25 лет¹¹⁹. Такое решение вполне устраивало Англию, так как она на 25 лет продлевала свое господство в Ираке, устанавливала свой контроль над богатым нефтью районом Мосула и выступала в роли «защитника» курдов, что давало ей

¹¹⁶ См. „L'Humanite“, 29.VI.1924.

¹¹⁷ Majid Khadduri, p. 5.

¹¹⁸ См. „The Manchester Guardian“, 22.VI.1924.

¹¹⁹ См. «Дипломатический словарь», т. I, стр. 86.

возможность вмешиваться в их внутренние дела. Согласно решению Лиги Наций Англия предложила Ираку заключить новый договор, который и был заключен 13 января 1926 г. Этот договор оставлял в силе договор 1922 г., но продлил срок его действия на 25 лет. По этому договору английский мандат оставался в силе до 12 декабря 1950 г., если Ирак раньше не станет членом Лиги Наций. Надо отметить, что заключение договора и его ратификация в отличие от договора 1922 г. не встретили особого сопротивления со стороны той части буржуазии и феодалов-шейхов, которые были настроены оппозиционно к мандатному режиму. Это можно объяснить тем, что присоединение Мосула к Ираку льстило их национальному самолюбию. Но это не значит, что договор 1926 г. вообще не встретил никакого отпора внутри страны и в парламенте. Так, например, при обсуждении данного вопроса в парламенте 20 депутатов во главе с руководителем национальной партии Ясин аль-Хашими в знак протеста покинули парламент¹²⁰. Этот шаг Ясин аль-Хашими объяснил несогласием с тем, что из-за Мосула Ирак согласился остаться под английским мандатом еще на 25 лет. Он считал, что присоединение Мосула к Ираку должно было произойти без всяких условий¹²¹.

Что касается трудящихся масс, то последние продолжали борьбу против английских колонизаторов и ставшего в их руках послушным оружием правительства Ирака. В 1926 г. произошло вооруженное столкновение между иракцами и английскими военными отрядами. Англичане использовали против них самолеты и бронемашину¹²². По сообщению газеты «Дейли экспресс», в 1927 г. в северо-восточной части Ирака произошли настоящие бои между восставшими иракцами с одной стороны, английскими солдатами и иракскими правительственными войсками с другой стороны¹²³. В 1928 г. восстали многие села Ирака. Для подавления этого восстания часто использовались английские самолеты. Постоянное беспокойство причиняли английским и иракским войскам курды. Выступле-

¹²⁰ См. „Daily Telegraph“, 8.II.1926.

¹²¹ См. там же.

¹²² См. «Правда», 6.IV.1926.

¹²³ См. „Daily Express“, 13.VI.1927.

ния курдов на этом этапе стали более организованными и очень часто присоединялись к освободительному движению арабов.

Движение, направленное против английского господства, и вообще недовольство в стране оказали свое воздействие на политику правительства и правящих классов. Последние стремились к большей свободе в управлении страной. Отсюда и их требования об упорядочении финансовых вопросов, увеличении национальной иракской армии и вообще ослаблении британского контроля. Все это создало серьезные осложнения для Великобритании и затрудняло сохранение ее господства в Ираке прежними методами правления. Неслучайно, что в одном из официальных иракских документов сказано, что «годы мандата не были годами спокойного плавания»¹²⁴. И Великобритания решила отступить. Она согласилась на отмену мандата и создание независимого иракского государства. В этом сыграло свою, но не решающую, роль и то обстоятельство, что согласно статусу Лиги Наций все государства, являвшиеся членами Лиги Наций, имели равные с Англией экономические права в Ираке. Теперь, когда Мосул был присоединен к Ираку, империалистические державы стремились приобрести в Ираке нефтяные концессии. В случае отмены мандата они лишились бы этих равных прав. Учитывая все эти обстоятельства, Англия отказалась от мандата, что нашло свое выражение в англо-иракском договоре 1930 г. По этому договору предусматривалось, что со вступлением Ирака в Лигу Наций Англия освобождается от своих мандатных обязательств. Отношения между двумя странами будут строиться на основе равенства и суверенитета.

3 октября 1932 г. Ирак был принят в Лигу Наций¹²⁵. Вместе с этим решением Лига приняла резолюцию об отмене мандата¹²⁶. Ирак юридически стал независимым государством. Однако фактически отмена мандата носила формальный ха-

¹²⁴ „An introduction to the past and present of the Kingdom of Iraq by a committee of officials“, 1946, p. 24—25.

¹²⁵ См. عبد الرزاق الحسيني... ص ٣٧

¹²⁶ См. Majid Khadduri, p. 1.

раक्टर, так как ряд статей договора 1930 г. сохранял военный и финансовый контроль Англии над Ираком и иракское правительство обязывалось по всем вопросам внешней политики советоваться с Англией¹²⁷. Поэтому договор был воспринят с большим недовольством общественностью Ирака. В Ираке начинается долгая и упорная борьба за ликвидацию договора и приобретение настоящей независимости, что составляет основное содержание национально-освободительной борьбы последующего этапа. Однако обсуждение этого вопроса не входит в задачи данной статьи¹²⁸.

Таким образом, 12-летняя упорная борьба народных масс, рабочих и крестьян Ирака, как и патриотически настроенной части национальной буржуазии и шейхов-феодалов привела к отмене английского мандата. Значение этого акта не умаляется тем, что после отмены мандата Англия сохранила в Ираке сильные позиции. Во всех случаях этот акт имеет историческое значение и борьба за отмену мандата является одним из важнейших этапов антиимпериалистической борьбы демократических сил Ирака.

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՔԻ ԳԵՄՈՎՐԱՏԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ (1920—1932 թթ.)

Ա մ փ ո փ ու մ

Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում անցել է տարբեր էտապներ՝ յուրաքանչյուր էտապում սենսիտիվ իր կոնկրետ խնդիրներն ու նպատակները: Մի առանձին էտապ է կազմում 1917—1932 թվականներին ծավալված ազատագրական շարժումը, որի հիմնական բովանդակությունը պայքարն է անգլիական մանդատի վերացման և Իրաքի քաղաքական անկախության համար:

Այս հարցը սովետական արևելագիտության կողմից հատուկ քննարկման առարկա չի հանդիսացել: Իսկ ինչ վերաբերում է բուր-

ժուական պատմագրությանը, ապա նրա մի շարք ներկայացուցիչներ՝ Պ. Կոկս, Ք. Ապտիզրոուվ, Ս. Լոնգրիգ, Ֆ. Ստոքս և ուրիշներ, սխալ դիրքերից են լուսարանում մանդատի էությունը և Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն Իրաքում: Նրանք փորձում են մանդատը ներկայացնել որպես ծառայություն Անգլիայի կողմից՝ որը, իհարկե, չի համապատասխանում իրականությանը: Իրան հակառակ արար մի շարք հեղինակներ՝ Աբդուլ Ռազզակ ալ-Հիլալին, Աբդուլ Ռազզակ ալ-Հասանին, Աբդուլ Ռահման ալ-Բազազը, Ամին Սաիդը և ուրիշներ, իրավացիորեն մանդատը դիտում են որպես զաղուլթացման և ստրկացման մի նոր ձև: Անգլիական օկուպացման դեմ Իրաքում ծավալված պայքարը 1920 թ. հունիսին վերածվեց համազգային զինված ապստամբության: Նրա հիմնական նպատակն էր շեղյալ հայտարարել Սան Ռեմոյի որոշումները մանդատի վերաբերյալ և նվաճել Իրաքի քաղաքական անկախությունը: Հողվածում տրվում է այդ ապստամբության շարժիչ ուժերի բնութագրերը և մանրամասն լուսարանվում է ապստամբության ընթացքը: Ապստամբությունը շկարողացավ հասնել իր նպատակին և 1920 թ. նոյեմբերին նա պարտություն կրեց: Պարտության հիմնական պատճառներն այն էին, որ ուժերը անհավասար էին և այն վատ էր կազմակերպված:

Թեև ապստամբությունը պարտվեց, բայց պայքարը մանդատի վերացման համար շղաղարեց: Այդ տեսակետից հատկանշական են Իրաքի դեմոկրատական ուժերի պայքարը անգլո-իրաքյան 1922 թ. պայմանագրի դեմ՝ 1922—1924 թվականներին, քրդական ազատագրական շարժումները, բազմաթիվ զինված ելույթներ 1926—1932 թվականներին, որոնք ի վերջո ստիպեցին Անգլիային հրաժարվել մանդատից և ձեռնադրել Իրաքի անկախությունը: 1932 թ. հոկտեմբերի 3-ին նա ընդունվեց Ազգերի լիգայի անդամ:

Սակայն մանդատի վերացումը վերջին հաշվով ձեռնարկվեց էր կրում, որովհետև 1930 թ. կնքված անգլո-իրաքյան պայմանագրով Անգլիան Իրաքում լրիվ պահպանում էր իր ռազմական, քաղաքական ու տնտեսական դիրքերը: Իրաքը շարունակում էր մնալ կախման մեջ Անգլիայից: Իրաքում սկսվում է պայքարը այդ պայմանագրի վերացման և իսկական անկախություն ձեռք բերելու համար:

Այնուամենայնիվ, մանդատի, թեկուզ և ձեռնարկված, վերացումն ունի պատմական նշանակություն և նրա համար մղած պայքարը հանդիսանում է Իրաքում ծավալված ազգային-ազատագրական պայքարի կարևոր էտապներից մեկը:

¹²⁷ См. „Diplomacy in the Near and Middle East“, vol. 2, pp. 178—181.

¹²⁸ См. N. O. Oganesjan, Der Kampf der demokratischen Kräfte des Irak gegen den anglo-irakischen Vertrag von 1930. „Kolonialismus und Neokolonialismus in Nordafrika und Nahost“, Berlin, 1964, S. 351—364.

IRAQ'S DEMOCRATIC FORCES FIGHTING FOR THE REVOCATION OF THE BRITISH MANDATE

(1920—1932)

by N. H. HOVHANNISSIAN

S u m m a r y

The national-liberation struggle in Iraq has gone through various stages with problems and pursuits peculiar to each of them. The liberation movement of 1917—1932 constitutes a stage of its own, aimed at cancelling the British mandate and securing the political independence of Iraq.

This question has not been considered independently by Soviet orientalist. As to bourgeois historiography, some of its representatives such as P. Cox, C. Upthegrove, S. Longrigg, F. Stoakes and others take erroneous stands in elucidating the essence of the mandate and British policy in Iraq. They attempt to present the mandate as a kind of service by Britain which, no doubt, is at variance with the reality. Contrary to this, a number of Arab authors, such as Abdul Razzak el-Hilali, Abdul Razzak el-Hassani, Abdul Rahman el-Bazaz, Amin Said and others justly regard the mandate as a new means of colonisation and enslavement. The struggle waged in Iraq against British occupation grew into an armed uprising in June 1920. Its basic aim was to annul the decisions of San Remo on the mandate and achieve Iraq's political independence. The paper deals with the guiding motives of this uprising and sets forth the course of events. The uprising failed to achieve its goal and it was quelled in November, 1920, the inequality in power and poor organisation being the main reasons accounting for its defeat.

The failure of the uprising did not throw a wet blanket on their zeal for the revocation of the mandate. In this respect the following events are noteworthy: the struggle of Iraq's democratic forces against the 1922 Anglo-Iraqi treaty, in the years 1922—1924; the Kurdish liberation movements; numerous armed uprisings between 1926 and 1932 which eventually led to Britain giving up the mandate and formally recognising

Iraq's independence. She was admitted to membership of the League of Nations in 1932.

But the revocation of the mandate was formal in essence since the Anglo-Iraqi treaty concluded in 1930 provided for the full preservation of military, political and economic positions of Britain in Iraq. The country continued to be dependent on Britain. The struggle for the revocation of this treaty and the achievement of Iraq's real independence set in.

Nevertheless, the revocation of the mandate, albeit in form, is of historic significance, and the struggle waged to this end is one of the most important stages in Iraq's national-liberation struggle.

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ՔՈՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ 1919—1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Օսմանյան կայսրության բայթայումը ավելի ուժեղացրեց նրա տիրապետության տակ տառապող ժողովուրդների ազատագրական պայքարը: Բացառություն չէր կազմում նաև Հարավային Քուրդիստանը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հարավային Քուրդիստանում սկսված ազգային-ազատագրական այդ շարժումը բուրժուական ժողովրդի անկախության պայքարի փայլուն էջերից է:

Պատմական իրադարձություններով հարուստ և իրարամերձ մի շարք կարծիքների առարկա հանդիսացող XX դարի 20-ական թվականների քրդական շարժումները ինչ-որ չափով ուսումնասիրվել են ինչպես արտասահմանում, այնպես էլ մեզ մոտ՝ Սովետական Միությունում: Արտասահմանում լույս տեսած գործերից այս առթիվ կաբելի է հիշատակել անգլիական հեղինակներ Ս. Լոնգրիգի «Իրաքը 1900—1950 թթ.»¹, է. Էդմոնդսի «Քրդերը, թուրքերը և արաբները»², Վ. Ռ. Հեյի «Երկու տարի Քուրդիստանում»³, ինչպես նաև Հ. Բելի⁴, Ե. Բ. Սոնի⁵, Ա. Մ. Համիլտոնի⁶ հիշողությունները, Հորգանանի նշանավոր քաղաքական գործիչ, ազգությամբ բուրջ Ալի

¹ St. Longrigg, Iraq 1900 to 1950. A political, social and economic history, London, 1953.
² C. Y. Edmonds, Kurds, Turks and Arabs, London, 1957.
³ W. R. Hay, Two years in Kurdistan. Experiences of a political officer, 1918—1920, London, 1921.
⁴ G. L. Bell, The Letters of Gertrude Bell, London, 1927.
⁵ E. B. Soan, To Mesopotemia and Kurdistan in disguise, London, 1926.
⁶ A. M. Hamilton, Road through Kurdistan. The Narrative of an engineer in Iraq, London, 1937.

Մայրու ալ-Գուրանի⁷ և Իսմայիլ Չոլի ճանապարհորդական նոթերը⁸, Ալա ադ-Դի Սչադիի ակնարկները⁹ քրդական ապստամբությունների մասին և այլն: Սակայն 20-ական թվականներին իրաքյան Քուրդիստանում ծայր առած ազատագրական շարժումները, այնուամենայնիվ, անհրաժեշտ չափով չեն լուսարանված: Արևմուտյան բուրժուական պատմաբանները Իրաքում 20-ական թվականներին ծավալված ինչպես քրդական, այնպես էլ արաբական ազատագրական շարժումները մեկնաբանում են բուրժուական օբյեկտիվիզմի դիրքերից և նենդափոխում պատմական փաստերը: Վերը նշված անգլիական գրեթե բոլոր հեղինակների մոտ Իրաքի ժողովրդի՝ այդ թվում և քրդերի ազատագրական շարժումները ներկայացվում են որպես «Արևելքի հետամնացություն և անկախության քաղաքակրթական միսիայի դեմ», «Ֆեոդալական ընդվզումներ», կամ «օրինականության դեմ ուղղված անարխիզմ»: Այդ առթիվ ահա թե ինչ է գրում անգլիական ամսագրերից մեկը, որի արտահայտած տեսակետը կարմիր թելի պես անցնում է անգլիական բոլոր հեղինակների աշխատությունների մեջ: «Արհամարհանքը իշխանության նկատմամբ, — գրում էր անգլիական «Էյլիէյտիկ ռեվյու» ամսագիրը, — արտակարգ լայն տարածում է գտնում... (Իրաքում — Շ. Մ.): Հենց այդ ձևով Իրաքում 1920 թվականին անկարգություններ սկսվեցին, անկարգություններ, որոնք առանց շրեկ հիմքի անվանվում են «ազգային ապստամբություն»¹⁰: Իրաքում արաբա-քրդական ազատագրական շարժումների գնահատման հարցին յուրօրինակ մոտեցում է հանդես բերում անգլիական իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը պաշտպանող «Բնդիա դեյլի նյուս» թերթը: Նա գրում էր, որ «Իրաքի արաբները և քրդերը ոչ մի իշխանության չեն վստահում, քանի որ թուրքական իշխանությունների կողմից անընդհատ ենթարկվել են հետապնդումների ու վիրավորանքի»¹¹: Չառարկելով թուրքական իշխանությունների մասին թերթի արտահայտած մտքին, միաժամանակ պետք է նշել, որ նա փաստորեն այդ ձևով արդարացնում էր անգլիական տիրապե-

7. علی سیدو الکورانی «من عمان الى الحمادية جولة فی کردستان الجنوبية» عمان، ۱۹۳۹
8. اسماعیل چول، «الیزیدیه قریما و حمدیشا»، بیروت ۱۹۵۷
9. علاء الدین سجادی، شورشکائی کورد و کورد و کوماری عراق، بغداد ۱۹۵۹
10. «Эйшнэйтик ревью», № VII, 1927, стр. 21.
11. «Индия Дейли ньюс», 5. X 1921.

տուժյան հաստատումը Իրաքում և հետևապես դատապարտում նրա դեմ հանդես եկող ազատագրական պայքարը: Չնայած իրենց աշատու վերաբերմունքին, այնուամենայնիվ անգլիական հեղինակների աշխատություններում կա բավականաչափ փաստական նյութ, որը նպաստում է հարցի լուսաբանմանը:

Քուրդ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերին անդրադարձել են նաև սովետական մի շարք արևելագետներ: Նրանք որոշակի աշխատանք են կատարել քուրդ ժողովրդի պատմության հարցերը գիտական հիմքի վրա դնելու և մեկնաբանելու դործում: Դրա հետ մեկտեղ չի կարելի չնշել այն իրողությունը, որ մեր մի շարք պատմաբանների կողմից սխալ գնահատական է տրվել 20-ական թվականների քրդական ազատագրական շարժումներին և տարիներ շարունակ գիտական, ինչպես նաև քաղաքական նշանակություն ունեցող այդ հարցը հարկ եղած չափով չի ուսումնասիրված: Այդ բոլոր սխալ մեկնաբանությունները արդյունք են առաջին հերթին քրդական ազատագրական շարժումների սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների առանձնահատկությունների անտեսման: Քերենք մի երկու օրինակ: Կ. Վասիլևը իր «Քրդական ապստամբությունների պատճառները և շարժիչ ուժերը» մեծածավալ հոդվածում¹², բավականին հաջող փորձ կատարելով ներկայացնելու 20—30-ական թվականների քրդական ազատագրական շարժումների սոցիալ-տնտեսական պատճառները, դրա հետ մեկտեղ սխալ, հակադիտական գնահատական է տալիս այդ շարժումներին: Որքան էլ տարօրինակ է, նա գտնում է, որ 20—30-ական թվականների քրդական ապստամբությունները «օրյեկտիվորեն ծառայել են իմպերիալիստական տերությունների նպատակներին»¹³: Համանման տեսակետի է նաև Քաղի Զադեն: Վերջինս վերը նշված քրդական ապստամբությունները պարզապես համարում է «աննպատակահարմար և ռեակցիոն»: Քանի որ Քաղի Զադեի տեսակետը առավել բնորոշ է մի շարք հեղինակների համար, արժե կանգ առնել դրա վրա: Անշուշտ, առարկելի չէ նրա այն թեզը, թե, անջատվելու նպատակահարմարության մասին հարցը, հետևապես նաև «անկախ Քուրդիստանի» ստեղծման հարցը, որի համար քրդերը պայքար էին մղում, անհրաժեշտ է լուծել էլնելով բացառապես պատմական կոնկրետ իրադրությունից»¹⁴: Նրա կարծիքով բանի դեռ շարժման ղեկավարությունը գտնվում է

ունևոր դասակարգի, ֆեոդալների ձեռքում, «անկախ Քուրդիստանի ստեղծումը միայն վնաս կարող է բերել»¹⁵: Իսկ ինչո՞ւ: Հեղինակը պատասխանում է. «Քրդերի ապստամբությունները չունեն ռևոլյուցիոն ղեկավարություն, բատրակները, վարձակալները և ազքատ անասնապահները չեն կազմակերպված մի դասակարգի մեջ և «անկախ Քուրդիստանի» ստեղծումը պետական պարիսպ կղեր քրդական ցեղերի մասսայի և Քուրքիայի ու Իրանի ռևոլյուցիոն բանվոր դասակարգի միջև...»¹⁶: Բավականին լայն տարածում գտած այս տեսակետը քննադատության չի դիմանում: 20—30-ական թվականներին Քուրդիստանում «ցեղային հարաբերությունները» սոսկ քող էին, որոնց ետևում թաքնված էր քրդական հասարակության դասակարգային ստրուկտուրան: Իսկ «ցեղային կարգերի» վերապրուկները, որոնց վերացումը, անշուշտ, առաջադիմական երևույթ կլիներ, և որի համար առաջ էր քաշվում Քուրքիայի, Իրանի և Իրաքի ռևոլյուցիոն բանվոր դասակարգի հետ միասնական պայքարի հարցը, գաղութային վիճակում գտնվող Քուրդիստանում ոչ թե վերացվում, այլ որոշ իմաստով կոնսերվացվում էին: Նրա պահանջանման գործում հասկանալի պատճառներով շահագրգռված էին և տիրապետող պետությունների կառավարող շրջաններ, և քուրդ ֆեոդալներն ու հոգևորականությունը: Այս իմաստով վերոհիշյալ տեսակետն ինքն իրեն է հակասում: Քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հաղթանակը որոշ իմաստով կնշանակեր նաև Քուրքիայի, Իրանի և Իրաքի աշխատավորական զանգվածների ռևոլյուցիոն պայքարի հաղթանակ, բանի որ, ինչպես Մարքսն է ասում. «Ազատ չի կարող լինել այն ժողովուրդը, որը ճնշում է մյուս ժողովուրդներին»:

Վերջապես ազատագրական շարժման ղեկավարության մասին հարցը: Պատմական զարգացման այնպիսի ժամանակաշրջանում, երբ գրեթե բացակայում էր բանվոր դասակարգը, իսկ գյւղացիությունը բոլոր դեպքերում չէ, որ հնարավորություն է ունենում շարժման ղեկը վերցնել իր ձեռքը, այդ շարժումները երբեմն ղեկավարվում են առանձին ֆեոդալների, կամ հոգևորականության ներկայացուցիչների կողմից: Ըիշտ չըմբռնել պատճառաբանված պատմական այս օրյեկտիվ երևույթը, նշանակում է ցանկալին առաջադրել իրականության փոխարեն: Այստեղ աչքաթող է արվում այն իրողությունը, որ աշխատավորական լայն զանգվածների սոցիալական

¹² «Аграрные проблемы», М., № 9—10, 1931.

¹³ Նույն տեղում, էջ 113:

¹⁴ В. Таги Заде, Горе побежденным («Бюллетень прессы Среднего Востока», № 8—9, 1930, стр. 69).

¹⁵ Նույն տեղում, էջ 70.

¹⁶ Նույն տեղում:

և ազգային ճնշման հիմքի վրա առաջացած ազգային-ազատագրական պայքարն է, որ «առաջ է քաշել» վերը նշված դեկավարներին, այլ ոչ թե բնդհակառակը:

Ոչ քիչ ազավաղումների տեղիք է տվել նաև բրդական ազատագրական շարժումների նկատմամբ իմպերիալիստական տերուսթյունների դիրքի հարցը: Անգլիական կառավարությունը, որ միշտ ակտիվ քաղաքականություն է վարել Մերձավոր և Միջին արևելքում, իր տեսադաշտից դուրս չէր թողնում բրդական շարժումները: Անգլիայի շահերը բրդական ազատագրական շարժումները իր շահերին ծառայեցնելու համար հիմք է տվել այն սխալ տեսակետին, որ Հարավային Քուրդիստանի 20-ական թվականների շարժումները հրահրվել են նրա կողմից: Այստեղ կամա, թե ակամա ջուր է լցվում Քուրդիայի, Իրանի և Իրաքի ռեակցիոն կառավարական շրջանների այն պնդումներին, թե բրդական շարժումները չունեն ներքին դրդապատճառներ և «հրահրվում են դրսից»: Մինչդեռ իրականում բրդական ժողովրդական դանդաղները «առանց իմպերիալիստների ինտրիգների էլ բավականաչափ հիմքեր ունեին ապրտամբվելու համար»¹⁷:

Սովետական տրեկրագետ Ֆ. Ռոստոպչինը խոսելով այն տեսության անհեթեթություն մասին, ըստ որի Արևելքի մի շարք երկրներում 20-ական թվականներին տեղի ունեցող շարժումները հիմնականում կապվում էին անգլիական գործակալների, և հատկապես ոչ անհայտ Լոուրենսի հետ, շատ դիպուկ գրել է. «Եթե Լոուրենսը անգլիական իմպերիալիստների գործակալների մի խմբի հետ գործում էր Արաբիայում, եթե նա, հնարավոր է, որ մասնակցություն է ունեցել Աֆղանստանում ռեակցիոն բնույթի ապստամբության մեջ, եթե այդ նույն «ամենակարող» Լոուրենսի անպայման մասնակցության հետ է կապվում «անկախ Քուրդիստանի» դադափարը, ապա դա նմանվում է Քրիստոսի մասին ստեղծված առասպելին: Մնում է միայն հնարել «Լոուրենսականության պաշտամունքը»¹⁸: Վերը նշված սխալ տեսակետների տրամաբանական շարունակությունն է մեկ այլ «տեսություն». դա բրդական ազատագրական շարժումների հակադրումն է Քուրդիայի, Իրանի և Իրաքի ժողովուրդների ազատագրական շարժումներին: «Բրդական ապստամբությունները, — գրում է Վասիլեր, — առայժմ օրչեկտիվորեն օգտագործվում են իմպերիալիզմի կողմից հարևան երկրներում (Քուր-

քիա, Իրաք, Իրան) ազգային-ազատագրական շարժումները թուլացնելու համար»¹⁹: Չհիմնավորված այս տեսակետին տուրք են տվել նաև սովետական այնպիսի ականավոր արևելագետներ, ինչպես Մ. Պավլովիչը²⁰, Գ. Կրյաժինը²¹, Լահուտին²², Բերգերը²³ և ուրիշներ: Բերգերը, օրինակ, այս հարցում այնտեղ է հասնում, որ ուղղակի գրում է. «Այն բանի պատճառը, որ բրդական ապստամբությունները կարողացան ընդունել երկարատև և բավականին համառնույթ, հանդիսանում է այդ ապստամբություններին ցույց տրվող արտաքին օգնությունը»²⁴: 20-ական թվականների բրդական ազատագրական շարժումները, ընդհակառակը, ուղղված էին Քուրդիայի, Իրանի և Իրաքի ռեակցիոն կառավարող ռեժիմների դեմ, թուլացնում էին արևելյան վայրենաբարո բռնապետությունների հիմքերը և դրանով իսկ նպաստում հիշյալ երկրների աշխատավորների պայքարին, մի պայքար, որ մղում էին բոլոր աղգոսթյունների աշտավորական գանդվածները իրենց անտեսական և սոցիալական դրություն բարելավման համար:

Ահա վիճելի այն հարցերի ոչ լրիվ շարքը, որոնք կապված են 20—30-ական թվականների բրդական ազատագրական շարժումների, այդ թվում և Հարավային Քուրդիստանի 1919—1920 թթ. ազատագրական շարժման հետ: Քանի որ 1919—1920 թվականներին Հարավային Քուրդիստանում Ծեյխ Մահմուդ Բարզինջանի կողմից ղեկավարվող բրդական ազատագրական շարժումը ունի շատ ընդհանրություններ հետագա տարիներին Քուրդիստանում տեղի ունեցող ազատագրական պայքարի հետ, ուստի կարժում ենք, որ տվյալ հոդվածի մեջ ներկայացվող իրադարձությունների ընդհանուր պատկերը և վերլուծությունը կնպաստի հիշյալ պրոբլեմի ըմբռնմանը և քուրդ ժողովրդի ազատագրական պայքարի այդ էտապը ճիշտ գնահատելուն:

* * *

Ռազմա-ստրատեգիական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող Իրաքը և Քուրդիստանը իր ազդեցության ոլորտի

¹⁹ «Аграрные проблемы», № 9—10, 1931, стр. 113.

²⁰ М. Павлович, Борьба за Азию и Африку, Ленинград, 1925, стр. 102.

²¹ В. Н. Гурко-Кряжин, Ближний Восток и державы, М., 1925, стр. 145.

²² Лахути, Курдистан и курды («Новый Восток», № 4, 1923, стр. 67).

²³ Бергер, Национальный вопрос и империалистическая политика на Ближнем Востоке («Революция и национальности», № 12, 1931, стр. 112).

²⁴ Նույն տեղում, էջ 113:

¹⁷ «Бюллетень прессы Среднего Востока», № 8—9, 1930, стр. 37.

¹⁸ Նույն տեղում, էջ 40:

մեջ գցելու համար անգլիական իմպերիալիզմը եռանդուն ջանքեր էր գործադրում դեռևս առաջին համաշխարհային պատերազմից առաջ: Երբ սկսվեց իմպերիալիստական պատերազմը, բրիտանական իմպերիալիզմն իր գործակալների միջոցով ամեն կերպ աշխատում էր օսմանյան ծանր լծի դեմ արարների ու մյուս ժողովուրդների դժգոհությունը օգտագործել իր այդ իմպերիալիստական պլանների իրագործման համար:

Անտանտի երկրների ռազմական հաջողությունները պատերազմում նպաստավոր պայմաններ բնձեռեցին Անգլիային Իրաքի և Հարավային Քուրդիստանի օկուպացման համար:

1917 թ. մարտին անգլիական զորքերը զբաղեցին Քաղզաղը: Ռազմական այդ գործողությունների ղեկավար սըր Ստենլեյ Մոդը 1917 թ. մարտի 19-ին հրատարակեց մի կոչ ուղղված բնակչությանը, որտեղ ասված էր. «Մեր բանակները որպես հաղթողներ չեն եկել ձեր քաղաքները և հողերը, այլ որպես ազատարարներ»²⁵: Անտանտի տերությունները ամեն կերպ ջանում էին հանգստացնել Իրաքի արաբ և քուրդ ազդարնակչությունը: Այդ նպատակն էր հետապնդում բրիտանական և ֆրանսիական կառավարությունների 1918 թ. նոյեմբերի 8-ի համառոտ գեկլարացիան: «Արևելքում պատերազմ վարելու Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի վերջնական նպատակը, — ասված էր նրանում, — մի պատերազմ, որը սկսել է գերմանական նվաճողական շարժումը, հանդիսանում է Քուրդիայի ճնշման տակ գտնվող ժողովուրդների լրիվ ու վերջնական ազատագրումը և ազգային կառավարությունների ու վարչակարգերի ստեղծումը՝ տեղական բնակչության կողմից ազատ բնորոշության միջոցով»²⁶:

Իրաքի ժողովրդի «կամքը» արտաքննապես հաշվի առնելու և հնարավոր անախորժություններից խուսափելու համար անգլիական կառավարությունը որոշեց Իրաքի պետության ձևի ու անգլիական խնամակալության հարցը ղնել «ժողովրդական բնարկման»: Իրաքում Անգլիայի գերագույն կոմիսար Վիլսոնի կողմից առաջադրվեցին հետևյալ հարցերը, որոնց ժողովուրդը մաս-մաս պետք է պատասխաներ:

1. Արդյոք հավանություն տրվո՞ւմ է առանձին իրաքյան պետության գոյությունը Անգլիայի խնամակալության ներքո, ներառյալ Մոսուլը:

²⁵ «Бюллетень Народного комиссариата иностранных дел», 1922, № 112, стр. 44.

²⁶ Նույն տեղում, էջ 45:

2. Բնակչությունը ցանկանո՞ւմ է, որ նոր պետությունը ղեկավարվի արաբական էմիրի կողմից:

3. Որպես պետության ղեկավար ո՞ւմ պետք է նախապատվություն տալ:

Իրաքի այդ ժամանակվա ներքին դրությունը ոչ մի երաշխիք չէր տալիս, հիշյալ հարցերի նկատմամբ ժողովրդի խեղճական կարծիքի մասին ճիշտ պատկերացում կազմելու նախ, բրիտանական զինված ուժերի առկայությունը հանդիսանում էր այն վճռական գործոնը, որն ապահովում էր Անգլիայի համար ցանկալի պատասխանի ստացումը: Երկրորդ, Իրաքի սուննիների և շիիների տարածայնությունները իրենց հերթին խանգարում էին ճիշտ պատկերացում կազմելու ժողովրդի տրամադրությունների մասին: Եվ վերջապես, արդեն այդ ժամանակ նկատելի էր քրդերի ազգային իրավունքների անտեսման տենդենց, ինչպես տեղական, այնպես էլ անգլիական օկուպացիոն իշխանությունների կողմից: Անգլիայի քաղաքական կոմիսարը իր հրահանգներում պարզորոշ հասկացնել էր տալիս, որ նախապատվությունը կտրվի միայն «գոհացուցիչ պատասխաններին»²⁷: Ինչպես և պետք էր սպասել, անգլիական օկուպացիոն իշխանությունները հիմնականում ապահովեցին իրենց համար ցանկալի պատասխանի ստացումը: Սակայն քրդական շրջանների ազգաբնակչությունը կամ շատ պասսիվ մասնակցություն ունեցավ քվեարկությանը, կամ էլ բոլորովին չմասնակցեց²⁸: Ինչպես Հարավային Քուրդիստանում, այնպես էլ Քուրդիստանի՝ Իրանի և Քուրդիայի կազմի մեջ մտած հատվածներում բավականին ուժեղացել էին ազգային անկախության տրամադրությունները: 1919 թ. ապրիլի 18-ին Կոստանդնուպոլսի բրիտանական գերագույն կոմիսարը Քաղզաղի իր կոլեգաներին ուղարկած հեռագրում նշում էր, որ քրդական ազգաբնակչության ներկայացուցիչները վճռականորեն պահանջում են ճանաչել իրենց ազգային իրավունքները: Մի կողմից նրանք, մյուս կողմից «Արգուլ Կաղերը (չնայած այն բանին, որ նա Քուրդիայի պետական խորհրդի անդամ է) պահանջում են քրդերի անկախությունը և թուրքական լծից ազատագրում»²⁹: Հարավային Քուրդիստանի քրդերի տրամադրությունների մասին տրված պատասխանում Իրաքի անգլիական գերագույն կոմիսարը նույն թվականի մայիսի 3-ին իր հերթին հաստատելով այդ միտքը,

²⁷ St. Longrigg, Iraq 1900—1950, London, 1953, p. 117.

²⁸ Նույն տեղում:

²⁹ S. S. Gavan, Kurdistan. Divided nation of the Middle East, London, 1958, p. 20.

գրում էր. «Նրանք (բրդերը—Շ. Մ.) ցանկանում են ունենալ իրենց սեփական պետությունը»³⁰:

Անգլիական օկուպացիայի ժամանակաշրջանում Իրաքի ինչպես արաբական, այնպես էլ բրդական շրջաններում քաղաքական պարտիաներ, այժմյան հասկացողությամբ, շկային: Բայց բրդական ազգային ուժերն ունեին իրենց նացիոնալիստական կազմակերպությունները՝ դասակարգային խայտաբղետ կազմով: 20-ական թվականներին գործող բրդական ազգային կազմակերպություններից առավել աչքի ընկնողները հանդիսանում էին «Բրդական անկախության ընկերությունը», որի կենտրոնը գտնվում էր Կահիրեում և «Քուրդիստանի վեհությունը»՝ Ստամբուլում: 1919 թ. ամռանը Սուլեյմանիայում ևս կազմակերպվել էր բրդական գաղանի քաղաքական մի կազմակերպություն, որի մեջ մտնում էին բանակային սպաներ և տեղական բնակչության այլ ներկայացուցիչներ: Հիշյալ կազմակերպության գործունեության մասին հետագա տեղեկությունների բացակայությունը վկայում է, որ նա, ըստ երևույթին, դադարել է գոյություն ունենալուց: Չնայած դրան, հիշյալ կազմակերպությունների գոյության փաստն ինքնին հետաքրքիր էր այն իմաստով, որ նրանք ցույց էին տալիս ընդհանուր ղեկավարության առկայությունը ներքին և արտաքին ռեակցիոն ուժերի դեմ և ազատագրական պայքար մղելու վճռականությունը Քուրդիստանում:

Անգլիական օկուպացիոն իշխանությունները ձևում քաղաքականություն էին վարում Հարավային Քուրդիստանում: Օկուպացիայի հենց առաջին օրերից քաղաքական սպաները սերտ կապերի մեջ մտան բրդական ավազանու ներկայացուցիչների հետ, հատկապես Կիրևուկում և Սուլեյմանիայում: Նրանք մեծ ջանքեր էին գործադրում հարաբերություններ հաստատելու մասնավորապես Հարավային Քուրդիստանի նշանավոր քաղաքական գործիչ Շեյխ Մահմուդ Բարզինջանի հետ: Վերջինիս նախնիները հայտնի էին թուրքական բռնակալության դեմ իրենց պայքարով: Թուրքական կառավարությունը մշտական անհանգստության մեջ էր Հարավային Քուրդիստանում տեղի ունեցող շարժումների պատճառով և ամեն կերպ աշխատում էր լիկվիդացնել ընդգիմազիր տարրերին: Ժամանակին այդ նենգ քաղաքականության զոհը դարձավ Բարզինջանների ընտանիքը: Թուրքական կառավարությունը Շեյխ Մահմուդի հորը՝ Սեիդ Ռասուլին և նրա բառասուն ազգականներին հրավիրեց Մո-

սուլ, որպեսզի նրանց հետ հաշվեհարդար տեսնի: Այդ ստոր դավադրության իրականացման համար արհեստականորեն կազմակերպվեց արաբա-բրդական ընդհարում: Այն շրջանը, որտեղ գտնվում էին բրդերը, պահպանվում էր թուրքական պահակախմբի կողմից, սակայն ընդհարման պահին թուրքական ջոկատն անցավ արաբների կողմը և բոլոր բրդերին կոտորեցին, ընդ որում «Սեիդի ընտանիքը կտոր-կտոր արվեց»³¹: Տասնամյա Մահմուդը հրաշքով փրկվեց հաշվեհարդարից: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում սիրիական ճակատում ֆրանսիացիների դեմ կոմոդ Շեյխ Մահմուդը շուտով կոնֆլիկտի մեջ է մտնում թուրքական վեցերորդ բանակի հրամանատար Ալի էսհան փաշայի հետ, որի համար ձերբակալվում է և ուղարկվում Մոսուլի բանառ: Երբ պատերազմը մոտենում էր իր ավարտին, նույն թուրքական զորահրամանատարը Շեյխ Մահմուդին ազատում է, նպատակ ունենալով բրդական ուժերը օգտագործել անգլո-ֆրանսիական հարձակման դեմ: Սակայն անգլիացիներն այդ ժամանակ հասել էին վճռական առավելությունների և երբ Մոսուլը գրավվեց, Շեյխ Մահմուդին այս անգամ ձերբակալեցին անգլիացիները, նրան ուղարկելով Բասրա: Շուտով քաղաքական դեպքերը ստիպեցին անգլիական օկուպացիոն իշխանություններին ազատելու Շեյխ Մահմուդին: Այս հանգամանքը բաղադրում էր հետևյալ պատճառներով: Անգլիական կառավարությունը ուզում էր ստեղծել տպավորություն, որ ինքը հաշվի է առնում բրդերի ազգային իրավունքները, որպեսզի այդ կարգով վայելի բրդերի համակրանքը: Միաժամանակ նա ուզում էր բրդերին հակադրել Թուրքիային, որն իր հերթին ձգտում էր անգլիական գոտու մեջ գտնվող ժողովուրդներին հրահրել անգլիական տիրապետության դեմ: Վերջապես քիչ նշանակություն չունեցավ այն փաստը, որ անգլիական զինված ուժերը ի վիճակի չէին հնազանդության մեջ պահել Իրաքի արաբական և բրդական շրջաններին, որոնք ղեկավարվում օսմանյան կայսրության ծանր լծից, միաժամանակ պայքարում էին այդ լուծը անգլիականով փոխարինելու պլանների դեմ: Այդպիսի պայմաններում օկուպացիայի առաջին տարիներին Անգլիային շատ ձեռնառու էր բրդական «ինքնավար պետության» մասին խոստումներով անգործության մեջ պահել իրաքյան Քուրդիստանը:

Մայր նոյեմբեր 1918 թ. նոյեմբերին, հատուկ նպատակով մեկնեց Սուլեյմանիա, այսպես կոչված օվարչական ժամանակավոր մի-

³⁰ նույն տեղում, էջ 21:

³¹ «Новый Восток», 1923, № 4, стр. 58.

սխտեմ հաստատելու, որն ընդունելի լիներ ժողովրդին»³²: Շեյխ Մահմուդին հայանվեց, որ եթե Սիրվանի և Մեծ Զաբի միջև գտնվող շրջանները ընդունում են նրա առաջնորդությունը, ապա անգլիական իշխանությունները չեն առարկի քրդական ինքնավար գոտի ստեղծելու դեմ: Նա ստանում էր «հուքումդարի» (կառավարողի) տիտղոս: Սակայն սկզբից ևեթ անգլիացիները միջոցներ ձեռնարկեցին Շեյխ Մահմուդի իրավունքները սահմանափակելու համար: Քաղաքական մի քանի սպաներ Զամչեմալի, Հալարջալի և Ռանիալի շրջաններում նշանակվեցին Շեյխ Մահմուդի «օգնականներ»: Անգլիական սպաների մի խումբ նշանակվեց Սուլեյմանիայի գործերի վարժեցման համար: Անգլիական կառավարության հրահանգով Նոյելը ցեղապետներին, շեյխերին և ֆեոդալական վերնախավի այլ ներկայացուցիչներին նշանակում էր գավառապետներ, որոնք պետք է գործեին անգլիական ներկայացուցիչների ղեկավարության ներքո: Օկուպանտները ամեն կերպ աշխատում էին օգտագործել քրդական ավազանու մեջ գոյություն ունեցող թշնամանքը և կրոնական տարբերությունները: Սակայն և՛ թե օկուպացիայի սկզբնական ժամանակաշրջանում անգլիացիները փաստորեն հարկազրկված էին «ինքնավարության իրավունքներ» տալ Հարավային Քուրդիստանին, ապա իրենց դիրքերը ամրապնդելուց հետո հենվելով քրդական նահանգապետների և ֆեոդալական խմբավորումների միջև գոյություն ունեցող թշնամանքի վրա դրանք աստիճանաբար առաջիններին հեռացրեցին կառավարումից և իշխանությունը կենտրոնացրին իրենց ձեռքում³³: «Քրդական ինքնավար շրջանի» վերաբերյալ անգլիական պլանը վերածվում էր ֆիկցիայի: Երկուդ կրելով Շեյխ Մահմուդի աճող ազդեցությունից, օկուպացիոն իշխանությունները ինքնավար շրջանից անջատեցին Հալարջալի օկուպը³⁴: «Քրդական ինքնավար շրջանում» գոյություն ունեցող հողային շուծված պրոբլեմին, նյութական ծանր վիճակին ավելացան օկուպացիոն իշխանությունների կամայականությունները և անօրինական հարկերը: Անգլիական գաղութարարները, — գրում է Լ. Կոտլովը, — հաշվի չէին նստում մարդկանց ազգային զգացմունքների հետ, վիրավորում էին նրանց մարդկային արժանապատվությունը: Օկուպացիոն բանակի զինվորները անողորա-

բար ավերում էին հնագույն կուլտուրայի մեծարժեք հուշարձանները: Օկուպանտ սպաները, մինչև իսկ բարձրաստիճան սպաներ, ծեծում էին արաբ և քուրդ ծերերին և երեխաներին³⁵: Յուրաքանչյուր փոքր առիթ կարող էր հասցնել ժողովրդական լայն հուլամունքի: Շեյխ Մահմուդը տեսնում էր, որ քրդական «ինքնավարությունը» փաստորեն ձևական բնույթ է կրում: Իրականում ամեն ինչ վճռվում էր քաղաքական «օգնական սպաների» ձեռքով: Անգլիական իշխանությունները որոշեցին ավելի սահմանափակել «ինքնավար շրջանի» իրավունքները: 1919 թ. ապրիլին որոշվեց այնտեղ մտցնել այնպիսի կարգ, որ «նման լիներ օկուպացված մյուս շրջանների վարչակարգին»³⁶: Միաժամանակ Նոյելի փոխարեն քաղաքական կոմիսար նշանակվեց Սոնը, որն ավելի զիտակ էր «քրդական գործերին»: Տեղի ունեցող այս փոփոխությունները պարզորոշ ցույց էին տալիս, որ անգլիական օկուպացիոն իշխանությունները «քրդական ինքնավարության» մասին հայտարարություններով տակտիկական խաղ էին սնում և որ այդ «ինքնավարությունից» օգտվելու քրդերի առաջին իսկ փորձերը բնականաբար պետք է արգելակվեին օկուպանտների կողմից: Ստեղծված լարված իրադրության պայմաններում Շեյխ Մահմուդն իր կողմնակիցների հետ խորհրդակցեց ապստամբություն սկսելու պլանի մասին: Ապստամբության նախապատրաստման գործին մասնակցում էին Բարզանի, Համավանդի, Զաֆի և Հավրոմանի շրջանների ներկայացուցիչները: 1919 թ. մայիսի սկզբներին տեղի ունեցած այս խորհրդակցության որոշումները պահվում էին խիստ գաղտնի³⁷:

1919 թ. մայիսի 20-ի վաղ առավոտյան Մահմուդ Բարզինջանը իր եղբայր՝ զնդապետ Շեյխ Քադիրի հրամանատարության տակ գտնվող քրդական ջոկատի օգնությամբ հանկարծակի հարձակվեց Սուլեյմանիայի անգլիական «քաղաքական սպայի» ռեզիդենցիայի վրա և ձերբակալեց նրա ամբողջ անձնակազմը: Անգլիական քաղաքական բյուրոյի գրոշի փոխարեն վարչական շենքի կատարին բարձրացվեց քրդական ազգային դրոշը: Անգլիական սպա Լիսի հրամանատարության տակ գտնվող ջոկատը նահանջեց դեպի Խանեկին: Մայիսի 26-ին ապստամբները գրավեցին նաև Խանեկինը: Օկուպացիոն իշխանությունները տազնապի մեջ էին: Կիրկուկի անգլիական ջոկատը հեծելազորայինների, իրաքյան զորքերի զրա-

³² C. J. Edmonds, Kurds, Turks and Arabs, L., 1957, p. 80.

³³ Л. Н. Котлов, Национально-освободительное восстание 1920 года в Ираке, М., 1958, стр. 83.

³⁴ Edmonds, նշված աշխատությունը, էջ 28:

³⁵ Л. Н. Котлов, стр. 32.

³⁶ Edmonds, p. 90.

³⁷ ЦГАОП СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 47, л. 13.

հապատ մեքենաների և լեռնային թնդանոթների հետ շարժվեց դեպի Սուլեյմանիա: Քուրդ ապստամբները Սուլեյմանիայից մոտ 35 կմ. հեռավորության վրա գտնվող Տասըսյաի կիրճում պարտության մատնեցին անգլիական զորքերին: Ապստամբների ձեռքն ընկավ բավական քանակությամբ ռազմական հանդերձանք³⁸: Սուլեյմանիայի շրջանում սկսված ապստամբության լուրը տարածվեց ամբողջ Հարավային Քուրդիստանում: Քրդական շատ շրջաններ սպասողական վիճակի մեջ էին և սպասում էին դեպքերի հետագա զարգացմանը: Այս իմաստով Տասըսյաի հողթանակը մեծ նշանակություն ունեցավ ապստամբության հետագա տարածման համար: «Շատ տատանվողներ, — գրում էր այդ դեպքերի մասնակից էդմոնզսը, — միացան Մահմուդին: Նույնիսկ սահմանի մյուս կողմում՝ Պարսկաստանի քրդերը ապստամբվեցին իրենց կառավարության դեմ, պահանջելով մտնել Շեյխի ղեկավարության տակ գտնվող քրդական մեկ պետության մեջ»³⁹:

Ամենուրեք սիսեցին գործել պարտիզանական ջոկատներ: Հաճախակի դարձան կազմակերպված հարձակումները անգլիական զինվորական խմբերի և քաղաքական սպաների վրա:

Անգլիական իշխանություններին մտահոգում էր արաբական շրջաններում ապստամբության տարածման վտանգը: Արագորեն տեղի ունեցավ զինվորական ստորաբաժանումների վերադասավորում: Ապստամբությունը ճնշելու պարտականությունը դրվեց անգլիական գեներալ Թեոդոր Ֆրեյզերի վրա, որը հանդիսանում էր Մոսուլում տեղավորված 18-րդ զորամասի հրամանատարը⁴⁰: Կիրևուկի հյուսիս արևելքում գտնվող Բազիանի շրջանի բնակչության և նրան միացած ջարբարցիների նոր ելույթը ավելի դժվարացրեց անգլիական զորքերի վիճակը: Չամշեմայի հարավային մասում Շեյխ Մահմուդին ակտիվ օժանդակություն էր ցույց տալիս Մուհամեդ Ջարարին: Աբդուլա Ասկյարիի զխավորությունը քրդական 10 զյուղեր ապստամբություն հայտարարեցին Կալա Սեկայի շրջանում⁴¹:

Գեներալ Թեոդոր Ֆրեյզերը ապստամբների դիրքի և ուժերի տեղարաշխման մասին տեղեկություններ ստանալու համար 1919 թ. հունիսի 16-ին հետախուզական ջոկատ ուղարկեց Դերբենդե Բազի-

յան կիրճի շրջանը: Անգլիական զործակալներին հաջողվեց ապստամբների դեմ հանել քուրդ մի քանի ֆեոդալներին: Վերջիններս ուղղակի օգնություն ցույց տվեցին անգլիական զորքերին ապստամբությունը ճնշելու գործում: Հալաբջայում անգլիական քաղաքական սպա Գ. Մ. Լիսը կարողացավ քաղաքական կյանքում ակտիվ գեր խաղացող քրդուհի Ադիլա հանումի օգնությամբ ձախողել ապստամբների կողմից կառավարական շենքերի պաշարման գործը: Ջաֆի և Փիշգարի զինված ջոկատները օգնեցին անգլիացիների «սանձման» գործողություններին: Քրդական դավաճան ֆեոդալների օժանդակությամբ անգլիացիները մանրամասն տեղեկություններ ստացան ապստամբների դիրքերի մասին: Քրդական ապստամբների դեմ մղվող պայքարում անգլիական օկուպանտներին մեծ օգնություն ցույց տվեց հատկապես դավաճան քուրդ ֆեոդալ Բարաք Ադան: Վերջինս մի քանի հարյուր հոգուց բաղկացած վարձկանների ջոկատ ուղարկեց Սուլեյմանիայի նահանգապետ Սոնի տրամադրության տակ, որը կառավարական զորքերի հետ միասին իրականացնում էր «կարգը պահպանելու» միսիան: Համանման անփառունակ միսիա կատարեց անգլիական նվիրատվությունների ու խոստումների զոճ դարձած զիզայի ցեղի առաջնորդ հուրշուղ Ադան, որն իր ամբողջ ուժով պայքարում է ապստամբների դեմ էրբիլի անգլիացիների իշխանության ներքո պահելու համար⁴²:

Անգլիական իշխանությունները ապստամբությունը ճնշելու համար ձեռնարկում էին մի շարք միջոցառումներ: Դրանցից մեկը հանդիսանում էր քուրդ աշխարհազորականների հավաքագրումը ապստամբության դեմ օգտագործելու համար: Սակայն վերջին պահին աշխարհազորականները հրաժարվեցին ենթարկվել անգլիական սպաների հրամաններին:

Այդ դժգոհությունը վերածվեց ուղղակի ապստամբության: Ապստամբները գրավեցին էրբիլի և Ռեհանդուզի միջև գտնվող մի շարք բնակավայրեր: Անգլիական սպաները իրենց ջոկատներով փախան Ռեհանդուզից և Քոյից⁴³:

1919 թ. հուլիսի 18-ին, լուսաբացից առաջ, Ֆրեյզերի հրամանով հրետանային համազարկ տրվեց ապստամբ ուժերի վրա Դերբենդե Բազիան կիրճի շրջանում: Վերջինս ուներ ստրատեգիական մեծ նշանակություն ռազմական գործողությունների ելքի համար: Այդ պատճառով էլ քուրդ ապստամբները իրենց ուժերի հիմնական

³⁸ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 47, л. 31.

³⁹ Edmonds, p. 32.

⁴⁰ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 47, лл. 32—33.

⁴¹ علاء الدين سجادی «شورشکانی کورد و کوردی کوماری» عراق «بهنگاد» ۱۹۵۹، ر ۹۰

⁴² նույն տեղում:

⁴³ „The Times“, 10.IX.1920.

մասը կենտրոնացրել էին այնտեղ: Ուժերի այս կարգի դասավորու-
թյունը, սակայն, առավելություն էր տալիս անգլիական զինված
ուժերին, որոնք հնարավորություն էին ստանում կենտրոնացված
հարված հասցնել ապստամբներին: Մի քանի ժամվա մարտից հե-
տո ապստամբների 100 հոգուց բաղկացած մի ջոկատ գերի ըն-
կավ⁴⁴: Ապստամբությունը հարած քրդական մյուս շրջանների գյու-
ղացիությունը առանձին-առանձին ի վիճակի չեղավ դիմադրել
անգլիական զորքերի հարձակմանը: Մարտի ելքի վրա քիչ ազդե-
ցություն չունեցավ նաև Շեյխ Մահմուդի վիրավորվելը: Նա հենց
կովի առաջին օրը վիրավորվեց դաստակից և ոտքից: Տեղեկություն-
ներ ստանալով Մահմուդի վիրավորվելու մասին, Ֆրեյզերը հրամա-
յեց անմիջապես գտնել նրան: Քրդական հիմնական ուժերի պար-
տությունը, որի մասին լուրերի տարածումը հմուտ կերպով կազմա-
կերպում էին անգլիական զործակալները, թեաթափ արեց մյուս
շրջանների ապստամբներին: Անգլիական զորքերի մի ջոկատ ա-
ռանց որևէ լուրջ դժվարության մտավ Սուլեյմանիա: Հուլիսի 30-ին
անգլիացիները շրջապատեցին Քիֆրին⁴⁵: Չնայած ապստամբությա-
նը հիմնական հարված էր հասցված և այն որևէ վտանգ չէր ներ-
կայացնում, գերագույն կոմիսարին, Ֆրեյզերին՝ մտահոգում էր
հատկապես Շեյխ Մահմուդին ձերբակալելու խնդիրը: Էդմոնդսը
բավականին հետաքրքիր մանրամասնությամբ է նկարագրում Շեյխ
Մահմուդին ձերբակալելու գործողությունները: Խոսելով Ֆրեյզերի
կողմից իրեն՝ Էդմոնդսին Շեյխ Մահմուդին ձերբակալելու գործը
հանձնարարելու մասին, նա իրոնիալով գրում է. «Ես զարմացած
էի... եթե Շեյխ Մահմուդի ձերբակալումը այդքան հեշտ բան էր,
ապա ինչի՞ հիմամբ Քուրդիստան էր եկել մի գեներալ-մայոր (այսինքն
Ֆրեյզերը—Շ. Մ.) հետևելով, հեծելազորքով, դրահապատ մեքե-
նաներով, թնդանոթներով և այլն»⁴⁶: Շեյխ Մահմուդը և ապստամ-
բության մի շարք այլ ղեկավարներ ձերբակալվեցին:

Սակայն անգլիական զորքերի գործողությունները դրանով
չավարտվեցին: Քրդական առանձին ջոկատներ շարունակում էին
պարտիզանական կռիվներ մղել ապստամբությամբ բնդրված մի
շարք շրջաններում: Այլ շրջանների «հանդարտեցման» համար գոր-
ծում էին մի քանի պորամասեր: Հունիսի երկրորդ կեսին Խանեկի-
նից և Սուլեյմանիայից դուրս եկած երկու ջոկատներ շարժվելով

դեպի Սրվանի հովիտը գրավեցին Հալաբջան, որի կառավարիչ
նշանակվեց անգլիական սպա Լին: Հուլիսին, «սանրման» արշավ-
ներ էին կազմակերպվում Շար Բաժարի, Բարդինջանի, Փենջվինի
և Խուրմալիի շրջաններում⁴⁷:

Օգոստոսի սկզբներին հրապարակվեց մի հայտարարություն
Հարավային Քուրդիստանի «հանդարտեցման» մասին⁴⁸: Շեյխ Մահ-
մուդը կանգնեց անգլիական ռազմական դատարանի առջև: Վեր-
ջինս նրան դատապարտեց մահվան, որը հետագայում փոխարին-
վեց 10 տարվա բանտարկությամբ: Շեյխ Մահմուդին և նրա եղ-
բայր Շեյխ Կադիրին աքսորեցին Հնդկաստան:

Այսպիսով, անգլիական զորքերի օկուպացիայից հետո սկսված
ժողովրդական զինված ելույթը, որ սկսվեց Հարավային Քուրդիստա-
նում, ճնշվեց: Նրա պարտությունը հիմնական պատճառն այն էր, որ
նա չընդգրկեց ամբողջ Քուրդիստանը: Նույնիսկ ապստամբություն
հայտարարած շրջանների միջև ամուր կապ գոյություն չունեի: Ինչ-
պես միշտ, ֆեոդալական թշնամանքն օգտագործվեց անգլիա-
ցիների կողմից և մի շարք բուրգ ֆեոդալներ անմիջական մասնակ-
ցություն ունեցան ապստամբության ճնշման գործին: Ապստամ-
բության պարտության մյուս կարևոր պատճառն այն է, որ անգլիա-
կան ուժերը գերազանցում էին ապստամբներին և ավելի լավ էին
զինված: Վերջիններս զինված էին մանր հրազենով, որը վճռական
պահին արդյունավետ լինել չէր կարող: Ապստամբության հաջող
ընթացքի վրա բացասական ազդեցություն ունեցավ այն հանգա-
մանքը, որ Իրաքի արաբական շրջաններում ժողովրդական հու-
զումները լայն թափ չէին ստացել, որը հնարավորություն տվեց
օկուպանտներին իրենց զինված ուժերը ազատորեն տեղաշարժել
իրար հետ շկալված ելույթների դեմ:

1919 թ. մայիս-հուլիս ամիսներին Հարավային Քուրդիստա-
նում բռնկված ապստամբությունը պարտվեց, բայց այն հանդիսա-
ցավ լուրջ ազդակ՝ քրդական ազգային-ազատագրական շարժումնե-
րի հետագա ծավալման համար:

1919 թ. քրդական ապստամբությունը հանդիսացավ Իրաքի
ժողովրդի 1920 թ. ռեյուլցիոն ապստամբությանը նախորդած ազ-
դակներից մեկը: Նա մեծապես նպաստեց բուրգ ժողովրդի ազգա-
յին ինքնազիտակցության դարգացմանը, դուրս եկավ նեղ շրջա-

⁴⁴ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 77, л. 36.

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Edmonds, p. 47.

⁴⁷ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 7, л. 32 (Տե՛ս նաև Edmonds...
p. 50).

⁴⁸ Նույն տեղում, թ. 34:

նակներից և ունեցավ համազգային ապստամբության վերածվելու ակնառու տենդենցներ: «Այս ապստամբությունը համազգային նշանակություն ունեցավ ոչ միայն Իրաքի, այլև Իրանի քրդերի համար, որոնք միացան Շեյխ Մահմուդին»⁴⁹:

Մահմուդ Բարզինջանի ղեկավարած ապստամբության պարտությունից հետո անմիջապես երևացին վերահաս նոր ռևոլյուցիոն պոսիվումների նախանշաններ: 1919 թ. հունիսին Ամադիայում սկսված ապստամբության մասնակիցները միայն սեպտեմբերին զենքերը ցած գրնցին: Տեղական բնույթի հուլումներ էին տեղի ունենում քրդական շրջանների գրեթե մեծ մասում՝ Ռանիայում, Ռեանդուզում, Աբրայում, Ջերեզ Սինջարում:

1919 թ. Շեյխ Մահմուդի ապստամբությունից հետո քրդական շրջաններում տեղի ունեցող զինված ելույթների մեջ ամենանշանավորը նույն թվականի նոյեմբերին Ահմեդ Բարզանիի գլխավորած ապստամբությունն էր: Բնորոշ է, որ ժողովրդական մասսաների ընդհանուր հակահիմնադրամասական տրամադրությունների պայմաններում նույնիսկ որոշ ֆեոդալներ հանդես էին գալիս որպես հակահեղինակական սպառաքի մասնակիցներ: Նոյեմբերյան ազրստամբությունը սակայն այնպիսի ժամանակ սկսվեց, երբ քրդական շարժումը ապրում էր ժամանակավոր տեղատվություն, իսկ արաբական շրջաններում ռևոլյուցիոն խմորումները ղեռնա չէին վերածվել զինված ելույթի: Նրա պարտությունից ավարտվում է Հարավային Քուրդիստանում սկսված ազատագրական շարժման առաջին էտապը:

Շեյխ Մահմուդ Բարզինջանի ապստամբության պարտությունը սակայն օկուպանտներին հանգստություն չբերեց: Քրդական շարժումն առաջացնող պատճառները շարունակում էին գոյություն ունենալ: Առջևումն էր պայքարը Մոսուլի համար, որի մեջ «քրդական» պատրվակը օգտագործվում էր և՛ Անգլիայի և՛ Թուրքիայի կողմից: Ահա թե ինչու անգլիացիները քրդական «ինքնավար շրջանի» ստեղծման պլանի ձախողումից հետո Հարավային Քուրդիստանում իրենց գիրքերն ամրացնելու համար մի շարք նոր միջոցառումներ մշակեցին: Բրիտանական կառավարությունը ծրագրում էր Քուրդիստանում երկաթուղիների ու ճանապարհների շինարարություն, որը բացառապես ունենալու էր ռազմա-ստրատեգիական նշանակություն: Այդ կարգի ձեռնարկումներից էր նախատեսվող

Քիզիլ-Ռարաթ և Քիֆրի-Կիրկուկ երկաթուղագծերի հարցը: Հասկանալի պատճառներով անգլիացիները այս երկաթուղագծի կառուցման անհրաժեշտությունը կապում էին «Իրաքի տնտեսական զարգացման հետ»: Սակայն, նրա իսկական նպատակների բացահայտման վրա լույս են սփռում անգլիական իշխանությունների պաշտոնական փաստաթղթերը: Այսպես, 1919 թ. օգոստոսի 22-ին Հնդկաստանի դործերի գծով Անգլիայի պետական քարտուղարը Բադղազի բրիտանական գերագույն կոմիսարին ուղարկած հեռագրում ի թիվս այլ հարցերի, խոսում էր նաև հիշյալ երկաթուղու մասին: «Նորին մեծության կառավարությունը,— գրում էր նա,— ուշադրությամբ ուսումնասիրել է Քիզիլ-Ռարաթից մինչև Քիֆրի և Կիրկուկ երկաթուղի կառուցելու հարցը: Ինչպիսին էլ լինի այս գծի օգտակարությունը, նրա անմիջական կառուցումը միայն ստրատեգիական նշանակություն ունի, որովհետև այն հարկավոր է Հարավային Քուրդիստանի խաղաղեցման (ընդգծումը մերն է.—Շ. Մ.) և պահպանման համար»⁵⁰:

Քրդական ազգային-ազատագրական շարժումը ջլատելու և Հարավային Քուրդիստանն իր տիրապետության տակ պահելու բրիտանական իմպերիալիզմի բաղադրականության բնորոշ քայլերից մեկը «քրդական ավտոնոմ պետությունների» ստեղծման ծրագիրն էր, որը, սակայն չիրականացավ: Բանն այն է, որ օկուպացիայի հենց սկզբից Հարավային Քուրդիստանի ժողովրդական մասսաները խիստ անհաշտ դիրք բռնեցին անգլիական տիրապետության հանդեպ: Քրդական ազգային շարժումը, որի հակաթուրքական բնույթի հետ ոչ քիչ հույսեր էր կապում Անգլիան, դուրս էր գալիս այդ շրջանակներից և ուղղվում նաև անգլիական իմպերիալիզմի դեմ: Նման պայմաններում Իրաքի անգլիական ռազմական և քաղաքական դործիչների մի մասը իր կառավարությանը համոզում էր «քրդական ավտոնոմ պետությունների ֆեդերացիա» կազմելու անհրաժեշտություն մեջ: Առաջին հայացքից բուրդ ժողովրդի ազգային իրավունքների ճանաչման տպավորություն ստեղծող այս քայլը իրականում մի միջոց էր քրդական միասնական ազատագրական պայքարի զարգացումը արգելակելու համար: Անգլիացիները այդ ձևով ուղում էին ավելի բորբոքել քրդական ավագանու միջև իշխանության համար մղվող պայքարը, որն, անշուշտ, կհնչեցնեց բրիտանական իմպերիալիզմի տիրապետության պահպանումը: Ահա այդ առթիվ իր կառավարությանը ինչ էր գրում Հնդկաստանի դործերի գծով

⁴⁹ «История международного рабочего и национально-освободительного движения», часть II, изд. ВПШ при ЦК КПСС, М., 1962, стр. 410.

⁵⁰ Gavan, p. 30.

Անգլիայի պետական քարտուղարը. «Ինչ վերաբերում է Քուրդիստանին, ապա մեր կարծիքն այն է, որ հարմար կլինի խրախուսել ավտոնոմ պետությունների ֆեդերացիայի կազմումը... Պետություններ, որոնք կկառուցանան միմյանց դեմ կռվել (ընդդժույժ մերն է—Շ. Մ.), բայց չեն վնասի Միջազգային»⁵¹,

Քրիտանական իմպերիալիզմի խարդախ քաղաքականությունն ի վիճակի չէր կանխելու վերահաս ելույթները: 1920 թ. Իրաքի արաբական շրջաններում բռնկված զինված ելույթները վերածվեցին ազգային խոշոր ապստամբության՝ ուղղված անգլիական իմպերիալիզմի տիրապետության դեմ: 1920 թ. ապստամբությունը Իրաքի ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն դրվագներից մեկն է: Հիշյալ ապստամբության ժամանակ Հարավային Քուրդիստանում մեծ մասշտաբի ելույթները բացակայում էին: Քրդական մի շարք շրջաններում տեղի ունեցող ելույթները և պարտիզանական կռիվները անգլիական օկուպանտների դեմ ինքնուրույն ուժ չէին ներկայացնում և նրանց վախճանը կապված էր արաբական շրջաններում տեղի ունեցող մեծ իրադարձությունների հետ: Հատկապես նշանակալից է այդ տեսակետից 1920 թ. սեպտեմբերին Դիալայում սկսված ապստամբության պարտությունը, որը միանգամից փոխեց դրությունը նաև Քուրդիստանում: Քրդական ավազանու ներկայացուցիչները, տեսնելով նման վիճակը գնացին անգլիական օկուպանտների հետ ընդհանուր լեզու գտնելու ճանապարհով: Այդ կարգի կոմպրոմիսի գնացին խոշնավ և գիրդի ցեղերի առաջնորդները, սուրճիների ապստամբության ղեկավար, բուրդ ֆեոդալ Օբեյդուլան և Կիրկուկի ու Սուլեյմանիայի քրդական ֆեոդալները⁵²: Սեպտեմբերի կեսերին անգլիացիների կողմից կազմակերպված ասորական վարձկան ջոկատները գլխավոր պարտության մատնեցին ապստամբած քրդական աշխարհազորայիններին Մոսուլի մոտակայքում⁵³: Այս պարտությունից հետո քրդական շրջաններում դրությունը առժամանակ հանդարտվեց և ժամանակ առ ժամանակ անգլիական պատժիչ դորախմերը Քուրդիստան էին արշավում միայն պարտիզանական ցաք ու ցրիվ ջոկատները լիկվիդացնելու համար:

1920 թ. Իրաքի արաբական շրջաններում սկսված զինված ապստամբությունը, որն ուղղված էր քրիտանական իմպերիալիզմի

տիրապետության դեմ, ունեցավ խոշոր նշանակություն Իրաքի ժողովրդի կյանքում: Քրդական շրջանները, որոնք 1919 թ. գտնվում էին Իրաքի ազատագրական շարժման ավանդարդում, այժմ համեմատաբար թույլ մասնակցություն ունեցան այդ ապստամբության մեջ: Դա բացատրվում էր երկու պատճառով:

1. Անգլիական օկուպացիոն իշխանությունները ռազմական մեծ ուժով ճնշեցին քրդական ազատագրական շարժման առավել մարտունակ ուժերը և հաշվեհարդար տեսան նրա ակտիվ ղեկավարների հետ: Դա ժամանակավորապես թուլացրեց քրդական շարժման թափը:

2. Ինչպես սրաբական, այնպես էլ քրդական ազատագրական պայքարի ղեկավարները որևէ լուրջ փորձ չարեցին արաբների և քրդերի պայքարի միջև միասնական կապ ստեղծելու համար: Արաբական և քրդական շրջաններում ազատագրական շարժումները փաստորեն զարգանում էին առանձին, միմյանց հետ չկապված: Այնուամենայնիվ, ինչպես գրում է Կոտլովը, «... շնայած ազգային, կրոնական և ցեղային տարբերություններին, երևան եկան տարբեր ազգությունների, դավանանքի ու ցեղային միավորումների մերձեցման նշաններ: Այդ մասին են վկայում երկրի արաբական և քրդական բնակչության միաժամանակյա և փոխադարձաբար միմյանց վրա ազդեցություն գործող ելույթների փաստերը»⁵⁴:

Մեկ-երկու տարի անց պատկերը նորից փոխվեց: 1921—22 թվականներին Իրաքյան Քուրդիստանը նորից դարձավ ազգային ազատագրական պայքարի և զինված ելույթների թատերաբեմ: Այդ պայքարի հիմնական շարժառիթը դարձյալ քրդական ինքնավարության հարցն էր: Շարժման կենտրոնական դեմքը դարձյալ Մահմուդ Բարզինջանն էր:

Շեյխ Մահմուդ Բարզինջանի ղեկավարած ապստամբությունը նոր՝ առաջընթաց քայլ էր բուրդ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի մեջ: Մահմուդ Բարզինջանի կողմից ղեկավարվող ինչպես այս, այնպես էլ հետագա ապստամբությունները, որոնք տևեցին մինչև 1931—32 թվականները, բուրդ ժողովրդի ազատագրական պայքարի կարևորագույն էտապ են: Այդ պայքարի փորձը և դասերը նպաստեցին քրդական ազգային ազատագրական պայքարի հետագա զարգացմանը և կազմակերպվածությունը:

⁵¹ Gavan, p. 30.

⁵² „The Times“, 17.IX.1920.

⁵³ Л. Котлов, стр. 168.

⁵⁴ Котлов, стр. 168.

БОРЬБА ЗА НАЦИОНАЛЬНУЮ НЕЗАВИСИМОСТЬ В ЮЖНОМ КУРДИСТАНЕ В 1919—1920 гг.

Р е з ю м е

В статье, на основании архивных материалов, а также данных советской и иностранной печати и литературы освещается один из важнейших этапов курдского освободительного движения—борьба за национальную независимость в Южном Курдистане в 1919—1920 гг.

Курдские, а также арабские освободительные движения 20-х годов в Ираке рассматриваются западной буржуазной историографией с позиций буржуазного объективизма и фальсифицируя исторические факты. Буржуазная историография расценивает эти движения как «реакцию восточной отсталости против европейской цивилизации» или «анархизм, направленный против законности».

В статье делается попытка показать тесную связь курдских освободительных движений с социально-экономическими условиями Курдистана и, таким образом, опровергнуть антинаучную версию о том, что эти движения являются результатом «подстрекательства извне».

Поражение Османской империи в первой мировой войне еще больше усилило освободительную борьбу народов, находящихся под турецким игом. Это явление наблюдалось также и в Южном Курдистане. Под давлением курдского освободительного движения английские оккупационные власти признали автономию Южного Курдистана. Его правителем (хукумдар) был признан видный деятель курдского освободительного движения Шейх Махмуд Варзинджан. Однако признание автономии Южного Курдистана английскими властями было продиктовано тактическими соображениями и носило временный характер.

Вскоре между курдскими демократическими силами и английскими оккупационными властями возникает военный конфликт. Восставшие курдские силы во главе с Шейхом

Махмудом вступают в борьбу против английских вооруженных сил, которыми командовал генерал Теодор Фрейзер. Несмотря на временные успехи, курдское восстание все же потерпело поражение, что обуславливалось внутренними и внешними неблагоприятными условиями. Английский военный суд вынес Шейху Махмуду смертный приговор, который в дальнейшем был заменен 10 годами тюремного заключения. Тем не менее английским империалистам не удалось приостановить народное движение в Курдистане. В последующие годы в Южном Курдистане поднимается новая волна народно-освободительной борьбы, направленной против господства английского империализма.

Несмотря на поражение, курдское освободительное движение 1919—1920 гг. имело огромное значение в деле развития национального самосознания курдов.

FIGHTING FOR NATIONAL INDEPENDENCE IN SOUTHERN KURDISTAN IN 1919—1920

by SH. KH. MGOI

S u m m a r y

Relying on archival documents as well as on Soviet and foreign press information and publications, the paper reviews one of the most important stages in the liberation movement of the Kurds—the fight for national independence in Southern Kurdistan in 1919—1920. The liberation movement of the Kurds in the 20ies of the present century is, as a whole, inadequately dealt with in historical publications.

The Kurdish and Arab liberation movement of the 20ies in Iraq is considered by bourgeois historiography from the angle of bourgeois objectivism which falsifies historical facts. In the eyes of bourgeois historiography those movements are „a reaction to oriental backwardness as against European civilisation“ or „anarchism levelled against lawful means“

An attempt has been made in the present paper to show the close links between the Kurdish liberation movements and

the social and political conditions of Kurdistan and to discard the unscientific version according to which those movements allegedly result from „instigations from the outside“.

The defeat of the Ottoman Empire during World War I has intensified the liberation struggles of the peoples under Turkish yoke. The same phenomenon was observed in Kurdistan. Under pressure of the Kurdish liberation movement the English occupational authorities recognised, in November 1918, the autonomy of Southern Kurdistan. Sheikh Mahmood Barzinjan, the noted leader of the Kurdish liberation movement, was proclaimed ruler of the autonomous area. Yet British recognition of the autonomy of Southern Kurdistan was motivated by practical considerations and was of a temporary nature.

Presently an armed conflict burst out between the Kurdish democratic forces and the British occupational authorities. The rebellious Kurdish forces led by Sheikh Mahmood started fighting the British troops commanded by general Theodore Freiser. Despite temporary success the Kurdish uprising ended in failure owing to internal and external unfavourable conditions. The British court-martial sentenced Sheikh Mahmood to death which was later commuted to 10 years' imprisonment. Nevertheless the British imperialists bailed to halt the popular movement in Kurdistan. In the following years new waves of national-liberation struggle surged over Southern Kurdistan aimed against the rule of British imperialism.

Notwithstanding the defeat, the Kurdish liberation movement of 1919—1920 was of paramount importance in developing the national self-consciousness of the Kurds.

Ա. Ա. ՔԱՅՐԱՄՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԳՐԵՏԻ ՍՍՆՋԱՔՈՒՄ (ՀԱԹԱՅ)
(1938 թ. սեպտեմբեր — 1939 հուլիս)

Ալեքսանդրետի սանջաքը¹ մինչև 1939 թ. հունիսի 23-ը, երբ այն ֆրանս-թուրքական համաձայնագրի հիման վրա կցվեց Թուրքիային, հանդիսանում էր Սիրիայի մեկ շրջանը: Նույն թվականի մայիսի 12-ին կնքվել էր անգլո-թուրքական փոխօգնության դաշինքը: Այդ երկու ակտերը հանդիսանում էին անգլո-ֆրանսիական դիվանագիտության մշտնիսենյան կուրսի բնական շարունակությունը: Անխուսափելի թվացող համաշխարհային կոնֆլիկտի սպառնալիքի առջև, անգլո-ֆրանսիական իմպերիալիստների համար անհրաժեշտ էր ապահովել Թուրքիայի բարեկամությունն ու ղինակցությունը: Այդ խնդրի իրագործման համար նրանք զոհարեցին Սիրիայի անկապտելի մասը հանդիսացող Ալեքսանդրետի սանջաքը:

Սիրիան մինչև օրս էլ չի ձանաչում սանջաքի ապօրինի զավթման այդ ակտը և պահանջում է իրեն վերադարձնել իր երկրի անբաժան մասը²:

Սիրիայից սանջաքի խլման՝ ժողովուրդների ինքնորոշման և միջազգային իրավունքի կոպիտ խախտման անգլո-ֆրանս-թուրքա-

¹ Տարածությունը 4805 քառ. կմ., իսկ բնակչությունը՝ 240.000, որից 115.000 արաբներ, 55.000 թուրքեր, 43.000 հայեր, 20.000 թուրքմեններ, 6000 քրդեր, չերքեզներ: Այս մասին մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիր» N 12, 1964, էջ 28—30:

² Տե՛ս «Дипломатический словарь», М., т. 3, 1964, стр. 379. Aita A., le Conflit d'Alexandrette et la Société des Nations, Damas, 1949, p. 109.

Այն այդ մութ գործարքը իրականացվեց աստիճանաբար: Լրիվ կցմանը նախորդեց 1938 թ. հուլիսին թուրքական զորքերի մուտքը սանջար, ապա՝ փոխանցման մի շրջան, այսպես կոչված «Հաթայի պետության» ժամանակաշրջանը (1938 սեպտեմբեր—1939 հուլիս): Ներկա հոգվածում ձգտելու ենք տալ այդ ժամանակաշրջանում սանջարում տիրող քաղաքական դրուսթյան լուսաբանումը՝ միջազգային լարված հարաբերությունների ֆոնի վրա:

* * *

Ամբողջ Սիրիայի հետ, Ալեքսանդրետի ու Անտիոքի շրջանն էլ 1516—1918 թթ. գտնվում էր օսմանյան լծի տակ: 1918 թ. նոյեմբերի 27-ին, Մուզրոսի գինադադարի համաձայնագրից անմիջապես հետո, ֆրանսիական օկուպացիոն իշխանությունները, սիրիական պետության ստեղծումից էլ առաջ, կազմեցին «Ալեքսանդրետի Ավտոնոմ սանջարը»³: Դա միասնական սիրիական պետության ստեղծման ճանապարհին առաջին խոչընդոտը պետք է հանդիսանար: Մյուս կողմից՝ Անկարան, խախտելով 1919 թ. սեպտեմբերի 1-ին բուվեի միլիտի (ազգային ուժեր) Սվազի կոնգրեսում ընդունված բանաձևի 3-րդ կետը, ըստ որի Ալեքսանդրետ-Մոսուլ գծից հարավ ընկած տերիտորիաները ճանաչվում էին ոչ-թուրքական⁴, 1923 թ. սկսած շարունակ քաղաքական ու տերիտորիալ պահանջներ է ներկայացրել սանջարի նկատմամբ, ելնելով 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրից: Այդ պայմանագրի 7-րդ հոդվածով⁵ և կից փաստաթղթերով բացառիկ իրավունքներ ու արտոնություններ էին նախատեսվում սանջարի «թուրք ցեղին պատկանող բնակիչներին և թուրքիային:

1936 թ. սեպտեմբերին ֆրանս-սիրիական դաշնագրի ստորագրումը, որը մանդատի վերացման և մոտայուտ անկախության հույս էր տալիս Սիրիային, Անկարային առիթ տվեց սանջարի հարցը դնելու միջազգային դիվանագիտության սեղանի վրա: Ֆրանսիայի և թուրքիայի միջև երկարատև դիվանագիտական պայքարից հետո,

Ազգերի լիգայի խորհուրդը 1937 թ. մայիսի 29-ին սանջարի հարցի համար ընդունեց «կոմպրոմիսային լուծում»՝ սանջարին տալով «նոր ստատուս» և «Հիմնական օրենք»⁶: Այդ ակտերը, որոնք ուժի մեջ մտան 1937 թ. նոյեմբերի 29-ին, սանջարը դարձնում էին «քաղաքական ինքնուրույն միավոր» (Entité politique distincte) սիրիական պետության սահմաններում: Բայց նա լիակատար անկախություն էր պահանջելու իր ներքին գործերում (առանձին օրենսդիր, գործադիր ու այլ իշխանություններ): Այս ձևով Անկարային ու շրջանի թուրքական էլեմենտներին տրվում էին սանջարում գերիշխող դիրք գրավելու բոլոր հեռանկարները⁷: 1938 թ. մայիսի 3-ին շրջանում սկսվեցին հանրաքվե-ընտրություններ՝ Ազգերի լիգայի միջազգային ընտրական հանձնաժողովի հսկողության տակ: Ընտրական արձանագրությունների արդյունքները մի անգամ էլ ցույց տվեցին, որ թուրքական էլեմենտները փոքրամասնություն են կազմում սանջարում: Շրջանի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը՝ 80%-ը (արաբները, հայերը, թուրքերի զգալի մասը և մյուս փոքրամասնությունները)⁸ հայտնեց իր աներեք կամքը պահանջելու միասնությունը սիրիական հայրենիքի հետ և մերժել թուրքիայի ամեն տեսակի ազդեցությունը⁹: Սակայն, թուրքիան, օգտվելով Ֆրանսիայի ծանր միջազգային դրությունից և անգլիական աջակցությունից, ձևով բերեց նոր դիջումներ¹⁰: Իրենց գաղտնի գործարքը իրագործելու համար, անգլո-ֆրանս-թուրքական դիվանագիտության ղեկավարներին անհրաժեշտ էր սանջարի ապագա «պառլամենտում» 40 տեղերից 22-ը ապահովել թուրքերին: Այդ ժամանակաշրջանում Եվրոպայում ստեղծված քաղաքական տագնապալի իրադրության և Անկարայի դիվանագիտական հարատև ճնշման հարկադրանքի տակ՝ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը Ժորժ Բոնեն արդեն 1938 թ. մայիսի 10-ին համաձայնվել էր «բոլոր միջոցներով» թուրքական այդպիսի «մեծամասնություն» ապահովել: Համապատասխան հրահանգներ են տրվում սանջար-

⁶ League of Nations, Official Journal, May-June, 1937, p. 380—389.

⁷ Дипломатический словарь, т. III, стр. 378.

⁸ *St'a* du V é o u P., Le Désastre d'Alexandrette, Paris, 1938, pp. 87—88, 101; Aita A. op. cit. p. 53.

⁹ «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 22—5—1938 թ.: du V é o u P., Désastre..., op. cit. pp. 49—59.

¹⁰ Дипломатический словарь, т. III, стр. 378. Kilic A., Turkey and the World, Washington, 1959, p. 65.

³ *St'a* „Recueil des Actes Administratifs du Haut-Commissariat de la République Française en Syrie“, Vol. I, B, 1919, p. 7.

⁴ Սվազի կոնգրեսի բանաձևի տեքստը տե՛ս du V é o u P a u l, La Passion de la Cilicie, Paris, 1954, p. 350.

⁵ Ключников Ю. В. и Сабанин А. В. «Международная политика... в договорах, погах, декларациях», М., 1929, ч. III, вып. II, стр. 115—116.

քում Ֆրանսիայի ներկայացուցչին¹¹։ Մայիսի 31-ին, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ռ. Արասը Թուրքական Մեջլիսում հայտարարում է, որ «երկու երկրների (Թուրքիայի և Ֆրանսիայի — Ա. Բ.) միջև լավ հարաբերությունների շարունակումը կախված է... սանջաքում դեպքերի զարգացումից»¹²։ Թուրքիան նույնիսկ դիմում է ռազմական ինտերվենցիայի սպառնալիքի։ 1938 թ. ամռանը, Ֆրանսիան՝ մտահոգված լինելով կենտրոնական Եվրոպայում տիրող լարված դրությունով, շատ քիչ էր տրամադրված հարաբերությունները վատացնելու Անկարայի հետ։ Հետևաբար, Փարիզը նորից նահանջեց Թուրքական քաղաքական ու դիվանագիտական ճրնջման առջև, անկասկած Լոնդոնի թելադրանքով¹³, և նույն օրը, մայիսի 31-ին ընտրական արձանագրությունները կասեցվեցին սանջաքում, որովհետև ակնհայտ էր դարձել, որ Թուրքերը կազմում են փոքրամասնություն և ապագա «պառլամենտում» նրանք չեն կարողանա ստանալ տեղերի մեծ մասը։ Հունիսի 3-ին, ընդունելով Փարիզում Թուրքական դեսպան Ս. Գալազին, Ժ. Բոնեն հայտնում է իր պատրաստակամությունը անմիջապես զոհացում տալու Թուրքիայի պահանջներին։ Ռ. Գառույի տեղ որպես Ֆրանսիայի ներկայացուցիչ սանջաք է ուղարկվում իմպերիալիզմի մոլի կամակատար, «Քոուազըֆյո» ֆաշիստական կազմակերպության անդամ՝ մայր Կոլեն¹⁴։ Սանջաքում ծայր է առնում ոչ-Թուրքերի նկատմամբ բացահայտ խտրականության և քաղաքական ու ոստիկանական տեղորի սարսափելի ակտիվությունը։ Շրջանի Թուրք էքստրեմիստները զանազան սանձարձակ և մանդատային իշխանությունների ռեպրեսիաներին զուգընթաց՝ դիմում են ամեն տեսակ ապօրինությունների ու ռժիրների՝ սանջաքի ոչ-Թուրք ազգաբնակչությանն ահաբեկելու համար։ Գեռևս 1937 թ. դեկտեմբերին Անկարայում սկսված ֆրանս-թուրքական զինվորական գաղտնի բանակցությունները 1938 թ. հունիսի 13-ին փոխադրվում են Անտիոք¹⁵։ Դրանց զուգահեռ, հունիսի 20-ին Փարիզում դիվանագիտական բանակցություններ էին սկսվել

Ժ. Բոնեն և Ս. Գալազի միջև։ Այդ բանակցությունները հունիսի 4-ին պակասեցին ֆրանս-թուրքական պայմանագրերի կնքումով¹⁶, որոնց համաձայն հունիսի 5-ին սանջաք են մտցվում Թուրքական զորքեր՝ «ֆրանսիացիների հետ համատեղ՝ սանջաքում կարգն ու կանոնը պահպանելու համար»։ Այդ ակտը փաստորեն հանդիսանում էր սանջաքի Թուրքական զրավման առաջին փուլը, որը «կանխօրոք վճռեց ընտրությունների ելքը»¹⁷։ Պետք է նշել, որ դեռևս հունիսի 22-ին, ժնհում Թուրքիայի մշտական ներկայացուցիչը Ազգերի լիգայի ընդհանուր քարտուղարից արդեն պահանջել էր սանջաքից հետ կանչել ընտրական հանձնաժողովին։ Նման պահանջ էր ներկայացրել նաև Ֆրանսիան։ Հունիսի 29-ին հանձնաժողովը հարկադրված հեռուցավ Ալեքսանդրիայից¹⁸։

Ազգերի լիգայի խորհուրդը ոչ մի միջոցառման չդիմեց, նույնիսկ չըստապարտեց, այլ պասիվ կերպով ընդունեց իր իսկ կողմից ընդունված սանջաքի նոր ստատուսի ստանահարման և, դրանով իսկ, ժողովուրդների ազատ ինքնորոշման և միջազգային իրավունքի կոպիտ խախտման այս խայտառակ փաստը։ Սա դալիս է մի անգամ ևս ապացուցելու, որ Լիգան ծառայում էր միայն անգլոֆրանսիական իմպերիալիստների շահերին և խաղալիք էր նրանց ձեռքում։

Չերբազատված լինելով Ազգերի լիգայի ընտրական հանձնաժողովի վերահսկողությունից, Թուրքիան ու մանդատային իշխանությունները կամայականորեն տնօրինում էին սանջաքի բախտը¹⁹։ Անկարան սանջաքում իր լիազոր-ներկայացուցիչն էր նշանակել Զ. Աչքբալինին, Կոլենին համահավասար իրավունքներով։ Սակայն, փաստորեն Թուրքերն էին միահեծան տիրություն անում սանջաքում²⁰։ Նախորդ ընտրության արդյունքները շեղյալ հայտարարվեց և նշանակվեց նոր հանձնաժողով՝ բաղկացած 3 Թուրքերից

¹¹ Aita A., op. cit. pp. 53—54; Graves, Ph., „The 19th Century“, August 1938, London, p. 166.
¹² Toynbee A., Survey of International Affairs — 1938, London, 1941, p. 484.
¹³ Graves Ph., op. cit. pp. 165—166.
¹⁴ Տե՛ս „L'Humanité“, 26—6—1938.
¹⁵ Esmer, Prof. Ahmet Sükrü, Siyasi Tarih, Ankara, 1955, s. 237.

¹⁶ Այդ պայմանագրերն էին — «ֆրանս-թուրքական բարեկամության դաշնագիրը» և «ֆրանս-թուրքական զինվորական կոնվենցիան»։ Տե՛ս Дипломатический словарь, т. III, стр. 377—378. „Le Temps“, Paris, 13—7—1938.
¹⁷ «Дипломатический словарь», т. III, стр. 378.
¹⁸ Տե՛ս Ազգերի լիգայի ընդհանուր քարտուղարի հաղորդումները՝ ուղղված Լիգայի անդամներին „Journal des Nations“, Genève, 2—7—1938.
¹⁹ Du Vèou P., Les Chrétiens en Péril au Moussa-Dagh, Paris, 1939, p. 45—56, 72—73.
²⁰ Puaux, Gabriel (Haut-Commissaire), Deux Années au Levant-Souvenirs de Syrie et du Liban, 1939—1940, Paris, 1952, pp. 9, 51.

և 1 ֆրանսիացուց: 1938 թ. հուլիսի 22-ին սկսվեցին նոր «ընտրութիւններ», որոնք ավարտվեցին հուլիսի 31-ին: Արարներն ու հայերը բոլորի ենթարկեցին զրանք²¹: Օգոստոսի 30-ին հրապարակվեցին ընտրական արդյունքները... Կարծես հրաշքով, սանջաքի ազգաբնակչության միայն 23%-ը ներկայացնող «Թուրք համայնքի» ցուցակում արձանագրվել էին ընտրողների 63%-ը... Բացահայտորեն խարդախված «ընտրական արձանագրութիւնները» պետք է որպես «օրինական հիմք» ծառայեին սանջաքի «պառլամենտում» թուրքական մեծամասնութիւն ստեղծելու համար, նրանց տալով պահանջված 22 միտները. մնացած 18 տեղերում նշանակվեցին «Հալք-էվի»-ի²² հետ գործակցող ավանտյուրիստ արաբներն ու հայեր²³: Այս կապակցութեամբ սիրիացի հեղինակ Ա. Ալթան գրում է. «Առաջին և երկրորդ կարգի ընտրութիւնները տեղի ունեցան բղրի վրա: Քանի որ ոչ ոք չէր ներկայացել Հալք-էվիի պաշտոնական ներկայացուցիչների դեմ, նրանց հայտարարեցին ընտրված»²⁴:

Սեպտեմբերի 2-ին հրավիրվեց «սանջաքի պառլամենտը», որը իր առաջին նիստում Ալեքսանդրեաթի ավտոնոմ սանջաքը վերանվանեց և հռչակեց «Հաթայի պետութիւն»²⁵, որի ղեկավար նշանակվեց Թ. Սյոքմենը, իսկ «պառլամենտի» նախագահ՝ Ա. Թյուրքմենը: Մեծամասնութեամբ թուրք բնակչութիւն ունեցող Անտիոքը դարձավ Հաթայի մայրաքաղաքը, թուրքական դրոշը ընդունվեց որպես Հաթայի դրոշ, այն տարբերութեամբ միայն, որ սպիտակ աստղի կենտրոնում ավելացվում էր կարմիր շրջանակ: Սանջաքի «թրքականութիւնը» ավելի ևս շեշտելու համար, պառլամենտում բոլոր էլույթները տեղի էին ունենում միայն թուրքերեն լեզվով:

²¹ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 31—7—1938 թ.:

²² «Ժողովուրդի տուն» պաշտոնապես հանաչված այս անվան տակ է, որ սանջաքի թուրք էրտրեմիստների ու սեպարատիստների խմբավորումը մասնակցեց հանրաքվե ընտրութիւններին:

²³ Նրանք երբեք չէին արտահայտում հայ և արաբ ազգաբնակչության շահերն ու տրամադրութիւնները:

²⁴ Aita A., op. cit. p. 58.

²⁵ «Հարայ» անվանումը «Ալեքսանդրեաթի սանջաքի» փոխարեն թուրքական պաշտոնական հրատարակութիւններում օգտագործվում էր արդեն 1936 թ. սկսած: Այդ նոր անունը հիմնվում էր կեղծ-գիտական այն վարկածի վրա, թե իբրև Ալեքսանդրեաթի սանջաքի թուրքերն ու արաբները (ալավիները) հետնորդներ են (!) հիթիթների և հանպետանում են «հաթի թուրքեր»—Hati-Eti Türkler»:

չնայած, որ նոր ստատուսի համաձայն թուրքերենն ու արաբերենը հավասարապես պետք է օգտագործվեին որպես պաշտոնական լեզուներ: Կազմվեց նաև «Հաթայի կառավարութիւն» անտիոքցի թուրք Աբդուրրամհան Մելեքի գլխավորութեամբ: Վերջինս, նույն տարվա հունիսի 3-ին, Կուլեի կողմից նշանակված էր սանջաքի «ներքին գործերի դիրեկտոր», արաբ Հուանի Բարազիի փոխարեն: Կառավարութիւնը կազմված էր բացառապես թուրքերից. ոչ մեկ արաբ կամ հայ չկար նրա կազմում: Պառլամենտի նիստերում բոլոր էլույթ ունեցողները Աթաթուրքի հասցեին երախտագիտութեան և փառաբանանքի ճառեր տեսցին «սանջաքի (Հաթայի) անկախութեան հասնելուն օժանդակելու կապակցութեամբ»²⁶: «Հաթայի» կառավարութիւնը սկզբից ևեթ որդեգրեց հետադիմական ու բռնատիրական քաղաքական կուրս: Նա հատկապես տարված էր հակակոմունիստական մոլուցքով և վարում էր արաբներին ու հայերին ճնշելու քաղաքականութիւն:

* *
*

Առանձին ուշադրութեան է արժանի «Հաթայի պետութեան» միջազգային իրավական ստատուսի ուսումնասիրութիւնը:

«Հաթայի պետութեան» հռչակումն ու ստեղծումը հիմնված էր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ոտնահարման և միջազգային իրավունքի ու պայմանագրերի կոպիտ խախտման վրա: Իրավական տեսակետից ապօրինի էր 1937 թ. նոյեմբերի 29-ից կիրառել սանջաքի նոր ստատուսը հենց այն պատճառով, որ այդ մասին Ազգերի լիգայի խորհրդի ընդունած բանաձևում (1937 թ. մայիսի 29-ին) բառացի ասված էր «Առաջարկվում է նոր ստատուսը կիրառել 1937 թ. նոյեմբերի 29-ին, սակայն այն պայմանով միայն, որ այդ թվականին ուժի մեջ մտած լինեն խորհրդի 1937 թ. հունվարի 27-ի բանաձևի 7-րդ պարագրաֆում նախատեսված դաշնագրերը (Ֆրանս-սիրիական և Ֆրանս-լիբանանյան—Ա. Բ.)»²⁷: Ինչպես հայտնի է, Ֆրանս-սիրիական դաշնագիրը ո՛չ 1937 թ., ո՛չ էլ հետագայում երբեք չհաստատվեց Ֆրանսիայի կողմից և ուժի մեջ չմտավ:

²⁶ «Ժողովուրդի ձայն», 14—8—1938 թ.:

²⁷ „League of Nations, Official Journal“, May-June 1937, p. 239.

Այնուհետև, 1938 թ. մայիսին, Ազգերի լիգայի միջազգային ընտրական հանձնաժողովի վերահսկողության ներքո կատարված հանրաքվեի արդյունքները շեղյալ հայտարարվեցին, որովհետև զրանք մի անգամ էլ ապացուցել էին, որ սանջաքում թուրքական երևակայական «մեծամասնություն»-ը գոյություն չունի: Միջազգային իրավունքի և Ազգերի լիգայի հեղինակության այս նոր խախտումից հետո, թուրքական զորքեր մասցվեցին սանջաք, որը իրավական նոր խախտում էր, և Ազգերի լիգայի ու սիրիական կառավարության զլսի վրայով, թուրք-ֆրանսիական սվինների պաշտպանության տակ կատարվեց խայտառակ բեմադրություն՝ «ընտրություններ թղթի վրա»: Հենց այդ «ընտրությունների» միջոցով անգլո-ֆրանս-թուրքական դիվանագիտությանը հաջողվեց սանջաքի «պառլամենտում» տեղերի մեծամասնությունը տալ թուրքերին և այդ «պառլամենտում» է, որ հռչակեց «Հաթայի պետությունը» 1938 թ. սեպտեմբերի 2-ին: Ազգերի լիգայի խորհուրդը այս անգամ էլ շանդաղարձավ ժողովուրդների ազատ ինքնորոշման և միջազգային իրավունքի խախտման այն նոր, ազդակազմ փաստին: Միայն Ազգերի լիգայի մանդատների մշտական հանձնաժողովը 1938 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, իր 35-րդ սեսիայում քննարկեց սանջաքում ստեղծված «նոր ռեժիմի» հարցը և ընդունեց խուսափողական ու երկդիմի որոշում՝ Ֆրանսիայի ներկայացուցչի կատարած պաշտոնական հայտարարության հիման վրա: Հանձնաժողովը «հարկ համարեց այդ տերիտորիայում 1937 թ. նոյեմբերի 29-ից հետո ստեղծված կառավարման սիստեմի քննարկումը հետաձգել ավելի ուշ ժամանակի»²⁸: Իսկ այդ քննարկումը երբեք տեղի չունեցավ և սանջաքի պրոբլեմը միջազգային իրավական տեսակետից մնաց չլուծված և առկախ:

Վերջապես, անհրաժեշտ է ընդգծել, որ սանջաքի նոր ստատուսը հենց իր էությունը ու բովանդակությամբ անկասկած պետք է առաջացնեի միջազգային իրավական և քաղաքական անորոշություն ու անկայունություն տվյալ տերիտորիայում: Արդարև, որպես «ինքնուրույն քաղաքական միավոր», անվանապես ենթակա մնալով Միբիային (ստատուս, հոդ. 1), սանջաքը՝ «տերիտորիալ ամբողջականության երաշխավորման», կամ «նոր ստատուսի կենսագործման վերահսկողության» բնագավառներում փաստորեն, առաջին հեր-

թին ենթարկվում էր Թուրքիային, հետո՝ Ֆրանսիային կամ Ազգերի լիգային (ստատուս, հոդ. 3, 5, 6, 7): Այդ տերիտորիայի վրա Միբիայի սուվերենությունը գրեթե զրոյի էր հավասարեցվում, քանի որ սանջաքի «պրեզիդենտը և կառավարությունը» օգտվում էին բոլորովին ինքնուրույն և անկախ պետության իրավունքներից (հոդ. 14, 15, 16, 18): Դ. Ջենսոնին քննարկելով «Հաթայի պետության» իրավական դոչավիճակը, գրում է. «Նոր պետությունը պետք է կառավարվեր երրորդների կամքով, իսկ դա ամենաանկայուն կետն է տվյալ կարգավորման մեջ: Կարիք էլ չկա խոսելու նոր պետության սեփական ուժի մասին, որովհետև այն շափազանց աբստրակտ տվյալ է... Հաթայի գործերը պետք է տնօրինեն թե՛ Միբիան, թե՛ Ֆրանսիան, թե՛ Ազգերի լիգան, թե՛ Թուրքիան. սակայն բոլորից ավելի Թուրքիան է, որ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես գերիշխում է այնտեղ»²⁹: Ջուզեպպե Սփերդուտին, իր «Ալեքսանդրեաի պրոբլեմի իրավական ասպեկտները» աշխատության մեջ նշում է. «Հաթայի պետության ստեղծումը միջազգային իրավական ուղեհիմքից զուրկ է. առաջին հերթին հենց այն պատճառով, որ սանջաքի վերածումը անկախ պետության՝ մանդատային պետության իրավասությունների սահմաններից դուրս է և բացահայտորեն խախտում է «Ա» տիպի մանդատների հիմնական սկզբունքներն ու Մանդատի խարտիայի 4-րդ հոդվածի դրույթները»³⁰:

Ինչպես հայտնի է, այդ հոդվածը Ֆրանսիային պարտավորեցնում էր ապահովել Միբիայի տերիտորիալ ամբողջականությունը: Իսկ «Հաթայի պետության» ստեղծումը Միբիային փաստորեն զրկում էր Ալեքսանդրեաի սանջաքի վրա ունեցած իրավական գերիշխանությունից: Շեշտելով այս կարևոր հանգամանքը, Ադնան Ալիբան գրում է. «Քաղաքական մի շարք կոմպրոմիսների շնորհիվ, Թուրքիային հաջողվեց իրագործել առաջին փուլը մի ծրագրի, որը կանխորոշ մշակվել էր սանջաքը զավթելու համար: Այժմ Թուրքիան արդեն պառլամենտում ունի մեծամասնություն, վերահսկում է գործադիր իշխանությունը և, — կարևոր ֆակտոր, — նրա զորքերը գրավում են սանջաքի տերիտորիան»³¹:

²⁹ Censoni D., La Politica Francese nei Vicino Oriente, Bologna, 1948, c. 127.

³⁰ Sperduti G., Aspetti Giuridici della Questione di Alessandretta, Milano, 1939, p. 210—211.

³¹ Aita A., op. cit., p. 59.

²⁸ „Minutes of the Permanent Mandates Commission“ 35th Session, 1938, in „League of Nations Official Journal“, February 1939, p. 161.

«Հաթայի պետություն» միջազգային իրավական ստատուսը վերլուծելով, Ա. Ջ. Թոյնբեյն գրում է.

«Անվանապես մեկ պետության սահմանների մեջ, սակայն իրականում մեկ այլ պետության վերահսկողության տակ գտնվող Հաթայի դրությունը էապես տարբեր չէր Բոսնիա-Հերցեգովինայի 1878—1908 թթ. ստատուսից: Ավտոնոմ հանրապետությունը՝ Հաթայը գեղեւս մնում էր ֆրանսիական մանդատի ներքո և սիրիական վարչության ու տարիֆային սիստեմի մեջ: Սակայն նրա պառլամենտը 1939 թ. հունվարին ընդունեց Թուրքական քաղաքացիական ու քրեական օրենսդրություն: Ասվում է, որ Թուրք պաշտոնատարներ պետք է ուղարկվեն Հաթայ՝ հարկային սիստեմը վերականգնակերպելու համար: ...Թուրքիայի և Հաթայի միջև սահմանի գործնական ջնջումը հյուսիսային Սիրիայի քարտեզի վրայից ավելի ևս շեշտվեց 1939 թ. մարտ ամսին Թուրքական Մեջլիսի ընտրությունների կապակցությամբ: Արդարև, Թալֆուր Սյոքմենը նորից ընտրվեց Ադալիայի իր ընտրական օկրուգում և դոկտոր Աբդուրրահման Մելեքը ընտրվեց Այնթապում»³²:

1939 թ. սկզբներին Թուրքիայի կողմից սանջաքի կլանումը արդեն կատարված փաստ էր: Այս կապակցությամբ ֆրանսիացի սենատոր Հենրի-Հելլը ասում է. «Ալեքսանդրեաի սանջաքը արդեն լրիվ ընկել է Թուրքերի գերիշխանության տակ՝ եթե աչքի առաջ ունենանք փաստական իրողությունը»³³:

Քննարկելով «Հաթայի պետություն» ստեղծման ակտը Ֆրանսիայի կապիտուլյացիոն արտաքին քաղաքականության ու դիվանագիտության քննադատման դիրքերից՝ Պոլ Դյու-Վեոն գրում է. «Երբեք չի երևում, որ Ալեքսանդրեաի կոնվենցիան, Թուրքերի կողմից սանջաքի գրավումը ֆրանս-թուրքական «բարեկամության» դաշինքը վերջ կդնեն այդ նվաստացուցիչ սակարկություններին, որոնց ընթացքում մենք միշտ տալիս ենք, առանց երբեք ստանալու... Մենք անընդհատ Թուրքիայի միջոցով ենք խաղաղության ձգտում»³⁴: Այնուհետև, Թալֆուր Սյոքմենին «Հաթայի պետության» ղեկավար նշանակելու մասին խոսելով, նույն հեղինակը եզրակացնում է. «Նրա նշանակումը օտար պետության ղեկավարի կողմից իրավական ոչ մի ուժ չունի»³⁵:

³² Toynbee A., Survey, op. cit. p. 489.

³³ „Relations de la France et de la Syrie“ — Centre d'Etudes de Politique Etrangère, Paris, mars 1939, p. 9—10.

³⁴ Du Véou P., Désastre op. cit. p. 102.

³⁵ Du Véou P., Chrétiens op. cit. p. 36.

1938 թ. հուլիսի պայմանագրով նախատեսված՝ սանջաքի ֆրանս-թուրքական «condominium»-ը³⁶ նույնպես չիրագործվեց: Այդ առնչությամբ ֆրանսիացի հեղինակ էլի Բաուբարոն գրում է. «Կոլեի քաղաքականությունը թույլ տվեց Թուրքական գործակալներին գործել իրենց ցանկացած ձևով: Դաշնագիրը (1938 թ.—Ա. Ք.) նախատեսում էր ֆրանս-թուրքական կոնդոմինիում սանջաքում: Սակայն քննախոսները ասամբլեայում ձեռք բերած լինելով մեծամասնություն, ամենաարագ կերպով առաջ տարան սանջաքի կլանումը Թուրքիայի կողմից»³⁷: Դյու-Վեոն իր կողմից հաստատում է. «Մենք սանջաքում չենք հաստատել ինչ-որ ձևի կոնդոմինիում, ինչպես մեզ կարծել են տալիս... Մենք սանջաքը լքում ենք Թուրքական միահեծան իշխանությունը»³⁸:

Ֆրանսիայի նոր Բարձր-կոմիսար Գաբրիել Պյուտն նույնպես խոստովանում է, որ 1939 թ. սկզբներին «Սանջաքը Թուրքիային գիշերը արդեն գործնականորեն ընդունված փաստ էր» և ինքը կոչված էր այդ գործի հաշվեհարդարը կատարելու³⁹:

Անկարայի հրամանով «Հաթայում» մտցվեց Թուրքական օրենսդրություն: Ա. Թոյնբեյն նշում է, որ «Հաթայի արգարադատության օրգանների թրջացումը սկսվեց 1939 թ. հունվարից, երբ ընդունվեցին Թուրքական քրեական և քաղաքացիական օրենսդրությունները»⁴⁰: Իսկ Դյու-Վեոն պնդում է, որ այդ պրոցեսը սկսվել էր ավելի վաղ՝ 1938 թ. նոյեմբերի 22-ին, երբ Պ. Ալքբալընի հրամանով սանջաքից հեռացվեցին ֆրանսիացի այն շորս իրավագետները, որոնք ուղարկվել էին Փարիզից սանջաքի արգարադատության օրգանները ըստ նոր ստատուսի կազմակերպելու համար: «Հաթայի արգարադատության մինիստրը հայտարարեց, որ իր կառավարությունը հետևում է Թուրքական բոլոր օրենքները աստիճանաբար Հաթայում ընդունելու սկզբունքին»⁴¹: Եվ այսպես, առանց որևէ փոփոխության սանջաքում ընդունվեցին և կիրառվեցին Թուրքական բոլոր «օրենսդրությունները»: Կղերականները հարկազրկվեցին հազնվել աշխարհականի տարադ. տղամարդկանց արգելվեց արա-

³⁶ երկու երկրների համառոտ գերիշխանություն՝ նույն տերիտորիայի վրա:

³⁷ Elie Barbaro J., La Question du Sandjak d'Alexandrette, Alep, 1941, p. 54.

³⁸ Du Véou P., Chrétiens op. cit. p. 162.

³⁹ Puaux G., op. cit. p. 49.

⁴⁰ Toynbee A., Survey, op. cit. p. 489.

⁴¹ Du Véou P., Chrétiens, op. cit. p. 133.

բական «Քարբուշ» (գլխարկ) կրել, արգելվեց ֆրանսերեն լեզվի դասավանդումն ու օգտագործումը: Հաթայի դատարաններին արգելվեց ի կատար ածել սիրիական դատարանների տված դատական վճիռները: 1939 թ. հունվար ամսից սկսած օգտագործվում էին միայն թուրքական նամականիշներ՝ Աթաթուրքի նկարով: Սիրիայի մյուս շրջանները ուղարկվող նամականիշներ ենթարկվում էին արտասահման ուղարկվող նամականիշների ֆիլիքին⁴², իսկ թուրքիա ուղարկվողները՝ ներքին տարիֆին: Փետրվարին թուրքական լիրան ընդունվեց որպես միակ պաշտոնական դրամանիշը սանջաքում⁴³, շրջանառության մեջ գտնվող սիրիական թղթադրամը բռնագրավվեց, իսկ կապիտալի արտահանումն արգելվեց⁴⁴: Մարտի 1-ից Հաթայի և թուրքիայի միջև վերացվեց պասսորտը, իսկ սիրիացիների մուտքը սանջաք՝ ենթակա էր անասելի ղժվարությունների: 1939 թ. հունվարից վերացվեց նաև մաքսային սահմանը թուրքիայի և Հաթայի միջև, իսկ սանջաքի և Սիրիայի միջև ընդհանրակերպ հաստատված էր մաքսային, անցազրային և զինվորական սահմանակետերի եռակի շղթա⁴⁵:

«Հաթայի հանրապետությունը, նշում էր Բարձր-կոմիսար Պյուտն, զործնականում կառավարվում էր թուրքական պաշտոնյաների կողմից: Ֆրանսիան Անտիոքում պահում էր միայն մեկ ներկայացուցիչ, հանձնիս Բարձր-կոմիսարի պատվիրակ մայոր Կոլեի»⁴⁶:

Ֆրանսիական զորամասերում ծառայող արաբներին, հայերին հարկադրել էին մինչև 1938 թ. հոկտեմբերի 15-ը հեռանալ սանջաքից⁴⁷, որի հետևանքով 1938 թ. հուլիսի ֆրանս-թուրքական համաձայնագրերով նախատեսված ֆրանսիական 2500 զորքից սանջաքում մնացել էր միայն 330 զինծառայող: Մինչդեռ թուրքերը, որոնք այդ պայմանագրով նույնպես պետք է ունենային 2500 զինվոր, 1939 թ. սկզբներին սանջաքում փաստորեն ունեին շուրջ 12.000 զինծառայող: Ինչպես հայտնում է Պոլ Դյու Վեռն, «Սանջաքում կա 2.500, գուցե 3000 թուրքական կանոնավոր զորք: «Սանջաքյան միլիցիա» կոչվածները (1500 մարդ—Ա. Բ.) բացառա-

պես թուրքեր են, որոնք հավաքագրվել և ղեկավարվում են թուրքերի կողմից: Վերջերս 3000 զինծառայողներ ժամանեցին թուրքիայից, բաղաբացիական հագուստ հագած. նրանք զորամասերում չեն տեղավորված, այլ մասնավոր տներում, որտեղ պահվում են նրանց զենքերն ու համազգեստները»⁴⁸:

Այսպիսով, վեց ամսից էլ պակաս ժամանակաշրջանում իրականացվեց սանջաքի լրիվ թրքացումը և զինվորական գրավումը: Մեռած էր միայն «փաստական գրությունը վերածել իրավական գոյավիճակի»: Այս կառավարությանը Գաբրիել Պյուտն գրում է. «Անկարպում գտնում էին արդեն, որ Հաթայի «կոմեդիան» չափազանց երկար է տևում: Ֆրանսիական զորքերի ներկայությունը թուրքերին խանգարում էր... 1939 թ. հունվարին Պր. Սարաջօղլուն գտավ, որ ժամանակը հասել է սանջաքի կցման հարցը զնելու: Նա այդ մասին արտահայտվեց բավականին ցինիկ անկեղծությամբ մեր ղեկավարն պարոն Մասիգլիին»⁴⁹: Սարաջօղլուն հասկացնել է տալիս, որ թուրքիան դեռևս մտադիր չէ Ֆրանսիայի վրա ճնշում գործադրել «տոտալիտար երկրների լազերը անցնելով», այլ ցանկանում է սանջաքի կցումը կատարել «բարեկամական եղանակով»: Կցումը անխուսափելի էր, որովհետև, զործնականում Հաթայը արդեն կորսված էր... Նախընտրելի էր անմիջապես վճարել թուրքիայի դաշնակցության գինը»⁵⁰:

Գժբախտաբար «թուրքիայի դաշնակցության գինը» ֆրանսիացիները վճարում էին ոչ թե Ֆրանսիայի, այլ ժամանակավորապես իրենց հովանավորությանը հանձնված փոքր երկրի ու ժողովրդի՝ Սիրիայի հաշվին: Ֆրանսիացի ռեակցիոն հեղինակ Ժ. Պ. Ժեռարը այդ առթիվ գրում է. «Սանջաքի հարցի կապակցությամբ ֆրանսիական հասարակական կարծիքի որոշ շրջանների արդար գայրույթը հասկանալի կլինեք, եթե... խոսքը վերաբերեր իսկապես մեր կայսրության մի մասը գիշերուն»⁵¹:

Չորս ամիս տեղի բանակցություններից հետո, 1939 թ. հունիսի 23-ին Փարիզում ստորագրվեց ֆրանս-թուրքական «Փոխադարձ օգնության համատեղ ղեկավարացիան»: Նույն օրը Անկարա-

⁴² Տե՛ս. E. Barbaro, op. cit. p. 88.

⁴³ Տե՛ս. Véou P., Chrétiens op. cit. p. 129.

⁴⁴ Idem, p. 127.

⁴⁵ Տե՛ս. Véou, Chrétiens, op. cit., p. 71—73; Alta A., op. cit. p. 61.

⁴⁶ Puaux G., op. cit., p. 51.

⁴⁷ «Փողովորդի ձայն», 9—10—1938 թ.:

⁴⁸ Véou, Chrétiens, op. cit., p. 145—146.

⁴⁹ Puaux G., op. cit. p. 51.

⁵⁰ Idem, p. 5.

⁵¹ „Revue Politique et Parlementaire“. № 535, Paris, 10 juin, 1939, p. 433.

շում ստորագրվեց «Թուրքիայի և Սիրիայի միջև տերիտորիալ հարցերի վերջնական կարգավորման մասին համաձայնագիրը», կից արձանագրություններ և 2 նամակներով⁵²: Սույն ակտերով Ֆրանսիան Ալեքսանդրեոսի սանջաքը հանձնում էր Թուրքիային: «Սիրիական Ալեքսանդրեոսի վճարումով հատուցվեց Թուրքիայի մասնակցությունը անգլո-ֆրանսիական ռազմական բլոկին»⁵³:

Ահա թե ինչ են գրում այդ կապակցությամբ արաբ հեղինակներ Ամին Շաքերը և ուրիշները սանջաքի պրոբլեմին նվիրված իրենց աշխատությունում. «Թուրքիան ձեռք բերեց սանջաքի վրա իր գերիշխանության պաշտոնական ճանաչումը 1939 թ. հունիսի 23-ի շահարձակման դաշինքով, որպես նախապատրաստություն ամուր դաշնակցության, որը անհրաժեշտ էր զարձեղ առանցքի ուժերի առաջխաղացման հետևանքով: Երբ Ֆրանսիան ճանաչեց Ալեքսանդրեոսի սանջաքի կցումը Թուրքիային, գրանով վերացվեց այն վերջին խոչընդոտը, որը բաժանում էր Թուրքիային Արևմուտքից և ճանապարհ հարթվեց նրանց միջև սերտ համագործակցության համար, ի հաշիվ սիրիական հայրենիքի մի մասի»⁵⁴:

* *
*

Արևմտյան գլխավոր երկրները շատ մոտիկից և մեծ շահագրգռվածությամբ հետևեցին սանջաքի պրոբլեմի «լուծման» ամբողջ պրոցեսին, իսկ Անգլիան փաստորեն վճռական դեր խաղաց հարցն ի նպաստ Թուրքիայի վճռելու գործում: Այս կապակցությամբ, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրի նախկին տեղակալ Պոլ Վիենսն 1939 թ. մարտին հայտարարել է. «...ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային ու նրա գիրքին, պետք է հայտարարեմ, որ այն բավականին մտահոգիչ է... վերջին շաբաթներս, անգլիական մամուլը, հատկապես «Քայմս» թերթը, առաջ է քաշում ծրագրեր, ըստ որոնց, Սիրիայի հաշվին թուրքական հավակնություններին գոհացում տրվելուց հետո, Սիրիայի մնացած մասը կարող է միացվել Անգրհորգանանին... և ընկնել Անգլիայի բարոյական խնամակալության տակ»⁵⁵: Նա պնդում էր, որ անգլիական «Ինքնիշխան Աեռվիսն» է, որ Սիրիայում Ֆրանսիայի դեմ է հանում «արաբական նացիոնալիզմը»: Սանջաքի հարցում Անգլիայի բացասական դերի մասին խոսում են նաև բոլոր արաբ հեղինակները: 2. Գարուազան այդ կապակցությամբ գրում է. «Մեծ Բրիտանիայի համար նույնպես շատ կարևոր էր գոհացնել Թուրքիային: Նա այդ ոճիրը որպես «աս» (տուղ) օգտագործեց Ֆրանսիայի և Թուրքիայի դեմ, որոնք միշտ առաջ էին քաշում Մոսուլի և հյուսիսային Իրաքի բրիտանական իմպերիալիզմի ազդեցության տակ մնալու հարցի վիճելի լինելը... Եվ այսպես, բրիտանական իմպերիալիզմը միշտ լուծում է Ֆրանսիայի ոճիրների առջև, այնպես, ինչպես ֆրանսիան էլ լուծում է Անգլիայի ոճիրների առջև»⁵⁶: Արաբ պրոգրեսիվ հեղինակ էմիլ Թուման՝ իր «Արաբները և պատմական էվոլյուցիան Միջին Արևելքում» աշխատության մեջ գրում է. «Այդ շրջանը (սանջաքը) կցվեց Թուրքիային որպես նախաբան՝ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին կնքված անգլո-ֆրանս-թուրքական փոխադարձ օգնության եռակողմ դաշինքի»⁵⁷:

Սանջաքի հարցի «կարգավորման» մեջ Անգլիայի կատարած որոշակի միջամտության մասին խոսում է նաև Ֆրանսիայի Բարձր-կոմիսար Գաբրիել Պյուն: «Սանջաքի զավթման հաջորդական ստադիաներում թուրք դիկտատորը վարպետորեն խաղաց

⁵⁵ „Relations France-Syrie“, op. cit. p. 29.

⁵⁶ Գարուազ 2., Տեղական կոմունիզմը և արաբների ազգային պայքարը, Բեյրութ, 1961, էջ 370:

الحكم الروزة» «الشبيعية المحلية و معركة العرب القومية»

بيروت 1961, ص 370

⁵⁷ Թուման է., Արաբները և պատմական էվոլյուցիան Միջին Արևելքում, շաքաֆա, 1962, էջ 204:

اميل توما» «العرب والتطور التاريخي في الشرق الاوسط»

حيفا، 1962, ص 304

⁵² Дипломатический словарь, т. III, стр. 377—378. Համաձայնագրերի տեքստերը տե՛ս „Journal Officiel de la République Française“, Paris, № 71, 1939, pp. 8962—8964.

⁵³ Дипломатический словарь, т. III, стр. 379.

⁵⁴ Ա. Շաքեր, Ս. Արիյեն, Մ. Մ. Աթա — Արաբական բաղադրանքները և Թուրքիան — Ալեքսանդրեոսի պրոբլեմը, Կահիրե, 1957, էջ 122:

امين شاکر و سعيد العريان و محمد مصطفى عطا — تركيا

والسياسة العربية، القاهرة، 1957، ص 122

Աղքերի լիզայի մեխանիզմի հետ, վստահ լինելով բրիտանական կառավարության աջակցության վրա: ...Անգլիան վախենում էր, որ շնորհիվ մանդատի շարունակման, Ալեքսանդրետը կդառնա ֆրանսիական ռազմա-ծովային բազա Կիպրոսի բրիտանական բազայի դեմ-հանդիման: Նա նախընտրում էր անկասկած այնտեղ տեսնել թուրքերին, որովհետև այդ ժամանակվանից Անգլիան վճռել էր նրանց իր դաշնակիցը դարձնել⁵⁸:

Մ. Հ. Լոնգրիգը «Ֆանտաստիկ ենթագրություն» է համարում Գ. Պյուտյի այդ պնդումները⁵⁹, սակայն մյուս կողմից խոստովանում է, որ «Դամասկոսում, սիրիացի մինիստրները շարունակ դիմում էին իրեն (որպես Անգլիայի գլխավոր հյուպատոսի—Ս. Բ.) խնդրելով «ինչ-որ բան անել» սանջաքի հարցի վերաբերյալ⁶⁰: Արդարև, Սիրիայի քաղաքական դործիչները քաջ գիտեին, որ սանջաքի տազնապի հարցում Անգլիան խաղում է շատ տխուր, բայց վճռական դեր: Առնուդ Ջ. Քոչներին նույնպես ընդունում է, որ իր երկիրը որոշակի դեր է խաղացել սանջաքի հարցի «կարգավորման» գործում: Այսպես, նա գրում է. «Դեռևս 1939 թ. գարնանը զրույցներ էին շրջում, թե նախապատրաստվում է նոր «Անշրուս»: Գերմանիայի էքսպանսիան դեպի հարավ-արևելք և Ալքսանիայի գրավումը իտալացիների կողմից ավելի ևս արժեքավորեցին թուրքական բարեկամությունը Արևմտյան զեմոկրատիաների համար: Եվրոպական մամուլի շրջաններում ընդհանրապես հասկանում էին, որ բրիտանական կառավարությունը քաջալերել է իր դաշնակից Ֆրանսիային՝ որպեսզի նա հասնի բարեկամական կարգավորման Հաթայում⁶¹: Հատկանշական է այն փաստը, որ Անգլիան արդեն 1939 թ. մայիսի 12-ին թուրքիայի հետ կնքել էր փոխօգնության դաշինք և նրան տրամադրել 16 միլիոն ֆունտ ստեռլինգի վարկ: Ինչպես հայտնի է, սանջաքի զոհաբերումից շուրջ ամիս անց կնքվեց ավելի լայն՝ եռակողմ փոխօգնության դաշինք Անգլիայի, Ֆրանսիայի և թուրքիայի միջև⁶²:

Ֆաշիստական Իտալիան նույնպես մեծ նշանակություն էր տալիս սանջաքի հարցին: Ինչպես հայտնի է, այդ երկիրը հոսմանական կայսրության վաղեմի հզորությունը Միջերկրականի ավազանում վերականգնելու երազներ էր փայտալուծում և հանդես էր դալիս արաբական ժողովուրդների «պաշտպանի» դերում՝ ընդդեմ անգլո-ֆրանսիական իմպերիալիստների: Մուսսոլինին Միջերկրականը անվանում էր «mare nostrum» (մեր ծովը): Այս կապակցությամբ Ռ. Գալուսը գրում է. «Մուսսոլինին, որը երազում է «Մեծ հռոմեական կայսրության մասին» ցանկանում է, որ ամբողջ Միջերկրականի առափնյա մասը, դրան հարող երկրները և ճանապարհները գտնվեն Իտալիայի տիրապետության տակ... Նա ցանկանում է զավթել ամբողջ հյուսիսային Աֆրիկան, Սիրիան, Թուրքիայի մի մասը⁶³: Նույն հեղինակը հայտնում է, որ 1938 թ. ամռանը Հռոմում Հիտլեր-Մուսսոլինի հանդիպման ժամանակ երկու դիկտատորների առջև փոխված էին «մեծ կայսրությունների» քարտեզներ, որոնց համաձայն, ուրիշ երկրների հետ, Սիրիան, սանջաքն ու հարավային Թուրքիան պետք է մտնեին «հոմեական մեծ կայսրության մեջ»⁶⁴:

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրի նախկին տեղակալ Պոլ Վիենոն 1939 թ. մարտին հայտարարել է. «Արդյո՞ք Իտալիան որոշակի հավակնություններ ունի՞ Սիրիայի նկատմամբ: Շատ է խոսվում այդ մասին... Իտալիայի նպատակն է, ինչպես երևում է, շահագործել մեր դժվարությունները Արևելքում: Իտալական Ռադիո-Բառիի կողմից արաբներն լեզվով տարվող պրոպագանդան շատ է հենվում թուրքական հավակնությունների վրա»⁶⁵:

Մուսսոլինին և Հիտլերը Սիրիան և արաբական մյուս երկրները պատեցին իրենց լրտեսական ցանցերով: Այս կապակցությամբ Ա. Դյուլպոնը գրում է. «Սիրիայում (և արաբական մյուս երկրներում) կենտրոնացված են իտալական հետախուզության և գետնապոլի լրտեսական կազմեր, որոնք մասնագիտացված են արաբական ազգաբնակչության շրջաններում լրտեսական և քայքայիչ աշխատանքի համար: Վերջերս այնտեղ հայտնաբերվեց իտալա-գեր-

⁵⁸ P u a u x G., op. cit., p. 49.

⁵⁹ Longrigg S. H., Syria and Lebanon under French Mandate, London, 1958, p. 241 (note 2).

⁶⁰ Idem, p. 240 (note 1).

⁶¹ T o y n b e e A., Survey, op. cit., p. 489.

⁶² «Дипломатический словарь», т. 1, 1948, стр. 137. S t e p h a n Կ u r e w i t z J. C., Diplomacy in the Near and Middle East, Vol. II, London—New York, 1956, p. 226—228.

⁶³ «Коммунистический Интернационал», ноябрь 1938, стр. 60.

⁶⁴ «Коммунистический Интернационал», август 1938, стр. 88.

⁶⁵ «Relations France-Syrie», op. cit., p. 29. Այս մասին տե՛ս նաև «Коммунистический Интернационал», ноябрь 1938, стр. 61. «Известия» 26—1—1937; «Правда», 11—1—1937.

մանական խոշոր լրեսնական կենտրոն»⁶⁶։ Բացի այդ, Ալեքսանդրեանի իտալական հյուպատոսարանի միջոցներով ու հովանավորությամբ գործող արար ֆաշիստ «Դոլմի Սուրբ» խառնակիչները սանջաքում տանում էին սանձաբձակ պրո-իտալական և հակասիրիական, հակաֆրանսիական ու հակահայկական ագիտացիա։ Իտալական դրամով ու զենքով, նրանք տեռորիստական ակտեր էին կատարում արար թե հայ պրոգրեսիվ տարրերի դեմ⁶⁷։ Նրանք համառ զրույցներ էին տարածում այն մասին, թե թուրքական զորքերի սանջաք ներխուժման դեպքում՝ Մուստոլինին ղինված միջամտություն կգործի։ Այս վերջին փաստը հաստատում է նաև Պոլ դյու-Վեոն, որը 1939 թ. ապրիլին դեպի սանջաք ուղևորության ճանապարհին նկատում է, որ «երկու զինվորներ, Թարթուսի մայր տաճարի բարձունքից հսկում են ծովի վրա, թե երբ կգան իտալացիները...»⁶⁸։

Սանջաքի պրոբլեմի նկատմամբ ֆաշիստական Իտալիայի ընդգծված «շահագրգռվածությունը» արտահայտվել է նաև մեկ ուրիշ հատկանշական երևույթով։ Տարիներ շարունակ այդ պրոբլեմը զբաղեցրել է ոչ միայն իտալական պարբերական մամուլը, այլ նաև միջազգային հարաբերությունների մի շարք իտալացի խոշոր մասնագետների, ինչպիսիք են Նավա Սանթին, Ա. Աուսիելլոն, Զ. Սփերդուտին, Գ. Չենսոնին և Ֆ. Կատալուչիոն, որոնք այդ պրոբլեմին նվիրել են մեծածավալ հոդվածներ և առանձին աշխատություններ։

Նրանք բոլորն էլ խոսելով Ալեքսանդրեանի սանջաքի հարցի, Թուրքիայի հավակնությունների, «արաբական նացիոնալիզմի» իրավունքների և հարակից հարցերի մասին, շատ են ճամբարտակում «միջազգային իրավունքի», «ժողովուրդների ինքնորոշման իրավունքի», «կոնստիտուցիոն սկզբունքների» և այլնի մասին, կատաղի կերպով դատապարտելով անդլո-ֆրանսիական իմպերիալիստներին... Նույն հեղինակները միշտ առաջ են քաշում Իտալիայի «շահագրգռվածությունը» Միջերկրականի ավազանում կատարվող իրադարձությունների նկատմամբ։ Այսպես օրինակ, ֆաշիստական Իտալիայի դիվանագիտության պատգամախոսներից մեկը հանդիսացող Ա. Աուսիելլոն հայտարարում է. «Այն, ինչ

տեղի է ունենում Միջերկրականում, էապես շահագրգռում է մեր երկիրը»⁶⁹։ Սանջաքի կցման առթիվ իտալական կառավարությունը 1939 թ. հուլիսի 10-ին բողոքի նոտա հղեց Փարիզ։ Այդ նոտայում Իտալիայի «թագավորական կառավարությունը՝ որպես Սան Ռեմոյում Ֆրանսիային Սիրիայի ու Լիբանանի վրա մանդատ հանձնող դաշնակից մեծ տերություններից մեկը, ամենայն վերապահությամբ ի գիտություն էր ընդունում բովանդակությունը վերոհիշյալ համաձայնագրի, որը կնքվել է առանց իր գիտության և համաձայնության»⁷⁰։

Իտալո-գերմանական ու թուրքական դիվանագիտության ինտերդեներ Սիրիայում ու սանջաքում հաճախ իրար հետ զուգորդվում ու խաշաձևվում էին⁷¹։ Թուրքական զորքերի սանջաք մուտքից անմիջապես հետո Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ն. Մենեմենչիօլուն գետն է Մյունխեն⁷² և 1938 թ. հուլիսի 13-ին Բեռլինի թուրքական դեսպանի հետ ընդունվում Հիտլերի կողմից։ «Նրանք քննարկում են այն հարցը, թե ինչպես կարելի է լավագույն ձևով շահագործել այս նոր իրադրությունը. քննարկվում է նաև Գերմանիայի և Անկարայի կառավարության հարաբերությունների վրա վերջին համաձայնագրերի թողնելիք անդրադարձումները»⁷³։

Սանջաքի պրոբլեմի բարձրացման առաջին օրերից սկսած, Իտալիայի նման հիտլերյան Գերմանիան էլ միշտ դրդել է Թուրքիային անզիջող լինել Ֆրանսիայի հանդեպ։ Մյուս կողմից էլ, նա ճնշում էր գործադրում Սիրիայի վրա, նրան գրգռելով թե՛ Ֆրանսիայի թե՛ Թուրքիայի դեմ⁷⁴։ Այս կապակցությամբ Բ. Գավուսը գրում է. «Ալեքսանդրեանի հարցի լուծման գործում ֆաշիստական պետությունները բացահայտ կերպով Թուրքիային մղում էին դեպի ավանտյուրա։ Նրանք ամեն կերպ ջանում էին հրդեհ բորբոքել և նույնիսկ գործը հասցնել արյունահեղության՝ Սիրիայի և Թուրքիայի միջև»⁷⁵։ Մորիս Պեռնոն նույնպես շեշտում է, որ «օտար

⁶⁹ Ausiello A., La Francia e l'Indipendenza della Siria, Roma 1938, p. 90.

⁷⁰ Իտալական նոտայի տեքստը տե՛ս. Sperduti, G., op. cit., p. 365.

⁷¹ Տե՛ս Vèou, Désastre, op. cit., p. 136—137; Chrétien, op. cit., p. 165, 173.

⁷² Du Vèou P., Désastre, op. cit., p. 136.

⁷³ „L'Humanité“, 15—7—1938, „Le Temps“, 14—7—1938.

⁷⁴ Տե՛ս „Frankfurter Zeitung“, 18—12—1936, 24—12—1936; „Völkischer Beobachter“, 18—12—1936, 23—12—1936.

⁷⁵ «Коммунистический Интернационал», январь 1938, стр. 40.

⁶⁶ «Коммунистический Интернационал», февраль 1939, стр. 63.

⁶⁷ Տե՛ս 2002 ԳԱ Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ № 1:

⁶⁸ Vèou, Chrétien, op. cit., p. 66.

ազգեցությունները ուժեղ կերպով գործադրվեցին Անկարայի վրա հենց այն պահից սկսած, երբ կազմակերպվեց Հոսմ-Բեռլին առանցքը⁷⁶;

Սանջաքի հարցի բարձրացման հենց սկզբնական շրջանում, եվրոպական մամուլում հողվածներ հրապարակվեցին այն մասին, որ՝ եթե երբևէ սանջաքի կոնֆլիկտը լուծվի ի նպաստ Թուրքիայի, դա արդեն միջազգային իրավական նախադեպ կհանդիսանա, որից օգտվելով Գերմանիան կարող է պահանջել իր նախկին տիրապետությունները, որովհետև պայմանագրերի վերանայման յուրաքանչյուր գործի հետևում կանգնած է Հիտլերի Գերմանիան, ինչպես ճիշտ նկատում է շվեյցարական «Լը թրավայ» թերթը⁷⁷: Հետևաբար, Հիտլերը ոչ մի ջանք չիսնայեց, որ Թուրքիան «հետ վերցնի» իր նախկին տիրույթը՝ սանջաքը: Արդարև, սանջաքի նոր ստատուսի ուժի մեջ մտնելուց մի քանի օր հետո, 1937 թ. դեկտեմբերի սկզբին, Բաղդադ ֆոն Շիրախը, հիտլերական երիտասարդության «ֆյուրեր»-ը, գալիս է Անկարա, այնտեղից էլ անցնում է Դամասկոս: Նա ծրագրել էր անցնել սանջաքի վրայով, սակայն Ազգերի լիգայի գիտորդների ներկայությունը այդ շրջանում խանգարում է այդ ծրագրին⁷⁸: Ֆոն Շիրախի Անկարա այցելության որպես անմիջական հետևանք շվեյցարներովում է թուրքական մամուլի հակասիրիական, հակաֆրանսիական կամպանիայի նոր արիք՝ «Փան», «Ջումհուրիեթ», «Կուրուն» և այլ թերթերի էջերում⁷⁹: Այդ օրերին Միրիայում և սանջաքում սկսում են վխտալ հիտլերական ազենտները. նրանք կապ են հաստատում երկրում արդեն գործող իտալական ազենտների հետ: Հալեպի թուրքական հյուպատոսը ապահովում է նրանց կապը Անկարայի, Հոսմի ու Բեռլինի հետ:

Հիտլերի և Մուսսոլինիի ազենտները Անկարայի կառավարողներին ջանում էին համոզել, որ սանջաքի հարցի «լուծման» համար հետևեն «կատարված փաստի» առջև կանգնեցնելու իրենց տակտիկային, ինչպես հռենոսյան շրջանում կամ Եթովպիայում կատարվեց, որովհետև, պնդում էին նրանք, «պարտվածների ազգային շահերի արդարացի ապահովումը Ազգերի լիգայի միջոցով երբեք հնարավոր չէ ձեռք բերել»⁸⁰: Իսկ երբ Անկարան հետևելով

ֆաշիստների «խորհուրդներին» և օգտվելով Լոնդոնի ու Փարիզի «բարի ծառայություններից» արդեն փաստորեն զավթել էր սանջաքը, հիտլերյան «Բեռլիներ Մոնատսհեֆթե» հանդեսում վալտեր Յեհլինը գրում էր. «Այդ կարգավորումով Թուրքիան իր համար ապահովել է միայն այն իրավունքները և զիրքը, որոնք հասնում են իրեն», որովհետև, իբր թե «Սանջաքը ազգային հիմունքներից հլնելով Միրիային չի պատկանում»⁸¹:

Սովետական Միության կառավարությունը Ալեքսանդրևաի սանջաքի շուրջ ստեղծված կոնֆլիկտին առաջին իսկ օրվանից հետևեց առանձին ուշադրությամբ և իր ամբողջ հեղինակությունը օգտագործեց Ազգերի լիգայում և միջազգային զիվանագիտական ասպարեզում, որպեսզի այն շարվի, չվերածվի ագրեսիայի ակտի և այն շծառայի իմպերիալիստական նպատակների: ՄՍՀՄ-ը միշտ կողմնակից և աննկուն պաշտպանն է եղել կոնֆլիկտների խաղաղ կարգավորման և կոնկրետ անվտանգության պահպանման սկզբունքներին: Հենց այդ սկզբունքներից ելնելով է միայն, որ ՄՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մ. Կրավինովը 1937 թ. հունվարի 27-ին Ազգերի լիգայի խորհրդում ողջունեց Ալեքսանդրևաի սանջաքի հարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ ձեռք բերված սկզբունքային նախնական համաձայնությունը⁸²: Սովետական մամուլը իր հերթին ողջունեց այդ կոնֆլիկտի բարեկամական կարգավորման սկզբնավորումը, կոնֆլիկտ՝ որի զինված ընդհարման վերածվելու համար ոչ մեկ ջանք չիսնայեցին Բեռլինն ու Հոսմը⁸³: «Սաուի աշ-Շամաթ» թերթը շատ ճիշտ գնահատելով ՄՍՀՄ-ի դիրքը, գրում էր. «Ֆրանսիայի ու Թուրքիայի կապիտալիստական ու իմպերիալիստական այդ երկու պետությունների հետ Սովետական Միությունը իր հարաբերություններում ձգտում է միշտ խաղաղության գործին օգուտ տալ միայն: ...Երբ սանջաքի շուրջ համաձայնություն գոյացավ, սովետական մամուլը գոհունակություն հայտնեց, որ սանջաքի հարցը չվերածվեց իմպերիալիստական համաշխարհային շարադեա պատերազմի, ինչպես այդ սպասում էին Գերմանիան և Իտալիան, որոնք Թուրքիային գրգռում էին այդ ուղղությամբ»⁸⁴: Սակայն Թուրքիան, հետևելով Առանցքի երկրներին

⁷⁶ „L'Europe Nouvelle“, Paris, № 1104, 8 avril 1939, p. 371.

⁷⁷ „Le Travail“, Genève, 17—12—1936; տե՛ս նաև „Manchester Guardian“, 7—1—1937.

⁷⁸ Տե՛ս „L'Humanité“, 2—2—1938; V é o u, Désastre, op. cit., pp. 82—84.

⁷⁹ Տե՛ս „Tan“, „Kurun“, 7—7—1938, „Cumhuriyet“, 12—1—1938.

⁸⁰ Տե՛ս Berliner Monatshefte“, Januar 1939 p. 68.

⁸¹ „Berliner Monatshefte“, Januar 1939, p. 67.

⁸² «Известия», 29—1—1937 г.

⁸³ «Правда», 8—1—1937 г., 10—1—1937 г., 30—1—1937 г.

⁸⁴ «Սաուի աշ-Շամաթ», 28—7—1938 թ.,

րի օրինակին ու «խորհուրդներին» իր զորքերը մտցրեց սանջաք՝ օգտվելով անգլո-ֆրանսիական բլոկի թողալուց: Թուրքական կառավարող շրջանները հաշվի չառան սովետական, սիրիական և աշխարհի առաջավոր հասարակայնության և մամուլի լուրջ զգուշացումները⁸⁵, որովհետև 1938 թ. ֆրանս-թուրքական համաձայնագրերի կնքումով Թուրքիան արդեն ներքաշվել էր անգլո-ֆրանսիական հակասովետական ռազմական բլոկի մեջ: Այդ ձևով Անգլիան ու Ֆրանսիան «գնեցին» Թուրքիայի չեզոքությունը մոտենող պատերազմում՝ ի հաշիվ Սիրիայի ազգային շահերի ոտնահարման⁸⁶:

Խոսելով սանջաքի կցումից ու անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության մասին, ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը 1939 թ. հոկտեմբերի 31-ին հայտարարել է հետևյալը ՍՍՀՄ Գերագույն Սովետի սեսիայում. «Թուրքիայի քաղաքականության մեջ մեզ համար այժմ շատ բան շատ ավելի պարզորոշ է դարձել, ինչպես Մոսկվայի բանակցությունների հետևանքով, այնպես էլ Թուրքիայի կառավարության արտաքին քաղաքական վերջին գործողությունների հետևանքով: Ինչպես հայտնի է, Թուրքիան գերադասեց իր բախար կապել պատերազմի մասնակից եվրոպական տերությունների որոշակի խմբավորման հետ: Նա փոխադարձ օգնության պակտ կնքեց Անգլիայի ու Ֆրանսիայի հետ... Գրանով իսկ Թուրքիան վերջնականապես դեն շարտեց չեզոքության զգուշավոր քաղաքականությունը և իրեն նետեց եվրոպայում ծավալվող պատերազմի հորձանուտի մեջ»⁸⁷: Եվ իրոք, Թուրքիայի գինակցությունը ապահովվեց՝ սանջաքը Թուրքիային զիջելու գնով: Ա. Ֆ. Միլլերը այս կապակցությամբ գրում է. «Թուրքիայի շահագրգռվածությունը սանջաքը աններսիայի ենթարկելու վերաբերյալ՝ բրիտանական դիվանագիտության ձեռքում որպես դենք ծառայեց թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու համար: Իսկ Ֆրանսիան, ինչպես «մյուսխենյան» քաղաքականության հարցերում, այնպես էլ Մերձավոր արևելքում ռազմական բլոկի ստեղծելու հարցում գնալով Անգլիայի հետևից, չհակառակվեց այլևս սանջաքը աններսիայի ենթարկելու վերաբերյալ Թուրքիայի

պահանջին (որը վայելում էր անգլիացիների պաշտպանությունը), սակայն այն պայմանով միայն, որ Թուրքիան կմիանա անգլո-ֆրանսիական բլոկին»⁸⁸: Ինչպես հայտնի է, Թուրքիան պաշտոնապես միացավ անգլո-ֆրանսիական ռազմական բլոկին՝ Ալեքսանդրեոսի սանջաքը կցելուց չորս ամիս էլ շանցած, երբ 1939 թ. հոկտեմբերի 19-ին Անկարայում կնքվեց «Անգլո-ֆրանս-թուրքական փոխադարձ օգնության պայմանագիրը»: Թուրքական կառավարությունը շտապել էր ստորագրել այդ ակտը, երբ իր արտաքին գործերի մինիստր Շ. Սարաջօղլուն դեռևս գտնվում էր Մոսկվայից Անկարա վերադարձի ճանապարհին:

1947 թ. հոկտեմբերին Սովետական տեղեկատու բյուրոյի՝ «Թուրքիայի կողմից բռնազրավված սանջաքը պետք է վերադարձվի Սիրիային» վերնագրված հայտարարության մեջ ասված է. «Սիրիայի ժողովուրդն է, որ վճարեց դիվանագիտական այս գործարքի (1939 թ. անգլո-ֆրանս-թուրքական փոխադարձ համաձայնագրերի—Ա. Ֆ.) գինը: Ալեքսանդրեոսի սանջաքը հափշտակվեց Սիրիայի ձեռքից՝ հակառակ նրա բնակչության ճնշող մեծամասնության կամքի, իմպերիալիստական շահերի այդ եսասեր կոնյուկտուրայի հետևանքով»: Այնուհետև, նույն հայտարարության մեջ ընդգծվում է, որ համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում Թուրքիան չհարգեց նույնիսկ այն հանձնարությունները, «որոնց համար նվեր էր ստացել Ալեքսանդրեոսի սանջաքը» և փոխանակ իր խոստացած օգնությունը ցուցաբերելու Անգլիային ու Ֆրանսիային՝ Թուրքիան օգնեց հիտլերականներին, «որպեսզի նրանք մղեն իրենց ավազակային պատերազմը»: Հայտարարության մեջ եզրակացվում է, որ «նախապատերազմյան խոտվյալ շրջանում կատարված անարդարությունը պետք է դարձանվի» և սանջաքը պետք է վերադարձվի իր իրավատերերին՝ սիրիացիներին⁸⁹:

Նույն տեսակետն է պաշտպանում նաև արար հեղինակ՝ Ա. Շաքերը. «Սիրիան,— գրում է նա,— այսօր էլ պահանջում է, որ Ալեքսանդրեոսի սանջաքը վերադարձվի իրեն, որովհետև այն Սիրիայի անբաժան մասն է, և ոչ թե Ֆրանսիայի կամ Թուրքիայի»⁹⁰: Մինչև օրս, սիրիական բոլոր պաշտոնական հրատարակու-

⁸⁵ «Ժողովուրդի ձայն» 26—6—1938 թ.:

⁸⁶ *Sin'u* Современная Сирия, М., 1957, стр. 152.

⁸⁷ *Sin'u* «Известия», 1—11—1939 г.

⁸⁸ Миллер А. Ф. Очерки новейшей истории Турции, АН Институт истории, М., 1948, стр. 191.

⁸⁹ Սովետական տեղեկատու բյուրոյի հայտարարության տեքստը տե՛ս «Արար», Բնյուսթ, 1947 թ. 12 նոյեմբերի:

⁹⁰ Ա. Շաքեր... նշված աշխ., էջ 123:

թյունները⁹¹ սանջաքը դիտում են որպես Սիրիայի անբաժան մաս և այն պատմա-աշխարհագրական բոլոր աշխատություններում ընդգրկում են Սիրիայի բարեօրինակ և Սիրիայի սահմանների մեջ: Գամասկոսում հրատարակվող «Ալ-Մեջլեթ էլ-Ասկարիե» և «Մեջլեթ էլ-Ջունգի» հանդեսները 1963 և 1964 թթ. համարներում հաճախ հոգևածներ են նվիրել «նվաճ սանջաք»-ի, «Զոհարեղված սանջաք»-ի մասին, նշելով, որ զոհարեղված սանջաքը արաբական հայրենիքի սրբազան մասնիկն է: Սիրիայում ամեն տարի սանջաքի թուրքերի կցման օրը նշվում է որպես ազգային սուգի օր և հասարակական կարծիքը բուռն ցանկություն է հայտնում, որ կառավարությունը անհրաժեշտ դիվանագիտական դործողություններ ձեռնարկի սանջաքը Սիրիային վերամիավորելու համար⁹²: Սանջաքի ազգաբնակչությունը նույնպես բոլոր հնարավոր միջոցներով արտահայտում է սիրիական մայր-հայրենիքի դիրկը վերադառնալու իր տենչանքը: 1964 թ. սեպտեմբերի 1-ին, Բեյրութի «Զարթոնք» թերթը հաղորդում էր, որ սանջաքում Սիրիայի հետ վերամիավորվելու պահանջ ներկայացնող թուրքիկներ են հրապարակվել⁹³:

Սանջաքի հանձնումը Թուրքիային իրոք զայրույթով ընդունվեց Սիրիայի ժողովրդի կողմից: Նա այդ մասին իր կարծիքն արտահայտեց մասսայական բողոքի միտինգներով և ընդհանուր դրոժադուլով: Պառլամենտի փոթորկալի նիստից հետո, որպես բողոք «կատարված ոճրի դեմ», սիրիական կառավարությունը ֆրանսիական կառավարությանը հղեց մի հուշագիր, որտեղ հատկապես ընդգրծվում էր սանջաքի կենսական նշանակությունը Սիրիայի համար և նրա Թուրքիային զիջվելը գնահատվում էր որպես միջազգային համաձայնագրերի կոպիտ խախտում և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ոտնահարում: Հուշագրում հիշատակվում էին Սի-

րիայի սահմանները հաստատող միջազգային բազմաթիվ պայմանագրերը, որոնց ոտնահարման ամբողջ պատասխանատվությունը թողնվում էր Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարությունների վրա: Այնուհետև, հուշագրում ասված էր, որ «Սիրիական հանրապետությունը չի ձանաչում և երբեք չի կարող ձանաչել առանց իր համաձայնության և մասնակցության կնքված մի համաձայնագիր, որը իրենից խլում է Ալեքսանդրեոսի սանջաքը»⁹⁴:

Սանջաքի ազգաբնակչությունն սկսեց մասսայաբար հեռանալ իր դարավոր բնօրրանից: Արտագաղթը սկսվել էր թուրքական գործերի մուտքից անմիջապես հետո: Գաղթում էին ոչ միայն հայերը, այլև հաղարավոր արաբներ: Գյուլհենոն գրում է, որ «Ամուրցի 6000 արար ֆելլահներ դեռևս օգոստոսի 8-ին (1938 թ.) անցել էին Հարիմի և Իզիրի շրջանները: Անտիոքի լճի արևելյան ափի արաբական նստակայաց բնակչության կեսը մեկնել է: Բոլորն էլ վերջ էին վերջո կաղթվել»⁹⁵:

Սանջաքի շուրջ 40.000 հայերը ամբողջությամբ (բացի մի բանի ընտանիքից), ավելի քան 20.000 արաբներ, նույնիսկ առանձին թուրքեր, որոնք չէին ուզում սանջաքի միացումը Թուրքիային, հեռացան սանջաքից և անցան Սիրիա ու Լիբանան: Մուսա-լեռան և մյուս շրջանների հայ գյուղացիներին մանդատային իշխանությունները տեղավորեցին Այն-Ջառ և Ռաս-ուլ-Այն վայրերում. մի մասն էլ ապաստանեց Փեսապի շրջանում, որը մնաց Սիրիայի սահմանների մեջ⁹⁶:

Սիրիական կառավարությունը և ժողովուրդը երբեք էլ չեն ձանաչել Սիրիայի նկատմամբ կատարված այդ ազդեցիկ ակտը: Ա. Այթան գրում է. «Այսօր էլ Սիրիան չի ձանաչել այն փաստական դրությունը, որը ստեղծվել է 1938 թվականից Ալեքսանդրեոսի սանջաքում, որը նա միշտ համարում է սիրիական տերիտորիայի մաս: Սիրիան սպասում է հարմար ժամանակի, որպեսզի պրոբլեմը բարձ-

⁹¹ Տե՛ս R. A. U. — Direction Générale de L'Information-Syrie, Bulletins 1958 — 1959, Damas.

مجلة الجندي — دمشق رقم ٥٩٥، ٨ آذار ١٩٦٣، رقم ٦٣٠، ١٩٦٣—١٢—٣، رقم ٦٣١، ١٩٦٣—١٢—١٠، المجلة العسكرية، دمشق، رقم ٧، شباط ١٩٦٣

⁹² Cahiers de l'Orient Contemporain, 3e—4e trim., 1947, Paris, 1948 p. 140—141.

⁹³ «Զարթոնք», Բեյրութ, 1—9—1964: Այս մասին տե՛ս նաև «Cumhuriyet», 24—7—1960; «Le Journal d'Egypte», 8—10—1961.

⁹⁴ «Ալ-Ասիմա», Գամասկոս, հուլիս, 1939:

«العاصمة» — الجريدة الرسمية لجمهورية سورية — دمشق — تموز ١٩١٩

⁹⁵ du Véoux P., Désastre..., op. cit. p. 101.

⁹⁶ Սանջաքից արտագաղթի մասին մանրամասն տե՛ս du Véoux P. «Chrétiens... op. cit. p. 43—57, Թեմիրյան Ա. «Քեսապ», Բեյրութ, 1956, էջ 202—203, ինչպես նաև Սիրիայի, Լիբանանի մամուլի 1939 թ. հունիս-նոյեմբեր ամիսների համարները:

բացնի Ազգերի լիգայի ժառանգորդ միջազգային կազմակերպության առջև»⁹⁷:

Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության կազմակերպության խորհուրդը 1964 թ. մարտի 22-ից 27-ը Ալժիր քաղաքում կայացած իր 6-րդ սեսիայում անդրադարձավ Ալեքսանդրեանի սանջաքի հարցին: Արտահայտելով Ասիայի ու Աֆրիկայի հարյուր միլիոնավոր մարդկանց, ինչպես նաև ՍՍՀՄ ժողովուրդների կարծիքը, սեսիան այդ հարցի կապակցությամբ ընդունեց հատուկ բանաձև, որտեղ սսված է.

«Ալեքսանդրեանի մուհամմադան (նահանգը) հանդիսանում է արարական շրջան և մաս է կազմում արարական աշխարհի: Անհիշելի ժամանակներից ի վեր, ... ինչպես և այժմս, այդ տերիտորիան հանդիսանում է Սիրիայի մասը, ... Այդ տերիտորիայի ոչ արարական մի երկրի կողմից օկուպացիայի շարունակումը... մշտապես սպառնում է այդ շրջանում անվտանգության և կայունության պահպանմանը:

Ահա թե ինչու արաբական ժողովուրդը գտնում է, որ արաբական այդ շրջանը իր օրինական տիրոջը վերադարձնելը հանդիսանում է ավյալ շրջանի անվտանգության և բարգավաճման համար կենսականորեն անհրաժեշտ պայմանը:

Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության խորհրդի 6-րդ սեսիան Ալեքսանդրեանը համարելով որպես սիրիական (արարական) տերիտորիայի անբաժան մասը՝ ընդունում և վճռականորեն պաշտպանում է Սիրիական պետության այդ մասն իր օրինական տիրոջը հնարավոր բոլոր միջոցներով վերադարձնելու պահանջը»⁹⁸:

Այսպիսով, սանջաքի պրոբլեմը մնում է Մերձավոր արևելքի չլուծված կարևոր հարցերից մեկը: Այն հանդիսանում է Թուրքիայի և Սիրիայի ու արարական երկրների բարեկամական հարաբերությունները խոչընդոտող արգելքներից մեկը:

А. А. БАЙРАМЯН

МЕЖДУНАРОДНАЯ ДИПЛОМАТИЯ И ПОЛИТИЧЕСКОЕ
ПОЛОЖЕНИЕ В АЛЕКСАНДРЕТТСКОМ САНДЖАКЕ
(ХАТАЙ) (сентябрь 1938 г.—июль 1939 г.)

Резюме

Вопрос об Александреттском санджаке, выдвинутый турецким правительством на арену международной дипломатии, Лига наций в мае 1937 г. решила компромиссно. Новый статус, номинально сохраняя санджак в составе сирийского государства, фактически превращал его в подлежащую Турции «самостоятельную политическую единицу». Французская дипломатия, в условиях опасного давления государств-Оси, уступая длительному нажиму Англии, в надежде обеспечить дружбу Турции, провела капитуляционный курс по отношению к Турции, согласившись, чтобы в июле 1938 г. турецкие войска вошли в санджак. «Парламент» санджака 2 сентября 1938 г. провозгласил «государство Хатай», и при активном вмешательстве Анкары быстрыми темпами началась туркизация санджака. В условиях сильных репрессий и преследований, направленных против демократических сил, арабов и армян, 23 июня 1939 г., по франко-турецкому договору, санджак был присоединен к Турции.

Такое решение санджакской проблемы являлось нарушением принципа свободного самоопределения и международно-го права. Сирия никогда не признавала незаконный захват Александреттского санджака и требует его воссоединения с Сирией.

⁹⁷ Aita A., op. cit. p. 109.

⁹⁸ Բանաձևի լրիվ տեքստը տե՛ս Советский Комитет солидарности народов Азии и Африки. Информационный бюллетень, № 2, август 1964, стр. 19.

INTERNATIONAL DIPLOMACY AND THE POLITICAL
SITUATION IN THE SANJAK OF ALEXANDRETTA
(HATAY) FROM SEPTEMBER 1938 TO JULY 1939

By A. A. BAIRAMIAN

S u m m a r y

The question of the Sanjak of Alexandretta, raised by the Turkish government before the arena of international diplomacy, was given a compromise solution in May 1937 by the League of Nations. Under the new Status, the Sanjak remained nominally part of the structure of the Syrian State, yet factually it turned into an „independent political unit“ under the aegis of Turkey. Under the dangerous pressure of the Axis Powers and yielding to Britain's continuous coercion, French diplomacy, hoping to win over the friendship of Turkey, led a policy of capitulation before Turkey agreeing to the entry of Turkish troops into the Sanjak in July 1938. The „Parliament“ of the Sanjak proclaimed, on September 2, 1938, the „State of Hatay“, and the „turkization“ of the Sanjak was stepped up in consequence of the active intervention of Ankara. In the face of heavy repressions and persecutions against the democratic forces, as well as against the Arabs and the Armenians, the Sanjak was, on June 23, 1939 annexed to Turkey according to a Franco-Turkish treaty.

Such a solution of the Sanjak problem was a violation of international law and of the principles of free self-determination. Syria has never acknowledged the unlawful seizure of the Sanjak of Alexandretta and demands its reunification with this country.

Հ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՄԱՆԳԱՏԱՅԻՆ ՌԵՃԻՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆԸ
(1920—1936 pp.)

Մինչև 1918 թ. Սիրիան Օսմանյան կայսրության վիլայեթներից մեկն էր: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Անգլիան ու Ֆրանսիան իրար մեջ բաժանեցին արաբական երկրների մանդատները: Սիրիայի և Լիբանանի մանդատը տրվեց Ֆրանսիային:

Նոսելով Սիրիայի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, պետք է ասել, որ այս հարցը միայն Սիրիայով չի սահմանափակվում, այլ վերաբերում է Սիրիային և Լիբանանին, որովհետև այս երկու երկրները մինչև 1950 թ. մարտ ամիսը տնտեսապես սերտորեն կապված էին իրար հետ, գոյություն չունեին տնտեսական սահմաններ և կապիտալն ու ապրանքներն ազատ շրջանառություն էին կատարում: Սիրիացի տնտեսագետ Բուրհանը գրել է, որ դժվար է ճիշտ որոշել Սիրիայի բաժինը երկու երկրների արտաքին առևտրի, արտահանման ու ներմուծման և առևտրական եկամուտների ընդհանուր բաժնում, որովհետև Սիրիայի և Լիբանանի արտաքին առևտրի վարչությունը գտնվում էր այսպես կոչված «հասարակաց շահերի Գերագույն խորհրդի ղեկավարության տակ»¹:

Առանձին երկրների վիճակագրական տվյալների բացակայությունը, հասկանալի է, դժվարացնում է մեր խնդիրը: Ուստի մեր աշխատության մեջ «Սիրիա» ասելով պիտի հասկանանք սիրիա-լիբանանյան տնտեսական, առևտրական և մարսային մի

¹ Bourhan Ch. l'Economie syrienne et les relations économiques et douanières avec ses voisins arabes, Genève, 1958, p. 43.

միասնություն: Այնուամենայնիվ, ամեն մի հնարավոր դեպքում տվել ենք Սիրիային վերաբերող առանձին տվյալներ:

Սիրիայի մանդատը ստանալը ֆրանսիական կապիտալի համար սաեղծեց մոնոպոլ գրություն: Ֆրանսիական իմպերիալիստները Սիրիան դիտում էին իբրև իրենց ամենահարուստ գաղութը, որը պետք է վերածվեր Ֆրանսիայի հացի շտեմարանի և հումքի բազայի: Ֆրանսիական կապիտալը, որ նավթի և բամբակի հարցում կախված էր անդր-ամերիկյան հումքից, ձգտում էր իրեն ապահովել հումքի սեփական ռեսուրսներով, Ֆրանսիայի տեքստիլ արդյունաբերությունը ազատել ամերիկյան բամբակի ներմուծումից: Այս նպատակով ֆրանսիական իմպերիալիստները ծրագրել էին ստեղծել «ֆրանսիական Եգիպտոս»², այսինքն՝ բամբակի բազա, չխոսելով արդեն տեքստիլ արդյունաբերության համար ուրիշ հումքային ռեսուրսների մասին՝ բուրգ, մետաքս և այլն:

Սիրիան ներկայացնում էր սպառման խոշոր և կարևոր շուկա ֆրանսիական արդյունաբերական արտադրանքների համար: Նավահանգիստների, երկաթուղիների և խճուղիների կառուցումն ու արգիականացումը մեծ հնարավորություններ էին ստեղծում ֆրանսիական կապիտալի արտահանման և հսկայական գերշահույթ ստանալու համար:

Միևնույն ժամանակ Սիրիան գտնվելով երեք մայրցամաքների՝ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի հատման տեղում՝ ուղղամատրատեգիական կարևոր նշանակություն ուներ:

Սիրիան գլխավորապես գյուղատնտեսական երկիր է:

Գյուղատնտեսությունը և անասնապահությունը անհրաժեշտ կենսամթերքներ են մատակարարում բնակչությանը և հումք՝ թեթև ու սննդի արդյունաբերությանը: Արտահանվող մթերքների մեծ մասը այդ երկու ճյուղերի արտադրանքն են: Սակայն գոյություն ունեցող հողային հարաբերությունները, արտադրության պրիմիտիվ կազմակերպումը, մեխանիզացիայի, ոռոգման սիստեմի անբավարար զարգացած լինելը, պարարտանյութերի անբավարար կիրառումը լուրջ արգելք էին հանդիսանում գյուղատնտեսության զարգացմանը:

Սիրիայի ամբողջ տերիտորիան հավասար է 184 հազար քառ. կմ. ի: Մշակման համար պիտանի 4 միլիոն հեկտար ընդհանուր ֆոնդից

մանդատային ռեժիմի տարիներին մշակվում էր միայն 2 միլիոն հեկտարը: Մնացած հողատարածությունը չէր օգտագործվում ոռոգման սիստեմի, ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության և ճահիճների պատճառով: Ֆրանսիական մանդատային իշխանությունները ձգտում էին լայնացնել ցանքատարածությունները և ավելացնել գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների՝ ցորենի և գարու արտադրությունը, սակայն, նրանց այդ ձգտումները շիրականացան: Յորենի և գարու, ինչպես նաև մյուս կուլտուրաների արտադրությունը շարունակ նվազել է:

Արար տնտեսագետ Թրաբուլսիի տվյալներով մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը ցանքատարածության յուրաքանչյուր հեկտարի միջին բերքը կազմել է. ցորենինը՝ 14,6 ցենտներ, գարունը՝ 14 ցենտներ: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին, բերքատվությունը համապատասխանորեն իջել է՝ 9,1 և 10,5 ցենտների, այսինքն՝ 1913 թվականից մինչև 1938 թ. այս երկու կարևոր կուլտուրաների միջին բերքը կրճատվել է համարյա 30 տոկոսով³:

Ֆրանսիական մանդատային իշխանությունները փորձեր են արել Սիրիայում ագրարային հարցը յուրովի լուծելու համար: Գաղութարարները «հողային ռեֆորմի» անվան տակ վարել են գյուղացիական հողերը բնագրավելու քաղաքականություն՝ հօգուտ տեղական կալվածատերերի և մոնոպոլիստական ընկերությունների: Մանդատային իշխանություններն անցկացրին հողային կադաստր: Ըստ այդ կադաստրի բնագրավվում էին այն հողամասերը, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը չէր հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Մրանից հատկապես տուժում էին մանր հողատերերը, որոնց մի մասը իր սեփականությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ չուներ: Կադաստրը նպաստում էր դադարեցնել և տեղական կալվածատերերի հողային սեփականության ամրացմանը: Օկուպանտների հետ անձնական կապերի շնորհիվ կալվածատերերին հաջողվում էր իրենց անունով հողային սեփականության փաստաթուղթ ձեռք բերել: Այսպիսով, ֆրանսիական «հողաշինարարությունը» հեշտացնում էր գյուղացիական հողերի բնագրավումը:

Կալվածատերերի ձեռքում հսկայական հողային տարածությունների կենտրոնացման մյուս ուղին պետական հողերի հափըշ-

² «Страны Востока», Экономич. справочник, т. I, Ближний Восток, М., 1934, стр. 227.

³ Traboulsi Izzet, l'Agriculture syrienne entre les deux guerres, Beyrouth, 1948, p. 142.

տակումը և բոշվորների հողերի «զնումն» էր: Սիրիայի գիտությունների ակադեմիայի նախկին պրեզիդենտ Մուհամմեդ Քուրդ Ալիի տվյալներով մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Համայի պրովինցիայում 164 գյուղերի հողերի 80 տոկոսը իրենց ձեռքում են պահել ֆեոդալական հինգ ընտանիքներ⁴: Սիրիայի խոշոր կալվածատերերից մեկը, Ռաշադ Քարմատան խոստովանել է, որ հողերի մեծ մասը պատկանում է կալվածատերերին և որ առանձին կալվածատերեր ունեն հսկայական տարածությունների հասնող հողամասեր⁵: Տասնյակ գյուղերի հողային ֆոնդի իսկական տերերը Սիրիայում եղել են 7 հարուստ ընտանիքներ. զրանք են՝ Քարազի, Ազմ Քիլանի, Քնյֆուր, Շիշակլի, Քարուտի և Մարխեք ընտանիքները... Քարազի ընտանիքը տիրել է 49 գյուղերի հողային ֆոնդին, Ազմիները՝ 25, Քիլանին՝ 24 և այլն⁶:

Սիրիայի հողերի զգալի մասը կազմում են մուսուլմանական մզկիթներին պատկանող վակֆ⁷ հողերը: Վակֆի ինստիտուտը առաջացել է հողերը կամ շենքերը որոշակի ակտով մզկիթներին կտակելու ուղիով: Վակֆ գույքը քաղաքացիական օրենսդրության շրջանակից դուրս գալով, անցնում է վակֆերի մինիստրությանը:

Մերձավոր արևելքում, ինչպես իրավացիորեն նշում է ֆրանսիական տնտեսագետ Փ. Վելերսը, յուրաքանչյուր կրոնական հաստատություն հանդիսանում է մի կալվածատեր: 1934 թ. տվյալներով Սիրիայում և Լիբանանում կար 4 հազար տարբեր տեսակի անշարժ վակֆ գույք, որի արժեքը կազմում էր մեկ ու կես միլիարդ ֆրանկ⁸: Մուսուլմանական հոգևորականության վերին խավը համագործակցելով մանդատային իշխանությունների հետ մեծ եկամուտներ էր ստանում վակֆ հողերի օգտագործումից և արաբ գյուղացիության շահագործումից:

⁴ محمد كرد علي، كتاب خطط الشام، دمشق، 1962، ص 214

⁵ Traboulsi, *նույն տեղում*, էջ 49, տես նաև «دمشق»

١٢٨٠، تشرين الاول ٢٩

⁶ „L'Asie Française“, 1933, avril, № 309, p. 132.

⁷ Արաբերեն «վակֆ» տերմինը բառացի նշանակում է կանգառում, իսկ մուսուլմանական իրավունքի լեզվով և փոխարենական իմաստով սրևէ գույքի նվիրաբերումը մզկիթներին, բարեգործական նպատակներով օգտագործելու համար:

⁸ Bourban, *նշված աշխատությունը*, էջ 47:

Սիրիայում մշակելի հողերի միայն 20 տոկոսն էր կազմում գյուղացիական մանր տնտեսությունների սեփականությունը: Սիրիացի տնտեսագետ Ահմեդ էս-Սամմանը նշում է, որ Սիրիայում գյուղացիական ընտանիքի միջին հողաբաժինը կազմում է՝ չորսվի հողերում—2,5 հեկտար, իսկ անչրդի հողերում—7,5 հեկտար⁹: Այս հողաբաժինները մեծ մասամբ գտնվում են լեռնային շրջաններում, որտեղ աշխարհագրական պայմանները թույլ չեն տալիս խոշոր հողատիրություն ստեղծել¹⁰:

Օսմանյան կայսրության քայքայումից հետո Սիրիայում թուրքական պետությանը և սուլթան Աբդուլ Համիդին պատկանող հրակայական հողատարածություններն անցան ֆրանսիական իշխանությունների ձեռքը, որոնք այդ հողերը վաճառեցին գյուղացիներին դրանց արժեքը 15 տարվա ընթացքում վճարելու պայմանով¹¹: Մակայն հողային այս «ռեֆորմից» օգտվեցին ունևոր և շահագործող տարրերը: Հող զնած գյուղացին պարտավոր էր տարեկան վճարումները կատարել ժամանակին: Չունենալով անհրաժեշտ դրամ նա ստիպված դիմում էր վաշխառու կալվածատիրոջ օգնությանը և մեծ տոկոսներով դրամ վերցնում: Մի քանի տարվա ընթացքում մեծ պարտքերի տակ ընկնելով, նա հավիտյան կորցնում էր մի փոքր հողամասի սեփականատերը դառնալու հույսը: Այսպիսով, այս հողերը նորից անցնում են կալվածատերերի և մասամբ ունևոր գյուղացիների ձեռքը: Սիրիական բուրժուազիայի շատ ներկայացուցիչներ, հատկապես խոշոր առևտրականները, մեծ հողատերեր են դառնում նույն միջոցներով տիրանալով գյուղացու հողին¹²:

Այս բոլորի հետևանքով ստեղծվեց մի դրուսթյուն, երբ, ինչպես նշում է ժակ Վելերսը «ով մշակում է հողը, նա դրա տերը չէ, իսկ ով որ հողի տերն է, նա չի մշակում այն»¹³:

أحمد الثمان، محاضرات في الاقتصاد في سورية، القاهرة، ١٩٥٥

ص ٢٦

¹⁰ Mounayer Nasib, *Le Regime de la terre en Syrie*, Paris, 1929, p. 203.

¹¹ Traboulsi, *նշված աշխատությունը*, էջ 66:

¹² D. Warriner, *Land and Poverty in the Middle East*, London, 1948, p. 85.

¹³ Ж. Велерс, *Крестьяне Сирии и Ливана*, пер. с франц. М., 1952, стр. 146.

Սիրիայի գյուղացիության երկու երրորդը, մոտ 340 հազար տնտեսություն¹⁴ հողագործի էր: Ուստի և լայն տարածում էր գտել վարձակալման սիստեմը: Վարձակալության պայմանագիրը սովորաբար կնքվում էր մեկ տարով: Կալվածատերը, բաղադրում ապրելով, անմիջականորեն չէր ղեկավարում իր տնտեսությունը: Ամբողջ գործը ղեկավարում էր կառավարիչը: Այս փոխանորդը կամ վաթիլը գյուղացու իսկական տերն էր և օգտվելով իր դիրքից, ամեն կերպ աշխատում էր գյուղացու հաշվին հարստանալ: Գյուղացու կյանքում այս պարագիտային «երրորդ անձնավորություն» առկայությունը կրկնապատկում էր նրա ստրկացումը¹⁵: Սակայն, երբ ժամանակ առ ժամանակ ֆելլաճի թշվառությունը գերազանցում էր սովորական չափից, երբ անբերրիության տարիներ էին վրա հասնում, կալվածատերոջ կամ կառավարչի չափից դուրս դաժանությունը համբերությունից հանում էր ֆելլաճներին: Նրանք հավաքում էին բերքը, հեռացնում կառավարչին ու վառում կալվածատիրոջ տունը, ինչպես այդ տեղի ունեցավ 1935 թ. Համալսում, Քիլանիների կալվածատիրական ընտանիքի հետ:

Գյուղացիությանը շահագործում էին թե՛ կալվածատերերը և թե՛ վաշխատուները: Թրաբուլսին ճիշտ կերպով մատնանշել է, որ կառավարական հաստատությունները չէին էլ մտածում գյուղացիների վաշխատուների ճանկերից ազատելու մասին: Վերջիններս մնում էին վարկային միջոցների և մանավանդ կարճ ժամկետով վարկի գլխավոր հայթայթողները¹⁶:

Սիրիայում հիմնված գյուղատնտեսական բանկերը, որոնք պատկանում էին ֆրանսիական կապիտալին, վարկավորում էին միայն կալվածատերերին և առևտրականներին: Գյուղացիները ամբողջովին կախման մեջ էին վաշխատուներից:

Ֆրանսիական բուրժուական պատմաբանները և տնտեսագետները (Ժակ Վելբրս, Կարնիե և ուրիշները) ապարդյուն փորձեր են անում ապացուցելու Ֆրանսիական մանդատային կառավարման «բարեբար» ազդեցությունը Սիրիայի տնտեսության վրա, որ իբր թե ֆրանսիական իշխանությունների Սիրիայում վարած քաղաքականության շնորհիվ երկիրը բարգավաճել է, ցանքատարա-

ծություններն ավելացել են, բերքատվությունը բարձրացել և այլն: Նրանց այդ պնդումներն անհիմն են, որովհետև փաստերը, ինչպես ցույց տվեցինք, ապացուցում են հակառակը:

Սիրիայի տնտեսության մեջ զգալի տեղ էր գրավում շերամապահությունն ու մետաքսագործությունը: Ֆրանսիական մոնոպոլիստները հետպատերազմյան շրջանում մեծ ջանքեր գործադրեցին Սիրիան մետաքսի հումքի բազայի վերածելու համար: Այս առթիվ Ժ. Վելբրսը գրում է, որ մանդատային իշխանություններն արեցին այն ամենը, ինչ հնարավոր էր շերամաբուծությունը զարգացնելու համար, որը պետք է դառնար Լիոնի ֆաբրիկաներին հումքով ապահովելու աղբյուրներից մեկը: Այդ նպատակով պարզներ տրվեցին արտադրանքի համար, անկինը դրվեցին և այլն: Սակայն այդ միջոցառումները սպասված արդյունքը չտվեցին: Պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ բոժոժի արտադրությունը աստիճանաբար նվազել է: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս բոժոժի արտադրության ու արտահանման պատկերը մինչպատերազմյան և ֆրանսիական մանդատի տիրապետության ժամանակաշրջանում¹⁷:

Տարիներ	Արտադրվել է (տոննաներով)	Արտահանվել է (տոննաներով)
1910	6100	
1930	3575	191
1936	956	

Այս տվյալները ցույց են տալիս, որ ֆրանսիական տիրապետության ժամանակ մետաքսի արդյունաբերությունը Սիրիայում անկման էր հասել, որի հետևանքով վատացավ շերամապահ ֆելլաճների վիճակը¹⁸: Սիրիական շերամաբուծության անկման պատճառները ճապոնական մրցակցությունը և արհեստական մետաքսագործության լայն զարգացումն էր: Տեխնիկական կուլտուրաներից միայն բամբակի արտադրությունն էր, որ այդ տարիներին զարգացավ: Մանդատային իշխանություններն ամեն կերպ ձրգտում էին մեծացնել նրա ցանքատարածությունները և հասցնել

¹⁴ «Современная Сирия», М., 1958, стр. 47.

¹⁵ Ж. Велерс, նշվ. աշխ., էջ 151:

¹⁶ Traboulsi, նշվ. աշխ., էջ 123:

¹⁷ Himadeh Said, Economic organization of Syria, Beirut, 1936, 157.

¹⁸ Traboulsi, նշված աշխատությունը, էջ 173:

800 հազար հեկտարի¹⁹։ Այդ նպատակով նրանք մի շարք արտոնություններ տվեցին կալվածատերերին ու գյուղացիներին։ Չբիաբար բամբակի սերմեր բաժանվեց, ժամանակավորապես հարկից ազատվեցին նոր մշակվող հողամասերը, քաջալերվում էր տեղական բամբակապուշտ գործարանների կառուցումը և այլն։ Այս բոլոր միջոցառումները զգալի արդյունքներ տվեցին. բամբակի ցանքատարածությունները 1922 թ. 22.000 հեկտարից 1936 թ. հասավ 40.380 հեկտարի։ Սակայն բամբակի արտադրության Ֆրանսիական պլանը չիրականացավ։

Մանդատային ռեժիմի տարիներին խոր ճգնաժամ ապրեց նաև Սիրիայի բուլղոսական անասնապահությունը, որը բուլղոս արաբների եկամտի ու գոյության հիմնական աղբյուրն էր։ Բուլղոս անասնապահի արտադրած ուղտի և ոչխարի բուրդը հումք էր ծառայում թե՛ արտահանման և թե՛ տեղական տեքստիլ արդյունաբերության համար։

Արևմուտքի երկրները էժան ապրանքներով լցրել էին սիրիական շուկան և մեծ հարված հասցրել երկրում երբեմնի ծաղկած տեքստիլ արդյունաբերությանը։ Արաբ անասնապահը զրկվել էր իր բուրդը երկրի շուկայում վաճառահանելու հնարավորությունից։ Բացի այդ, Ավստրալիայում, Արգենտինայում և այլ երկրներում ոչխարաբուծության և բրդի արտադրության զարգացումը զգալի շափով կրճատել էր սիրիական բրդի արտահանումը։

Ֆրանսիական մանդատային իշխանությունների քաղաքականությունը ավելի սրեց բուլղոսային տնտեսության ճգնաժամը։ Նրանք բուլղոս անասնապահին ծանրաբեռնեցին մեծ հարկերով։ Բացի ընդհանուր հարկերից, գոյություն ունեւր նաև «աղնամ» հարկը՝ հարկ անասունների վրա, որ վճարում էին բուլղոս և նստակյաց անասնատերերը։ Ֆրանսիական իշխանությունները «աղնամը» փոխարինեցին դրամահարկով և այն կապալով տվեցին բուլղոս ցեղապետներին։ Հարկ դանձելու այս սխտեմը ամենահարմար միջոցն էր զեղծումների, կեղերումների և շարաշահումների համար։

Բուլղոսական տնտեսությանը մեծ հարված հասցրեց ծովային նավազնացության, երկաթուղային փոխադրումների և ավտոտրանսպորտի զարգացումը։ Նրանք արժեքազրկեցին ուղտերի քարավանային տրանսպորտի վաղեմի նշանակությունը, բուլղոսներին զրկեցին ավանդական եկամուտներից, որ նրանք ստանում էին

19 Hima deh, նշված աշխատությունը, էջ 79։

բեռների ու մարդկանց տեղափոխումից։ Այս բոլորի հետևանքով առաջացած բուլղոսական տնտեսության խոր ճգնաժամը բուլղոս անասնապահին ստիպում էր թողնել անապատը, իր տնտեսությունը և սովից փրկվելու համար քաղաքներում ապաստան որոնել։ «Աղքատությունը և սովը, — ասում է Վելերսը, — բուլղոսների ամենաաղքատ խմբերին ստիպում է թողնել բուլղոսական կյանքը և ֆելլահի աշխատանքով գոյության միջոցներ փնտրել, անցնել նստակյաց կյանքի»²⁰։

Արաբ տնտեսագետ Մունիր աշ-Շարիֆը հետևյալ կերպ է նրկարագրել անապատի արաբների վիճակը. «Արաբ մեր բուլղոս եղբայրները, — գրել է նա, — հազիվ էին ազատվել թուրքերից, հանկարծ ընկան Ֆրանսիայի ճնշման տակ... Ես դեռ չեմ տեսել արաբներ, որոնք ավելի շատ տանջված լինեն, քան անապատի արաբները»²¹։

Բուլղոս անասնապահի համար հուսահատական վիճակ էր ստեղծվում նաև երաշտի տարիներին։

Բելյուսում հրատարակվող «Ավետիք» ամսագիրը հետևյալ կերպ է բնութագրել Սիրիայի տնտեսական վիճակը 1932—1933 թթ. «Սուրիո մեջ տիրող երաշտի պատճառով անասունները կմահանան, ցանքը փշանալու վրա է և եթե այսպես շարունակվի կրքնա կատարյալ սովի մատնվել երկիրը... Ժողովուրդը սահմուկաժ կզիմե երկնային օգնության, կաղոթեն իսլամ ու քրիստոնյա հայցելով անձրևաբեր եղանակ մը — որ պիտի կարենար փրկել ստույգ աղետե մը այս երկիրը։ Երաշտը և ցուրտը շորացրին արտները և սպանեցին արջառ ու անասուն։ Պետվիներ անթոթութենե մղված կը խուժեն ղեպի քաղաքները իրենց մնացորդ հոտերով»²²։

Ստորև տրվող աղյուսակը ցույց է տալիս ֆրանսիական իմպերիալիստների տասնվեց տարվա տիրապետության ընթացքում Սիրիայի անասնապահության վիճակը համեմատած մինչ պատերազմյան տարիների հետ»²³։

	1914 թ.	1935 թ.
Խոշոր եղջ. անասուններ	413 հազար	368 հազար
Ոչխար	4100 հազար	2056 հազար
Ուղտ	158 հազար	188 հազար
Զի, ջորի, էջ	230 հազար	190 հազար

20 Ж. Велерс, стр. 97.

21 منيسر الشريف, էջ 73։

22 «Ավետիք», Բելյուս, 28 հունվարի 1933 թ.։

23 «Современный Восток в цифрах и картах», М., 1937, стр. 28.

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը (1929—1933) մեծ հարված հասցրեց Սիրիայի առանց այդ էլ քայքայված ժողովրդական տնտեսությունը: Ըզնաժամը առաջին հերթին հարվածեց Սիրիայի գյուղատնտեսությանը, հատկապես նրա հիմնական ճյուղերին՝ անասնապահությանը, շերամապահությանը, ծխախոտագործությանը: Ըզնաժամի տարիներին խիստ կրճատվեց արտահանությունը: Դա պարզ երևում է հետևյալ թվերից. հում մետաքսի արտահանումը 230 տոննայից իջավ 108 տոննայի, բոժոժինը՝ 286 տոննայից 197 տոննայի, բրդինը՝ 6 հազար տոննայից 1500 տոննայի, հում կաշվինը՝ 1030 տոննայից 318 տոննայի, անասունների՝ 250 հազար գլխից 15 հազար գլխի²⁴: Առանձնապես զգալի եղավ ճգնաժամի աղղկեցությունը սիրիական բրդի արտահանման վրա, որը ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և Իտալիայում տեքստիլ արտագրության կրճատման արդյունք էր:

Ֆրանսիական մանդատային ռեժիմի տարիներին նպաստավոր պայմանների մեջ չէր գտնվում նաև Սիրիայի ազգային արդյունաբերությունը: Ֆրանսիական մանդատային իշխանությունների քաղաքականությունը չէր խրախուսում նրա հետագա զարգացումը: Դրա մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ վեց տարվա ընթացքում՝ 1930—1936 թթ. ընդամենը՝ 11 մլն. 57 հազար լիրա է ներգրվել արդյունաբերության մեջ:

Ֆրանսիական մոնոպոլիստները կառուցում էին այնպիսի ձեռնարկություններ, որոնք անմիջական օգուտ էին բերում և կարող էին կարճ ժամանակամիջոցում փոխհատուցել իրենց ծախսերը: Այդպիսի ձեռնարկություններ էին, օրինակ, ֆրանսիական ռազմական բազաների կառուցման համար ցեմենտ և ասֆալտ մատակարարող գործարանները: Միևնույն ժամանակ ֆրանսիական կապիտալիստները Սիրիայի քաղաքներում կազմակերպում են կոմունալ կոնցեսիոն ձեռնարկություններ և մեծ շահույթներ են ստանում դրանից: Նրանց ձեռքումն էր գտնվում կոմունալ ձեռնարկությունների մեծ մասը (էլեկտրակայաններ, ջրմուղ, տրամվայ և այլն): Այդ կոնցեսիոն ձեռնարկություններին մասնակցում էին նաև տեղական խոշոր կապիտալիստները: Իսկ սիրիական ազգային բուրժուազիայի ձեռքումն էին գտնվում մանր արդյունաբերական ձեռնարկությունները՝ տեքստիլ ֆաբրիկաները, կոնսերվի, օձառի գործարանները և կաշվի ոչ մեծ գործարանները:

²⁴ «Аграрный вопрос и крестьянское движение», т. IV, М., 1937, стр. 233.

Տեղական արդյունաբերության և արհեստագործության համար կործանարար աղղկեցություն ունեցավ մանդատային իշխանություններին մաքսային քաղաքականությունը: Սիրիական մաքսային տարիֆը նախատեսում էր հումքի բավականին լայն տեսակների, մեքենաների և մեքենայական սարքավորումների ներմուծում առանց մաքսատուրքի²⁵: Դա մեծ շահույթներ էր բերում մոնոպոլիստներին: Մաքսային տարիֆը նախատեսում էր նաև նորմալ և բարձր դրույթներ: Վերջիններս կիրառվում էին Ազգերի լիգայի ոչ անդամ երկրների նկատմամբ, բացառությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների: Փաստորեն բոլոր երկրները կարող էին ազատ կերպով մրցել սիրիական շուկայում: Այդ մրցությունը մեծ հարված հասցրեց Սիրիայի արդյունաբերությանը: Տեղական արհեստավորների արտադրանքները, հատկապես տեքստիլ արդյունաբերության, որոնք երկար տարիներ բավարարում էին ներքին շուկայի պահանջները, շկարողացան մրցել արտասահմանից ներմուծվող ապրանքների հետ: Սիրիան և Լիբանանը երկու պատերազմների ընթացքում շատ տուժեցին ներմուծված ապրանքների, հատկապես ճապոնական արտադրանքների մրցակցությունից, — զրել է տնտեսագետ Մուսսային:

Տասնյակ հազարավոր արհեստավորներ, բանվորներ, — նշում է Ֆարրան, — մնացին առանց աշխատանքի: Հատկապես կանայք, որոնք երեխաների հետ տանը աշխատելով չնչին վարձ էին ստանում, կորցրին իրենց եկամտի աղբյուրը²⁶: Շատ արհեստավորներ, չդիմանալով օտարերկրյա մրցակցությանը, փակեցին իրենց արհեստանոցները:

Տեքստիլ արդյունաբերության կարևոր կենտրոններ հանդիսացող Հալեպում և Դամասկոսում արտադրանքը նվազելու մասին վկայում են հետևյալ թվերը (հազար մետրերով)²⁷:

	Հալեպում		Դամասկոսում	
	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1931 թ. 1932 թ.
Բամբակեղեն գործվածքներ	1666.7	1742.4	721.6	2563.0 679.8
Մետաքսե գործվածքներ	1760.0	1469.6	1771.0	1661.0 875.6
«Ազոպանի» կոշիկ գործվածքեղեն	1141.8	510.4	114.4	1313.4 193.0

²⁵ Farra Adnan, L'industrialisation en Syrie, Genève, 1950, p. 165.

²⁶ Farra, նշված աշխատությունը, էջ 165.

²⁷ «Страны Востока», ч. I, Ближний Восток, М., 1934, стр. 243.

Սիրիայի շորս մեծ քաղաքներում՝ Հալեպում, Դամասկոսում, Հոմսում և Համայում առաջին համաշխարհային պատերազմից առաջ ևդեղ է 30 հազար տնայնագործական գործվածքային հաստոց, իսկ 1931 թ. մնացել էր միայն 4.400 հաստոց²⁸:

1934 թ. տվյալներով Սիրիայում կային հետևյալ արդյունաբերական ձեռնարկությունները²⁹:

Բամբակազտիչ գործարաններ	5
Մետաքսամանական ֆաբրիկաներ	72
Մխարտի գործարաններ	26
Ցեմենտի գործարաններ	2
Ոչ մեծ կաշեգործարաններ	17

Բացի վերոհիշյալ ձեռնարկություններից, կային նաև գորգագործական, օճառի, լուցիկ, կղմինդրի և սննդի արդյունաբերության հարյուրավոր մանր ձեռնարկություններ: Դամասկոսը հայտնի էր սառը գնեքի և փայտից, կաշվից, ոսկուց ու արծաթից պատրաստված դեղարվեստական արտադրանքներով: Այս բոլոր ձեռնարկություններում 1934 թ. աշխատել է 203,297 բանվոր (1913 թ.՝ 309,525 բանվոր), որոնցից 38,124 մարդ գործարաններում, իսկ 165,803 մարդ՝ արհեստագործական արդյունաբերության մեջ³⁰:

1913 թ. համեմատությամբ բանվորների թվի նվազումը բացատրվում է տնայնագործական արդյունաբերության անկումով և արդյունաբերության մեջ նոր, կատարելագործված մեքենաների տեղադրումով:

Ֆրանսիական իմպերիալիստների այսպիսի քաղաքականության հետևանքով երկրում ստեղծվեց ծանր գրություն: Ֆրանսիական իշխանությունները վախենալով, որ դա կուժեղացնի իրենց դեմ ուղղված օպորտիցիան, հանդես եկան այսպես կոչված «տնտեսական ռեֆորմների» ծրագրով³¹:

Սիրիայի տնտեսական «զարգացման» նպատակների համար ֆրանսիական իմպերիալիստները երկրում ներդրեցին 500 միլիոն

ֆրանկ³²: Բայց այդ գումարի շատ շնչին մասը ծախսվեց տնտեսական նպատակների համար: Իրա փոխարեն մանդատային իշխանությունները կառուցում էին ռազմական բազաներ և օդանավակայաններ, ասֆալտապատում երկրի կարևորագույն մագիստրալները: Ավարտվեց մինչև Իրաքի սահմանը հասնող Բաղդադի երկաթուղու կառուցումը: Ֆրանսիական իմպերիալիստների համար բացառապես մեծ կարևորություն ստացավ 1935 թ. սկզբներին կառուցված նավթամուղը, որը Իրաքի նավթը փոխադրում է Միջերկրական ծովի ափերը:

Ավելացավ նաև ցեմենտի արտադրությունը: Շեկկայի և Դումմարի ցեմենտի գործարանները 1934 թ. արտադրել են՝ առաջինը 80 և երկրորդը 28 հազար տոննա ցեմենտ: 1936 թ. այդ գործարաններում նոր վառարաններ կառուցվեցին, որով ցեմենտի արտադրությունը 1937 թ. հասավ 250 հազար տոննայի³³, Ցեմենտի արտադրության աճը բացատրվում է ռազմական օբյեկտների շինարարության ընդլայնմամբ:

Սիրիայի էկոնոմիկայում մեծ դեր էին խաղում ֆրանսիական մոնոպոլիստական ընկերություններ՝ Դամասկոս-Համա երկաթուղային ընկերությունը, ծխախոտի «Ռեժի» ընկերությունը, «Իրաք պետրոլիում» նավթային ընկերության մասնաճյուղը, «Ալժիր-թուրքիայան հողային վաթկ» ընկերությունը, «Էլեկտրական լուսավորության և տրամվայի ընկերությունը» և բազմաթիվ բաժնետիրական ու ապահովագրական ընկերություններ: Մոնոպոլիստական այս ընկերությունները Սիրիայում ֆրանսիական իմպերիալիզմի ամբողջներ էին, որոնց գլխավորում էր ֆրանսիական կապիտալիստական Սիրիայի և Լիբանանի բանկը՝ իր ֆիլիալներով: Վերոհիշյալ ընկերությունների տարեկան մաքուր շահույթը հավասար էր Սիրիայի և Լիբանանի ազգային ամբողջ կապիտալ ներդրումներին³⁴:

Այսպիսով, ֆրանսիական մանդատի ժամանակ մի խումբ կապիտալիստներ անխնա թալանում էին երկրի հարստությունը:

Սիրիայի ֆեյլահների իմպերիալիստական ստրկացման, կոնկրետ ձևերից մեկը ծխախոտի ֆրանսիական մոնոպոլիստների «Ռեժի» ընկերության վարած քաղաքականությունն էր: 1883 թ. մայիսի 5-ին սուլթան Աբդուլ Համիդի ֆերմանով Օսմանյան

28 Բագրա, էջ 165:

29 Նույն տեղում, էջ 125, տե՛ս նաև «Современный Восток в цифрах и картах», Экономический справочник, М., 1937, стр. 28.

30 Բագրա, նշված աշխատությունը, էջ 125:

31 'نجيب ارمنازى، سورية من الاختلال للجلاء، القاهرة، ١٩٥٣، ص ٥٦

32 „L'Orient“, 28 juin, 1931.

33 Բագրա, նշված աշխատությունը, էջ 224:

34 «الطريق»، بيروت، ١٩٥٠، اذار ص ١٧

կայսրության տերիտորիայում ծխախոտի արտադրության, նրա վաճառքի և արտահանման մոնոպոլիան մինչև 1913 թ. տրվում էր «Régie des tabacs l'Empire ottoman» ընկերությանը: 1914 թ. ընկերության գործունեության ժամկետը երկարացվեց 15 տարով:

Մանդատային իշխանությունները 1935 թ. նորից երկարացրին ընկերության գործունեության ժամկետը: Միախոտագործության մոնոպոլիայի վերականգնումը ուժեղ հարված հասցրեց ծխախոտագործ գյուղացիների շահերին:

Լիբերալ բուրժուազիայի օրգան՝ Սաութ ալ-Ահրար» վերթը 1935 թ. հունվարի 23-ի համարում ալդ առթիվ գրել է. «Միախոտի մշակումը և զլանակների արտադրությունը սիրիացու կյանքի համար վերջին ամենամեծ աղբյուրն էր: Երկաթուղիները և ավտոմոբիլային ճանապարհները, նավահանգիստները, մաքսատունը և այլն վաղուց հանձնված են արտասահմանյան մոնոպոլիաներին: Այժմ հաշիվը բոլորվեց: Միախոտի մոնոպոլիան արտասահմանյան ընկերություններին հանձնելով՝ սիրիացին կորցնում է եկամտի վերջին աղբյուրը³⁵»:

Այս ընկերությունը իր ձեռքումն ամուր պահում էր գյուղացիական մանր արտադրությունը: Ըստ «Ռեժի»-ի սահմանած կանոնների, գյուղացին ծխախոտ արտադրելու համար թույլտվություն պիտի ստանար ընկերությունից: Նա պարտավոր էր ծխախոտի բերքը վաճառել միայն «Ռեժի» ընկերությանը և նրա սահմանած գներով: Ընկերությունը որոշում էր ցանքի չափը, վաճառքի գները և այլն: Հետևաբար, «Ռեժի»-ից էր կախված ժողովրդական լայն մասսաների՝ ծխախոտագործ ֆելլահների, բանվորների, տեղական մանր առևտրականների բախտը:

«Ռեժի» մոնոպոլիատական ընկերությունը չափազանց ցածր գներով գյուղացուց գնված ծխախոտը տասնապատիկ թանկ գներով վաճառում էր շուկայում: «Ռեժի»-ն «իր 120—130 դահեկան ծախած ծխախոտը հազիվ 4—5 դրշի կգներ»³⁶ գրել է «Առաքաձակ» վերթը³⁷:

Ֆրանսիական մանդատի շրջանում էական փոփոխություններ տեղի ունեցան հաղորդակցության ճանապարհների շինարարության բնագավառում: Մանդատի տարիներին, գլխավորապես ստրա-

տեղիական նպատակներով, իսկ հետագայում նաև երկրի ներքին շուկան և տրանզիտային ճանապարհները բարելավելու ցանկությանը, ֆրանսիացիները զգալիորեն զարկ տվին խճուղային ու երկաթուղային շինարարությանը:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս ճանապարհների կառուցման համար աշխատավոր ժողովրդին հարկադրել են ձրի աշխատել³⁸: Քացի այդ, բնակչությունը վճարել է շինարարության ծախսերի մի մասը, իսկ մնացած մասը ծածկվել է Օսմանյան կայսրության պարտքերի Սիրիայի բաժնի վճարումներից: Երկրի ավտոտրանսպորտը գտնվում էր երկու խոշոր անգլիական և ֆրանսիական մոնոպոլիատական ընկերությունների ձեռքում:

Սիրիայի տնտեսական կյանքին մեծ հարված հասցրեց նաև ֆրանսիական գաղութարարների վալյուտային քաղաքականությունը: Մանդատային իշխանությունները Սիրիայում լիկվիդացիայի ենթարկեցին ոսկու վալյուտայի վրա հիմնված թուրքական դրամական սիստեմը և երկրից դուրս տարան մեծ քանակությամբ հնչուն ոսկի: Մուսսալիի հաշիվներով 1922—1933 թթ. ֆրանսիացիները Սիրիայից արտահանել են 6 միլիոն թուրքական ոսկի փող³⁹: Նրանք թուրքական վալյուտան փոխում են թղթե արժեքազրկված ֆրանկով: Սիրիա-լիբանանյան բանկոտների բաց թողումը իր ձեռքն էր վերցրել ֆրանսիական կապիտալին պատկանող Սիրիայի և Լիբանանի բանկը: Չնայած այս բանկի մասնավոր բնույթին, նրան իրավունք էր տրված գործելու պետական բանկի ֆունկցիաներով: Այս բանկը վճուհական դեր է խաղացել ֆինանսական գործունեության բոլոր ասպարեզներում. հսկել է դրամական և վարկային սիստեմի վրա, վերահսկել է պետական բյուջեի գործունեությունը: Սիրիական բանկոտները չէին ապահովված ոսկով: Սիրիական լիբանի կուրսը ուրիշ երկրների վալյուտայի նկատմամբ սահմանվել էր ֆրանսիական ֆրանկի կուրսի միջոցով և ֆրանկի արժեքազրկմանը զուգընթաց արժեքազրկվում էր նաև սիրիական լիբան, որով երկրում առաջանում էր ֆինանսական սուր ճգնաժամ:

Սիրիայի պետական բյուջեի մեծ մասը հատկացվում էր գերագույն կոմիսարի ապարատի, բանակի և ոստիկանության ծախսերի

³⁵ «صوت الاحرار» بیروت، ۲۳ يناير ۱۹۳۵

³⁶ «Առաքաձակ», Կ. Պոլիս, 1912, № 85:

³⁷ 100 դահեկան=100 գուրուշի=1 լիբանի:

³⁸ Himadeh, նշված աշխատությունը, էջ 186:

³⁹ Moussali, նշված աշխատությունը, էջ 61:

համար: Դա պարզ երևում է 1933 թ. պետական բյուջեի հետևյալ աղյուսակներից⁴⁰:

եկամուտներ	Միլիոններ
Ուղղակի հարկեր	27,10%
Մաքսային կուտակումներ	39,20%
Երկրորդական եկամուտներ	24,20%
Ակցիզներ և այլ կուտակումներ	9,50%
Կառավարչություն	28,90%
Բանակ և ոստիկանություն	31,80%
Հասարակական աշխատանք	13,30%
Օսմանյան սլավոնների վճարում	3,20%
Լուսավորություն	6,10%
Առողջապահություն	3,10%
Գյուղատնտեսություն	2,60%

Իսկ Սիրիայի 1936 թ. բյուջեում 18,277 հազար չիրա ընդհանուր գումարից գերազույն կոմիտարի ապարատի և բանակի պահանջանքի համար ծախսվել է 7,486 հազար չիրա, կամ բյուջեի 40 տոկոսը⁴¹:

Սիրիայի անտեսությունը գաղութային բնույթի մասին էր վկայում նաև ներմուծման մշտական գերակշռումը արտահանման նկատմամբ: Սիրիայի արտաքին առևտրի բալանսը մշտապես պասիվ էր: Բավական է նշել, որ միայն Ֆրանսիայից Սիրիայի ներմուծումը 1934 թ. հինգ անգամ ավելի էր, քան արտահանումը:

Սիրիան ներմուծում էր գլխավորապես տեքստիլ ապրանքներ, մեքենաներ, նավթամթերքներ, սննդամթերքներ, հատկապես շաքար և այլն: 1926 թ. մայիսի 25-ի դեկրետով Սիրիա ներմուծվող սովետական ապրանքների վրա ամենաբարձր մաքսն էր զրբվում: Այդ պատճառով էլ մինչև 1933 թ. սովետա-սիրիական առևտուրը պատահական բնույթ էր կրում: Սակայն, 1933 թ. սկսած սովետա-սիրիական առևտրական փոխհարաբերությունները մրտնուծ են նոր փուլի մեջ և առևտուրը նրանց միջև ընդլայնվում է: Սովետական Միությունը Սիրիային վաճառում էր գյուղատնտեսական մեքենաներ, տեքստիլ արտադրանքներ, նավթամթերք ու քիմիական նյութեր և փոխարենը գնում բուրդ:

Ֆրանսիական մանդատի ժամանակաշրջանում ծանր էր Սիրիայի գյուղի և քաղաքի աշխատավորների տնտեսական վիճակը: Տնտեսագետ Ադնան Ֆարրայի հաշիվներով 1936 թվականին ազգային եկամտի 14,12 տոկոսը բաժին է ընկել ֆեոդալական ճնշման տակ ապրող 240 հազար գյուղացիական ընտանիքներին, 10,56%-ը արդյունաբերական և գյուղատնտեսական բանվորներին, զինվորներին, ժանդարմերիային և մանր հողատերերին, 10,56%-ը՝ ազատ պրոֆեսիայի տեր մարդկանց և պետական ծառայողներին, իսկ կալվածատեր-ֆեոդալները, արդյունաբերողները և բարձր պաշտոնյաները, որոնք կազմում էին բնակչության 15 տոկոսը, ստացել են ազգային եկամտի 57,06 տոկոսը⁴²: Այս կապակցությամբ պետք է նշել, որ Սիրիայում 1936—1938 թթ. ազգային եկամտից բնակչության մեկ շնչին ընկնող բաժինը կազմել է 13 ֆունտ ստերլինգ. Անգլիայում՝ 101 և ԱՄՆ-ում 109:

Բանվորները տուժում էին ինչպես դեռևս գոյություն ունեցող միջնադարյան, այնպես էլ կապիտալիստական շահագործման մեթոդներից: Նրանք աշխատում էին հակասանիտարական պայմաններում: Աշխատանքի պաշտպանության օրենք բոլորովին գոյություն չուներ, բանվորական օրը չէր սահմանափակված և տևում էր 12—14 ժամ⁴³: Տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատող բանվորները օրական ստանում էին 40—50, կանայք՝ 15—25, երեխաները՝ 10—15 դուրուշ: Կայնորեն կիրառվում էր կանանց և երեխաների աշխատանքը: Բանվորների ստացած աշխատավարձը չէր ծածկում նրանց ապրուստի անհրաժեշտ մինիմումի կեսն անգամ:

Անմխիթար վիճակում էին նաև ֆելլահները: Երկրի բնակչության 70 տոկոսը կազմող գյուղացիությունը տառապում էր աղքատությունից, հետամնացությունից և զանազան հիվանդություններից: Ֆելլահը մշտապես մտահոգված է ամենօրյա հացի մասին, — գրել է Ժակ Վելերսը, — նրա հիմնական սննդամթերքը հանդիսացել է կորեկի և ոսպի ալյուրից թխած հացը, միայն որոշ ընտանիքներում սրան ավելանում էր մածուցը: Միսը հազվագյուտ երևույթ էր գյուղացու ընտանիքում, իսկ թեյը դեռ մուտք չէր գործել գյուղական վայրերը, այն համարվում էր շոալություն: Գյուղացու մի

⁴² Farra, p. 51.

⁴³ «Новейшая история стран зарубежного Востока», М., 1954, ч. I, стр. 316.

⁴⁰ «Страны Востока», т. I, Ближний Восток, М., 1934, стр. 252.

⁴¹ Б. М. Данциг, Сирия, 1940, стр. 75.

սենյակից բաղկացած խրճիթում ապրում էին թե՛ ընտանիքի անդամները և թե՛ անասունները⁴⁴։

Գյուղացու խրճիթում շատ քիչ էր կահ-կարասի։ Կենսական բոլոր պահանջները, ինչպես նշում է Բեյրութի համալսարանի պրոֆեսոր Դոդդը, ուտելը, քնելը, հանդիսար բավարարվում էին ուղղակի գետնի վրա։ Գյուղացիների մոտ 95% -ը քնում էր ցերեկային հագուստով⁴⁵։ Մանգատային իշխանությունների հարկային քաղաքականությունը քայքայման եզրին հասցրեց գյուղացու տնտեսությունը։

Ֆրանսիական մանդատային իշխանությունները վերացրին հարկահանության հին, Օսմանյան սիստեմը, որը հիմնված էր «աշարի» վրա և անցկացրին այսպես կոչված «հարկային ռեֆորմ», որի նպատակն էր ավելացնել հարկերից ստացվող եկամուտները, որովհետև աշարի սիստեմի ժամանակ հավաքված հարկերի զգալի մասը մտնում էր կապալառուների և հարկահավաքների գրպանը։ Այդ ռեֆորմով բնահարկը փոխարինվեց դրամահարկով և հարկի բարձր դրույքներ սահմանվեցին։ Այս միջոցառումները ուժեղացրին գյուղացիության հիմնական մասսայի շահագործումը։

Մանդատային իշխանությունների հարկային ռեֆորմի մասին «Նոր Լուր» թերթը գրել է։ «Ֆրանսիացիք Սուրիան գրավել է քիչ ատեն վերջ վերցուցած են հին տասանորդը և հարկադրած են յուրաքանչյուր գյուղի ժողովուրդը մեծ դրամ մը հատուցանելու միանվագ կերպով և հնչուն դրամ։... Գյուղացին իր ճակատին բրախնքով հասցուցած բերքը լիովին կառավարության կուտա և ասոր հակառակ տուրքի պարտքը չի կրնար վճարել։ Պարտքերը ամեն տարի վրա վրայի գալով, երբ անոնք այլևս որոշ շափի մը կը հասնին, հողերն ու ագարակները կը ծախվին⁴⁶։

Մանդատային իշխանությունները Սիրիայի ժողովրդի վրին էին փաթաթել նաև Օսմանյան կայսրության նախապատերազմյան պարտքերի ծանր լուծը։ Սիրիան պարտավոր էր վճարել ամբողջ օսմանյան պարտքերի իր բաժինը՝ 8,41% -ը, որ կազմում էր թուրքական 10,870 հազար լիրա⁴⁷։

Ֆրանսիական տիրապետության ժամանակ, ինչպես նշել է Դոդդը գյուղերում համարյա բացակայում էր բժշկական սպասարկումը։ Մոտակա բուժակի մոտ զնալու համար պահանջվում էր կես օր։ Շատ տարածված էին մալարիան և տրախոման, Ջեբել-Անսարիայի շրջանի մի շարք գյուղերում տրախոմայով վարակվածները կազմում էին բնակչության 86 տոկոսը⁴⁸։

Մանդատային ռեֆորմի տարիներին Սիրիայի սոցիալ-տնտեսական հետամնացությունն անդրադարձել էր նաև երկրի կուլտուրական վիճակի վրա։ Միանգամայն հասկանալի պատճառներով ո՛չ տեղական ֆեոդալները և ո՛չ էլ մանդատային իշխանությունները չեն զբաղվել մասսաների լուսավորության հարցերով։ Նրանք վախենում էին քաղաքական անկախության գաղափարների տարածումից մասսաների մեջ։ Բնակչության բացարձակ մեծամասնությունը անգրագետ էր։ 1931 թ. տվյալներով Սիրիայում անգրագետների թիվը հասնում էր 63 տոկոսի⁴⁹։ Գյուղական վայրերում տղամարկանց մեջ անգրագիտությունը 90 տոկոսից ավելի է եղել, իսկ կանանց մեջ անգրագիտությունը հասնում էր 100% -ի⁵⁰։

Գյուլություն ունեցող բժշկական և իրավաբանական ֆակուլտետների հիման վրա 1923 թ. հիմնվեց Սիրիայի համալսարանը։ Սակայն բարձրագույն կրթություն գլխավորապես ստանում էին հարուստների զավակները։

Այսպիսով կարող ենք ասել, որ ֆրանսիական իմպերիալիստների տիրապետության շրջանում Սիրիան շարունակում էր մնալ թույլ զարգացած ագրարային երկիր, ֆրանսիական իմպերիալիզմի հումքային կցորդը և վաճառահանման շուկան։

Գա պարարտ հող էր հանդիսանում ֆրանսիական մանդատի գեմ ուղղված ռևոլյուցիոն շարժումների ծավալման համար։

⁴⁸ S. Doodd, p. 38.

⁴⁹ Himadeh, p. 11.

⁵⁰ Ж. Велерс, стр. 226.

⁴⁴ Ж. Велерс, стр. 243.

⁴⁵ S. Doodd, A controlled experiment on rural higiens in Syria, Beirut, 1934, p. 38.

⁴⁶ «Նոր Լուր», 4. Պուխ, 30 սեպտեմբերի 1936 թ.։

⁴⁷ Гагауллин, стр. 6.

А. С. САРКИСЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ СИРИИ В ГОДЫ ФРАНЦУЗСКОГО МАНДАТА (1920—1936)

Р е з ю м е

В годы французского мандатного режима Сирия продолжала оставаться слаборазвитой аграрной страной, сырьевым придатком и рынком сбыта французского монополистического капитала. Промышленность и сельское хозяйство Сирии находились в тяжелом состоянии. При поддержке мандатных властей возросла земельная собственность помещиков. Многие представители буржуазии, крупные торговцы и ростовщики, завладев земельным участком крестьян, сами стали крупными землевладельцами.

Таможенная политика, применяемая в Сирии, оказала губительное влияние на местную промышленность и на развитие ремесел. Французские империалисты умышленно задерживали развитие национальной промышленности Сирии.

Мандатные власти, усиливая экономический и национальный гнет, всячески старались сохранить мандат и укрепить свои экономические, политические и стратегические позиции в Сирии.

THE SOCIAL AND ECONOMIC CONDITION OF SYRIA IN THE YEARS OF THE FRENCH MANDATE (1920—1936)

by A. S. SARKISSIAN

S u m m a r y

In the years of the French mandatory regime Syria continued to remain an underdeveloped agrarian country, an adjunct of raw material and a market for French monopolistic capital. The economy and agriculture of Syria was in a poor state. With the backing of mandatory authorities the land property

of the owners expanded. Most representatives of the bourgeoisie, big merchants and usurers taking possession of peasants' plots, turned into big landowners.

The policy of tariffs applied to Syria proved catastrophic to local economy and the development of trades. The French imperialists premeditatingly restricted the development of Syria's economy.

Intensifying their economic and national oppression the mandatory authorities were out in their efforts to maintain the mandate by all means and thereby strengthen their own economic, political and strategic in positions Syria.

Հ. Խ. ՔՈՓՈՐՉՅԱՆ

ԼԻՔԱՆԱՆԻ ԱՐԱՔ ԵՎ ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏՆԵՂ
ՊԱՅՔԱՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՆԲՔՍԻ ՀԱՄԱՐ
1945—1946 թթ.

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զգալի վերելք ապրեց Լիբանանի արդյունաբերությունը: Բեկյուֆում, Տրիպոլիում և այլ քաղաքներում ստեղծվեցին ազգային, օտարերկրյա և խառն կապիտալով բաղմամբիվ ձեռնարկություններ, նպաստելով բանվոր դասակարգի թվական և որակական աճին: Օբյեկտիվորեն, արդյունաբերական բնակչության աճը պրոպրետիվ երեվոյթ է: «Նա պոկում է բնակչությունը հեռավոր, հետամնաց, պատմության կողմից մոռացված խուլ անկյուններից և ներգրավում է նրան արդի հասարակական կյանքի հորձանուտի մեջ: Նա բարձրացնում է բնակչության գրագիտությունն ու նրա գիտակցականությունը, պատվաստում է նրան կուլտուրական սովորություններ ու պահանջմունքներ»¹:

Անցնելով ազգային-ազատագրական շարժումների փառապանծ ուղի, Լիբանանի աշխատավորության առաջավոր խավերը կոփվեցին, հասան ազգային և դասակարգային շահերի բարձր գիտակցության: Նրանք իրենց հայրենիքի նորաստեղծ անկախության ամրապնդման երաշխիք էին համարում սոցիալական և տրնտեսական հարաբերությունների վերափոխումը, իսկական ղեմուկրատական կարգերի հաստատումը: Նրանք պահանջում էին վերացնել ֆեոդալական մնացուկները, լուծել ազրարային հարցը, բարձրացնել ժողովրդական մասսաների կյանքի ու կուլտուրայի մակարդակը:

Իրենց դասակարգային շահերի համար մղվող պայքարում, աշխատավորական մասսաները ղեկավարվում էին Լիբանանի Կոմունիստական պարտիայի Ազգային խարտիայի սկզբունքներով, որոնցում առանձնահատուկ ձևով ընդգծված էր աշխատանքային կողքը ստեղծելու անհրաժեշտությունը, կողքը, որը պաշտպաներ աշխատավորների «իրավունքները, կարգավորելով նրանց և ձեռնարկատերերի փոխհարաբերությունները արդարության և ազգային շահերի հիման վրա»²:

Աշխատանքային կողքըսի համար պայքարը կազմում է Լիբանանի բանվոր դասակարգի՝ դասակարգային շահերի և սոցիալական իրավունքների համար մղած պայքարի մի փայլուն էջը:

* *
*

Մինչև 1946 թ. Լիբանանում գոյություն չունեցող աշխատանքային կողքը և նրա բացակայության պայմաններում դաժան բնույթ էր կրում աշխատավորների շահագործումը:

Ապավինելով պետական օրգանների պաշտպանությանը, ձեռնարկատերերը հաղար ու մի ձեռքով ճնշում էին գործադրում աշխատավորների վրա: Այդ տեսակետից բնորոշ է այն, որ նրանք բանվորներին և ծառայողներին արհեստականորեն բաժանել էին երկու խմբի՝ մնայուն և ժամանակավոր աշխատավորների: Մնայունները, որոնք առհասարակ կազմում էին տվյալ ձեռնարկության կամ հիմնարկի ընդհանուր աշխատավորների շնչին տոկոսը, աշխատում էին օրական ութ ժամ, իրավունք ունեին տարեկան միամսյա կամ տասնհինգօրյա արձակուրդի, վարձատրվում էին հիվանդության պատճառով բացակայած օրերի համար և ըստ աշխատանքային ստաժի հատուցում էին ստանում ձեռնարկությունից հեռանալու կամ հեռացվելու դեպքում: Օտարերկրացիները, որոնք բոլորն էլ առանց բացառության համարվում էին մնայուն աշխատողներ, վայելում էին զգալի շահով ավելի արտոնություններ, քան միևնույն խմբի լիբանանցիները: Վերջիններս, իրենց հերթին բաժանված էին Ա և Բ խմբերի, որոնք իրարից տարբերվում էին

² K. h. Bakdash, La Charte Nationale du Partii Communiste en Syrie et au Liban, Beyrouth, 1944, p. 47.

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 746—747:

վարձատրուիթյան շահերով³։ Աշխատավորներին այդ կարգի դասակարգման ենթարկելու հնարանքը, որը իբրև կանոն գործադրում էին օտարերկրյա կապիտալին պատկանող ձեռնարկությունները, հիմնականում հետապնդում էր մի նպատակ՝ ստեղծել բանվորական արիստոկրատիա աշխատավորների միասնությունը պառակտելու համար։

Փամանակավոր բանվորներն ու ծառայողները իրավունք չունեին տարեկան արձակուրդի, չէին վարձատրվում հիվանդություն պատճառով բացակայած օրերի համար, հատուցում չէին ստանում ձեռնարկությունից հեղանալու կամ հեռացվելու դեպքում, չէին օգտվում ութժամյա աշխատանքային օրվա իրավունքից։ Արդյունաբերական օբյեկտներում նրանց աշխատանքն առհասարակ սկըսվում էր արեղակի ծագման հետ և վերջանում արեղակի մայրամուտին։ Դրբբայեի մետաքսի գործարանում բանվորներն աշխատում էին 12 ժամ⁴, երկաթուղու մոնոպոլիայի բանվորները 11—14⁵, իսկ մանր տիպի ձեռնարկություններում գործատերերը ինքնակամ կերպով աշխատանքային օրը երկարաձգում և հասցնում էին 16 ժամի։

Այդ ուժասպառ աշխատանքի համար նրանք ստանում էին ողորմելի վարձատրություն, որը, պատերազմի առաջացրած տրեսեսական առանձնահատուկ պայմաններում, չէր կարող բավարարել աշխատավորական ընտանիքի միևնույն կարիքները։ Ժիրայր Մովսիկյանի գույպայի գործարանի բանվորները օրական ստանում էին 120—175 լիբանանյան դահեկան⁶, (100 դահեկան կամ պիաստրը = 1 լիբանան), Դրբբայեի մետաքսի գործարանի բանվորները՝ 150—200⁷, Բեյրութի ջրի հայթայթման մոնոպոլիայի բանվորները՝ 300—400⁸։ Կառավարությանն ուղարկված իրենց բողոքագրում, Բեյրութի բանվորները իրավացիորեն նշում էին. «Ներկա պայմաններու տակ, աշխատավորի մը ամսականը հազիվ թե բավարարե անոր տաս օրվա ծախսերուն»⁹։

3 «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 28 հունիսի 1945 թ.։

4 «Արարատ», Բեյրութ, 28 ապրիլի 1945 թ.։

5 Նույն տեղում, 23 հունիսի 1945 թ.։

6 «Ժողովուրդի ձայն», 21 հուլիսի 1945 թ.։

7 Նույն տեղում 29 ապրիլի 1945 թ.։

8 Նույն տեղում, 10 ապրիլի 1945 թ.։

9 Նույն տեղում, 10 ապրիլի 1946 թ.։

Աշխատավարձերի իրոք անբավարար լինելը պարզ երևում է թեևուզ մթերքների գներից, որոնք օրավուր աճում էին։ 1945 թ. երկրորդ կիսամյակում 1 կգ սպի գինը 45-ից բարձրացել էր 80 դահեկանի, 1 կգ սպիտակ լոբին՝ 135-ից 175-ի, 1 կգ ալյուրը՝ 65-ից 100-ի, 1 կգ միսը՝ 250-ից 400-ի, 1 կգ յուղը՝ 600-ից 900 դահեկան և այլն¹⁰։ Նույնպիսի աճ էին արձանագրել նաև լայն սպառման ապրանքների գները։ Տնտեսագետ էլիաս Գաննաթեն ճիշտ է նկատում, որ աշխատավարձերի «գնողական կարողությունը... գնալով նվազում էր այն աստիճան, որ աշխատանքային եկամուտը այլևս չէր համապատասխանում կյանքի անհրաժեշտ միևնույնիսին, չէր ապահովում աշխատավորի գոյությունը»¹¹։

1944—1945 թթ. նոր հարկային օրենսգրությունը առավել ևս վատթարացրեց ժողովրդական մասսաների տնտեսական վիճակը։ Տիրապետող դասակարգի հարկային քաղաքականության հակաժողովրդական բնույթը ձաղկում էին անգամ առանձին բուրժուական դործիչներ։ Դրանցից հրաղարակախոս Ժորժ Նակիլաշը գրում էր, որ «գործի մարդկանց օլիգարխիան» փորձում էր «հարկային դաժան քաղաքականություն» կիրառել¹²։ Բավական է նշել, որ 1945 թ. պետական բյուջեի ընդհանուր մուտքերի 54.9 տոկոսը զոյացել էր անուղղակի և 12.5 տոկոսը միայն ուղղակի հարկերից¹³։ Անուղղակի հարկերի այդպիսի աճը նշանակում էր «գերբեռնավորել միջին խավերը և բեռնաթափ անել հարուստ խավերին, հասարակ ժողովրդի և բուրժուազիայի միջև ստեղծելով այնպիսի խրամատ, որը ունույնցիան միայն կկարողանար լցնել»¹⁴։

Փակուղուց ելք որոնելով, արաբ և հայ աշխատավորները համախմբվում էին կրթանանի արհմիությունների ֆեդերացիայի դրոշի շուրջը։

* *
*

1945—1946 թթ. կրթանանում հզոր վերելք ապրեց արհմիութենական շարժումը։ 1945 թ. սկզբին երկրում գործում էին միայն

10 Նույն տեղում, 18 նոյեմբերի 1945 թ.։

11 E. Gannagé, La Réforme des Impôts directs au Liban et en Syrie, Beyrouth, 1947, p. 16.

12 „L'Orient“, Beyrouth, 23 Novembre 1944.

13 E. Gannagé, La Réforme des Impôts, p. 441.

14 Նույն տեղում, էջ 627։

18 արհեստակցական միություններ, իսկ մի տարի հետո դրանց թիվը բարձրացել է 75-ի¹⁵: 60 ամենակարևոր արհմիություններ, որոնք իրենց շարքերում հաշվում էին ավելի քան 30.000 բանվորներ ու ծառայողներ, համախմբված էին կիբանանի արհմիությունների ֆեդերացիայի շուրջը: Մնացյալ 15-ը կազմում էին կաթոլիկական [«Կաթոլիկ աշխատավոր երիտասարդություն»] և ալդպես կոչված «աղատ» կամ կառավարական արհմիություններ, որոնք աշխատավորների շահերը պաշտպանելու փոխարեն սպասարկում էին տիրապետող դասակարգին:

Վիճակագրական տվյալներ չկան տարբեր արհմիություններում գործող հայ աշխատավորների թվի վերաբերյալ, սակայն, հնարավոր է որոշ հետևություններ անել հարակից փաստերի հիման վրա:

Հայտնի է, որ կիբանանի հայերի [այն ժամանակ շուրջ 100.000] համարյա 70 տոկոսը ապրում էին Բուրջ-Համուդում և նրա մերձակա թաղերում, որտեղ տեղադրված էին ազգային, ինչպես նաև օտարերկրյա կապիտալին պատկանող զգալի թվով արդյունաբերական ձեռնարկություններ: Մար-Մխայրիում գործում էին Բեյրութի էլեկտրականության և էլեկտրաբարձի մոնոպոլիաների գլխավոր արհեստանոցները, Խանամիրյան-Գեղեկյան կոշիկի գործարանը, Աշրաֆիայում՝ ծխախոտագործական Ռեժի մոնոպոլիայի գործարանները, Խալիլ Բեդեհում՝ Չելբերի եղբայրների հրուշակեղենի և Թաշշյանի գորգագործական գործարանները, Բուրջ-Համուդում՝ նավթային Շել, Սոկոնի, Շամմաս և Նասիոնալ մոնոպոլիաների նավթագոման կայանները, ինչպես նաև Պոլիկաբարոսի, Նաջարյանի սարքաշինական, Չաթալբաշյանի կաշեգործական, Ապրոյանի տեքստիլ, Մովիկյանի զուլպայի գործարանները և հայերի պատկանող կոշկեղենի, զոստեղենի, սովարաթղթի, գորգի պատրաստությանը պատկանող զգալի թվով այլ ձեռնարկություններ: Այդ թաղերի նկատմամբ կապիտալիստների շահագրգռվածությունը բացատրվում է նրանով, որ դրանց քնակիչների հիմնական մասան կազմում էր աշխատավորությունը:

Սփյուռքահայ պայմաններում, հայ կապիտալիստը միշտ էլ դերադասել է գործ ունենալ ոչ թե օտարազգի, այլ հայ աշխատավորների հետ: Դա բացատրվում է նրանով, որ հայ կապիտալիստի համար անհամեմատ ավելի հեշտ է հայ աշխատավորներին շահա-

գործելը: Նրանց հնազանդության մեջ պահելու նպատակով, հայ կապիտալիստը կարող է ոչ միայն շարաշահել նրանց ազգային պատկանելիության զգացումը, այլև, անհրաժեշտ դեպքում, բարոյական ճնշման ենթարկել նրանց քաղաքական, ազգային, կուլտուրական այն բազմապիսի կազմակերպությունների միջոցով, որոնց ծնողն ու սնուցողն է ինքը, հայ կապիտալիստը:

Հայ աշխատավորներն առաջավոր դիրքեր ունեին մի շարք արհմիությունների վարչական օրգաններում: Նավթային ընկերությունների արհմիության վարչության անդամ էին Վոամ Պողյանը, Հարություն Սեոկյունյանը¹⁶, Մեխանիկ բանվորների՝ Բյուզանդ Բանջարչյանը, Պարզև Էռջուրյանը, Կարապետ Մարգարյանը¹⁷, գրաշարների՝ Հովսեփ Գրբրդյանը¹⁸, կաշեգործների՝ Փամոս Թրբթրյանը, Հակոբ Շիրինյանը, Պողոս Ավանյանը¹⁹, կոշկակարների՝ Գրիգոր Չաղբրչյանը, Պարույր Բաղդադյանը, Սիմոն Գրիգորյանը, Սողոմոն Քեշիշյանը, Արմենակ Բուրսայանը²⁰, դերձակների՝ Սեֆոնիկ Ժամկոչյանը, Անդրանիկ Էմոյանը, Անդրանիկ Գեմիրչյանը, Սահակ Պապիկյանը²¹, ատաղձագործների՝ Ասատուր Ասապը, Արիս Աջապահյանը, Եզնիկ Տոնապետյանը, Հայզավակ Մամբրչյանը²²: Կարող ենք անվարան պնդել, որ հայ աշխատավորները պատասխանատու դիրքեր ունեին նաև ուրիշ արհմիություններում:

Ուշագրավ է, որ վերոհիշյալ արհմիությունների վարչական կազմում հայերին էր հատկացված նախագահի, բարտուղարի և դանձապահի տեղակալի պաշտոնները և, երկրորդ, որ հայերը այդ վարչություններում զբաղեցնում էին աթոռների թվի 1/4-ից մինչև 1/3-ը: Արդ, ի նկատի ունենալով, որ ընկալյալ սովորության համաձայն վարչական աթոռների թիվը որոշվում էր հիմք ընդունելով տվյալ արհմիության անդամների թիվը, դժվար չէ եզրակացնել, որ նշված արհմիություններում արաբներից հետո հայերը կազմում էին հիմնական մասսան, հավանաբար 1/4-ից մինչև 1/3-ը: Այսպես, քանի որ մեխանիկների վարչության 11 աթոռներից երեքը գրավել էին հայերը²³, մի փոքր վերապահություններ

16 «Ժողովուրդի ձայն», 13 մարտի 1946 թ.:

17 Նույն տեղում, 1 մայիսի 1946 թ.:

18 Նույն տեղում, 19 մայիսի 1945 թ.:

19 Նույն տեղում 16 հունիսի 1945 թ.:

20 Նույն տեղում, 15 հունվարի 1946 թ.:

21 Նույն տեղում, 26 մարտի 1946 թ.:

22 Նույն տեղում, 8 փետրվարի 1946 թ.:

23 Նույն տեղում, 1 մայիսի 1946 թ.:

¹⁵ „Temps Nouveaux“, Moscou, 1 juillet 1946.

պետք է հետևեցնել, որ այդ արհմիութեան 1500 անդամներից²⁴ շուրջ 300—350-ը հայեր էին:

Առանձին հայ գործիչներ ոչ-անկարևոր դեր էին կատարում Արհմիությունների ֆեդերացիայի ղեկավարության մեջ: Գրանցից Կարապետ Ճղնավորյանը, որը ֆեդերացիայի ղեկավար օրգանի անդամ էր, 1945 թ. Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի Փարիզի կոնգրեսի լիբանանյան պատվիրակության անդամ ընտրվեց Մուստաֆա էլ-Արիսի, Ժորժ Ֆրեհայի, Ժորժ Մուկարզիլի և Ալյար Զիարեի հետ միասին:

* *
*

Աշխատանքային կողմերի համար արաբ և հայ աշխատավորության պայքարը ղեկավարեց Արհմիությունների ֆեդերացիան: Այդ պայքարի սպիտակագույն տվեց 16 արհմիությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը, որը ֆեդերացիայի հրավերով դեմարվեց 1945 թ. փետրվարի 2-ին, Բեյրութի արհմիությունների տանը: Առաջնորդվելով Ազգային խարտիայի սկզբունքներով, այդ խորհրդակցությունը ընդունեց մի շարք որոշումներ բանվորների և ծառայողների աշխատանքի պայմանները բարելավելու ուղղությամբ: Այդ որոշումների հիման վրա, Արհմիությունների ֆեդերացիայի նախագահը հրապարակեց մի հայտարարություն, որով կառավարությունից պահանջում էր ա) անհապաղ կազմել և պառլամենտի բնարկմանը հանձնել աշխատանքային կողմերը, բ) բանվորների և ծառայողների աշխատավարձի հավելում կատարել 1944 թ. հունվարի 1-ից, գ) աշխատավորների օգտին բարեփոխել եկամտահարկի օրենքը, դ) մերժել տնտեսների պահանջը բնակարանային վարձերի օրենքը փոփոխելու մասին, ե) ղեկավար գնեցող զգեստեղենի և մթերքների վաճառք կազմակերպել աշխատավորների շրջանում և այլն²⁵:

Այդ հայտարարությունը խոր ոգևորությամբ դիմավորվեց արաբ և հայ աշխատավորության կողմից: Բեյրութի և մյուս քաղաքների աշխատավորները հանդես եկան ֆեդերացիայի պահանջներին հավանություն հայտնող ցույցերով և գործադուլներով:

²⁴ „Temps Nouveaux“, 1 Juillet 1946.

²⁵ ١٩٤٥ ٢٤ ازار «صوت الشعب» بيروت

Առանձնապես ուշադրավ էր Ռեժի ծխախոտական մոնոպոլիայի ավելի քան 2.000 բանվորների և ծառայողների գործադուլը: Նշելով, որ Ռեժիի օտարերկրյա կապիտալիստները անմարդկային ձևով են շահագործում լիբանանցի աշխատավորներին, գործադուլի ղեկավարները Ռեժիի բոլոր աշխատավորների անունից հավանություն հայտնեցին ֆեդերացիայի պահանջներին: Բացի այդ, մինչև աշխատանքային կողմերի ստեղծումը, Ռեժիի աշխատավորների վիճակը բարելավելու նպատակով, նրանք ձևակերպեցին մի շարք պահանջներ, ա) աշխատանքային ութժամյա օր հաստատել Ռեժիի բոլոր հիմնարկներում, բ) աշխատավարձի հավելում կատարել քառ 1944 թ. օրենքի, գ) վերջ տալ ժամանակավոր աշխատավորի դրուժյանը և բոլոր բանվորներին ու ծառայողներին դիտել որպես մշտական աշխատողներ, դ) պաշտոնապես իրավունք տալ ձեռնարկության աշխատավորներին արհմիություն կազմելու, ե) ստեղծել աշխատավորների և մոնոպոլիայի ներկայացուցիչներից բնիչ հանձնաժողով, որը զբաղվեր կողմերի վիճելի հարցերի կարգավորումով²⁶:

Ռեժիի կապիտալիստները, որոնք սկզբում պատրանքներ էին անուցում կաշառքի, սպառնալիքի և այլ միջոցներով գործադուլը պառակտելու և այն ընկճելու մասին, ի վերջո, հասան այնտեղ, որ հաշիվները կեղծեցին՝ ցույց տալու համար, որ շեն շահում և հետևաբար, այդ պահանջները բավարարելու դեպքում ընկերությունը կարող է լուրջ ձեռնամուկ ասլիք: Այդ կեղծիքը, սակայն, որևէ դեր չկատարեց: Գործադուլը շարունակվեց մինչև որ կառավարությունը, ցույցերի և գործադուլների առաջն առնելու նպատակով, հավաստիացրեց, թե պառլամենտը՝ Արհմիությունների ֆեդերացիայի պահանջները քննարկելիս նկատի կունենա նաև Ռեժիի աշխատավորների վիճակը²⁷:

1945 թ. մարտի 23-ին Լիբանանի պառլամենտը որոշում ընդունեց ֆեդերացիայի պահանջները բավարարելու մասին: Ստեղծ-

²⁶ «صوت الشعب» ٢٤ ازار ١٩٤٥

²⁷ Նույն տեղում: Ըստ այդ թերթի տվյալների, 1944 թ. բեյրութում Ռեժին շահել է 15.000.000 լիբանանյան լիրա, իսկ այդ մի տարում ձեռնարկության բոլոր բանվորների և ծառայողների աշխատավարձը եղել է 1.440.000 լի: Աշխատավարձերի 25 տոկոս հավելում կատարելու դեպքում, այդ դեմարք կհասներ 1.800.000-ի, իսկ աշխատավորների բոլոր տնտեսական պահանջները բավարարելու դեպքում՝ 1.920.000-ի, այսինքն աշխատավորներին ավելի կարվեր 520.000 լի: Երբ մի շնչին դեմար էր մոնոպոլիայի ստացած շահույթի համեմատությամբ:

վեց աշխատանքային կողերսի նախագծի հանձնաժողով, որը, սակայն, ինչպես ցույց տվեց նրա աշխատանքների ընթացքը, ամենեին էլ չէր կամենում գործը տեղից շարժել: Որոշվեց բոլոր բանվորներին և ծառայողներին 1944 թ. մայիսի 1-ից աշխատավարձի հավելում տալ հետևյալ ձևով. 25 լ. լիքա ամսավճար ստացողներին 30%, 26—50 լ.՝ 25%, 51—75 լ.՝ 22%, 76—100 լ.՝ 20%, 101—150 լ.՝ 15%, 151-ից բարձր՝ 12%²⁸: Սակայն, կապիտալիստները մերժեցին այդ որոշումը գործադրել, իսկ կառավարությունը... չկարողացավ այն պարտադրել նրանց: Բարեփոխվեցին եկամտահարկի օրենքի որոշ հոդվածները, սակայն, այդ բարեփոխումն այնքան աննշան էր, որ վերջին հաշվով հավասարվեց ոչինչ չփոխելու հետ: Վարձերի օրենքը փոփոխվեց տնտեսերին ձեռնառու ձևով, իսկ ինչ վերաբերում է զեղչված գներով զգեստ և մթերք վաճառելուն, գործը ձախողվեց հենց վաճառքի պրոցեսում շարձահողների կողմից:

Արհմիությունների ֆեդերացիայի պահանջների այդպիսի տապալումը խոր վրդովմունք պատճառեց արաբ և հայ աշխատավորներին, նրանց մղելով բողոքի ելույթների: Ապրիլի 6-ին Բեյրութի ջրի հայթայթման մոնոպոլիայի բանվորները գործադուլ հայտարարեցին, պահանջելով ա) աշխատավարձի հավելում ըստ պառլամենտի որոշման և, բ) պետական պաշտոնյաների ստատուսի կիրառումը նաև իրենց նկատմամբ²⁹: Ապրիլի կեսերին գործադուլի դիմեցին նաև Գրբբայեի մետաքսի գործարանի աշխատավորները, պահանջելով աշխատավարձի հավելում, ութժամյա աշխատանքային օրվա սահմանում և «մարդկային վերաբերմունք» իրենց նկատմամբ: Նրանք, կառավարությանը ուղղված իրենց բողոքում, գրում էին. «Օրական աշխատում ենք 12 ժամ: Աշխատավորների ձնշող մեծամասնությունը ստանում է 150—200 և մի քանիսը միայն 350 լիբ. դահեկան օրավարձ: Չնայած, դա շատ չնչին վարձատրություն է, սակայն, ձեռնարկատերերը մեղ ստիպում են վճարել մեքենաների թերության հետևանքով առաջացած վնասները: Նրանք ծեծում են բանվորներին...»³⁰: Տակավի՛ն ոչ միայն Գրբբայեի աշխատավորները միամիտ ակնկալություններ էին կապում կառավարության միջամտության հետ: Սակայն, այդ

պատրանքը խորտակվեց հենց նույն Գրբբայեի գործադուլավոր բանվորների խոշտանգումով: Ձեռնարկատերերի պահանջով, սուտիկանությունը գործարանից բռնի ուժով դուրս նետեց գործադուլավոր կանանց և կալանքի վերցրեց մի շարք համարձակ բանվորների...³¹:

Աշխատավորության բողոքի ելույթները նպաստեցին կողերսի նախագծման աշխատանքների զգալի արագացմանը: Մայիսի կեսերին արդեն պատրաստ էր նախագիծը: Բայց, կառավարությունը փոխանակ այն ուղղակի պառլամենտ հղելու, ներքին կարգով հանձնեց խոշոր արդյունաբերողների և օտարերկրյա մոնոպոլիաների քննարկմանը՝ անհրաժեշտ ուղղումներ մտցնելու համար: Ամբողջ մի ամիս դռնից դուռ, ձեռից ձեռ անցնելուց հետո, մանավանդ նավթային Շելլ մոնոպոլիայի կապիտալիստների մտքբաժ «ուղղումներից» հետո, նախագիծը զրկվեց աշխատավորների և ձեռնարկատերերի միջև արդար իրավարարի դերից, այլանդակվեց և դարձավ անմարդկային շահագործումը օրինականացնող մի փաստաթուղթ: Վերանայված վարիանտում որոշ հոդվածներ վերաշարադրված էին այնպիսի ճարպիկ ձևով, որ դրանց օգտագործումով ձեռնարկատերերը կարող էին հեշտությամբ աշխատանքային ժամերը երկարաձգել, անցանկալի բանվորներին առանց ստաժային հատուցման աշխատանքից հեռացնել, անչափահասների և կանանց վնասակար ցիխերում աշխատացնել և այլն: Բացի այդ, աշխատավորներին դատական սպառնալիքով արգելվում էր քաղաքական գործունեություն ունենալ, գործադուլ կազմակերպել, ցույցերի մասնակցել...: Հրապարակախոս նսուլին դիպուկ ձևով նշել է, որ այդ կարգի նախագծից «օսմանյան տիրապետության հոտ է բուրում...»³²:

Այնուամենայնիվ, կառավարությունը աշխատանքային կողերսի նախագիծը այդ վիճակում ուղարկեց պառլամենտ, որը, սակայն, վախճնարով աշխատավորական շարժումներից, խոհեմություն համարեց վերադարձնել այն, նորից վերանայելու: Արհմիությունների ֆեդերացիայի, խոշոր արդյունաբերողների և մոնոպոլիաների ներկայացուցիչներից կազմվեց նախագծի վերանայման հատուկ հանձնաժողով, որն իր աշխատանքներն սկսեց հու-

²⁸ «Ջարթոնք», Բեյրութ, 17 մարտի 1945 թ.:

²⁹ «Ժողովուրդի ձայն», 10 ապրիլի 1945 թ.:

³⁰ «صوت الشعب» نيسان ٨ ١٩٤٥

³¹ «صوت الشعب» نيسان ١٢ ١٩٤٥

³² «بيروت» بيروت ايار ٢٨ ١٩٤٥

նիսի վերջերին: Հանձնաժողովի աշխատանքները ամենևին էլ հարթ չէին ընթանում: Կապիտալիստները անտեղի ձգձգում էին նրա նիստերը, ճնշում գործադրում ֆեդերացիայի ներկայացուցիչների վրա: Գեմոկրատական մամուլը արձագանքում էր վերանայման աշխատանքներին, հասարակայնության դատաստանին հանձնում աշխատավորության կենսական շահերի դեմ նյութավոր դավերը: Առանձնապես «Սաուի աշ-Շաբբը» խտորեն բնագատում էր կառավարությանը, մերկացնում նրա օտարերկրյա մոնոպոլիաների օգտին գործադրած մեքենայությունները՝ աշխատանքային կողմից հարցում³³:

Այդ բոլորը լրջորեն անհանգստացնում էին աշխատավորներին, նրանց նորից մղում բողոքի ելույթների: Առաջինը ասպարեզ իջան երկաթուղու և նավահանգստի բանվորները: Նրանց գործադուլը, որը տեղի շուրջ երկու շաբաթ, պակաս կատարյալ հաջողություններ: Համառ սակարկելուց հետո, մոնոպոլիստական ընկերությունները, ի վերջո, համաձայնվեցին գոհացում տալ բանվորների պահանջներին: Երկաթուղու և նավահանգստի բոլոր օբյեկտներում հաստատվեց ութամյա աշխատանքային օր: Ընտանիքով ծանրարեւոնված լինելու համար տրվող օգնությունը հասցվեց պետական պաշտոնյաների ստացած օգնության չափին: Իրավունք ձեռք բերվեց հատուցում ստանալու աշխատանքից հեռանալու կամ հեռացվելու դեպքում: Մինչև նոր կարգադրությունը դադարեցվեց 1944 թ. բանվորներին փոխ տրված մեկ ամսվա աշխատավարձի մաս առ մաս հտ զանձելը: Վճարվեց գործադուլի պատճառով չաշխատած օրերի աշխատավարձը և այլն³⁴:

Հաջողությունը ավարտվեց նաև Գորայի [Բուրջ Համուզ] գուպայի գործարանի բանվորուհիների գործադուլը: Նրանք, թվով 150 հոգի, աշխատավարձի հավելում էին պահանջում ըստ պառլամենտի մարտի 23-ի որոշման: Երկաշաբաթ գործադուլի ընթացքում նրանք սովորականի նման ներկայանում էին գործարան, գրավում իրենց տեղերը մեքենաների առաջ, բայց չէին աշխատում, սպասելով ձեռնարկատիրոջ պատասխանին: Նրանք դիմադրեցին ոստիկանների՝ գործարանից դուրս գալու հրահանգին, որի պատճառով նրանցից շատերը «հրացանի կոթով» խոշտանգվեցին³⁵... Գործադուլը վերջացավ (հուլիսի 12-ին) բանվորուհիների հաղթա-

նակով: Նրանք ստացան աշխատավարձի հավելում, գրամական պարգև մեկ ամսվա աշխատավարձի չափով և գործադուլի օրերի աշխատավարձը³⁶:

Առավել խոշոր ելույթ էր Հաղմիեի հյուսվածքեղենի ակցիոնների կենտրոնի գործարանի գործադուլը: Աշխատավորները պահանջում էին ա) աշխատավարձի հավելում՝ պառլամենտի որոշման համաձայն, բ) ամուսնության դեպքում բանվորուհիներին վճարել աշխատանքային ստաժի հատուցում, գ) տալ տարեկան երկաշաբաթ վճարովի արձակուրդ, դ) իրավունք տալ աշխատավորներին արհեստակցական միություն կազմելու և այլն: Չեռնարկության զլխավոր փայտեները, որոնք խոշոր դիրք ու ազդեցություն ունեին պետական օրգաններում, մերժեցին այդ պահանջները և, ավելին, գործադուլ հրահրելու մեղադրանքով մի շարք առաջավոր բանվորների վտարեցին ձեռնարկությունից: Երբ հակառակ այդ միջոցառման գործադուլը շարունակվեց, նրանք ոստիկանությանը կանչեցին ձեռնարկությունը պաշտպանելու բանվորների «խափանարարությունների» դեմ: Գործադուլավորները բախվեցին ոստիկանների հետ: Երևք բանվորներ ձերբակալվեցին: Սակայն, ի վերջո, Հաղմիեի կապիտալիստները տեղի տվեցին աշխատավորների աննկուն կամքի առաջ, համաձայնվեցին գոհացում տալ վերոհիշյալ պահանջներին, չեղյալ համարել վտարման որոշումը և բանտից ազատել արգելափակվածներին³⁷:

Գորայում և Հաղմիեում ոստիկանության գործադրած վայրագ միջոցառումները լայն արձագանք գտան մամուլում: «L'Orient» օրաթերթը գրում էր, որ աշխատավոր մարդկանց հետ «այդպես վարվելը վարկաբեկում է կիրանանը և նրա անկախությունը»³⁸: Մի շարք թերթեր հրատարակեցին Բելրույի արհիմությունների ներկայացուցիչների հայտարարությունը, որտեղ ասված էր. «Բողոքում ենք Գորայի և Հաղմիեի բանվորներին ձեռնարկում, անարդիւն և բանտարկելու դեմ: Այլևս հնարավոր չէ դիմանալ»³⁹:

Աշխատավորական այդ ելույթները նպաստեցին կողմնակալ վերանայման հանձնաժողովի աշխատանքների ախուժացմանը: Վեր

³³ «صوت الشعب» جز ٦ ١٩٤٥

³⁴ «Ժողովուրդի ձայն», 30 հունիսի 1945 թ.:

³⁵ նույն տեղում, 1 հուլիսի 1945 թ.:

³⁶ նույն տեղում, 14 հուլիսի 1945 թ.:

³⁷ նույն տեղում, 26 հուլիսի 1945 թ.:

³⁸ „L'Orient“, 24 Juillet 1945.

³⁹ «صوت الشعب» تموز ٢٣ ١٩٤٥

ջապեն օգոստոս ամսին նոր նախագիծը հանձնվեց կառավարութեանը՝ պառլամենտի քննարկմանը ներկայացնելու համար: Այդ վարիանտը համարյա անարեկեց կապիտալիստներին: Նրանց ամենից ավելի վախեցնում էին այն հոդվածները, որոնցով ստաժային հատուցում էր նախատեսվում աշխատանքից հեռացող կամ հեռացվող բանվորների և ծառայողների համար: Մինչև նախագծի պառլամենտ հասնելը, այդ կարգի պարտավորություններից ազատվելու նպատակով, նրանք սկսեցին շինծու պատրվակներով աշխատանքից հեռացնել երկարամյա ստաժ ունեցող աշխատավորներին: Այդ գործելակերպը, որն առաջին անգամ կիրառեցին Դամուրի լուցիկ գործարանի և Բեյրութի էլեկտրակառուցման մոնոպոլիայի վարչությունները, գնալով «ընդհանուր երևույթ դարձավ»⁴⁰:

Այդ գործելակերպը բողոքի ցույցերի և գործադուլների նոր ալիք բարձրացրեց համարյա բոլոր ձեռնարկություններում: Արաբ և հայ կապիտալիստների դեմ միասնականորեն հանդես էին գալիս արաբ և հայ աշխատավորական զանգվածները: Ապրոլյան, Չափալաշյան, Չելբի, Թաշչյան, Նաշարյան, Մինասյան, Մովսիսյան, Խանամիրյան-Դեղեյան գործարանների տարեգրովյունը հարուստ է արաբ և հայ աշխատավորների դասակարգային համատեղ պայքարի դրվագներով: Այդ իրողությունը ցայտուն վկայություն է Լիբանանի հայ աշխատավորների դասակարգային շահերի դիտակցության բարձր մակարդակի մասին:

Այդ տեսակետից նշանակալից է Ժիրայր Մովսիսյանի գուպայի գործարանի աշխատավորների [ճնշող մեծամասնությամբ հայ կանայք] գործադուլը: Տասնօրյա գործադուլի ընթացքում, ապարդյուն անցան հայ կապիտալիստի աղեկտուր ճառերը՝ հանուն ազգային վարկի անվթար պահպանման աշխատավարձի հավելման հարցը առանց արձմիրությունների ֆեդերացիայի միջամտության, ներքին կարգով լուծելու մասին: Ապարդյուն անցան նաև նրա փորձերը՝ աշխատավորների շարքերում «ազգային երկպառակություն» որոմ սերմանելու: Ընդառաջելով հայ աշխատավորների դիմումին, ֆեդերացիայի նախագահը՝ Մուստաֆա էլ-Արիսը անձամբ զբաղվեց նրանց գործադուլով, և հայ կապիտալիստը ստիպվեց 1-ական լիբ. լիրա հավելում կատարել ձեռնարկության բոլոր աշխատավորների օրավարձի վրա⁴¹:

Սեպտեմբերի 9-ին Դորայում կայացավ արաբ և հայ աշխատավորության բազմահազարանոց միտինգը: Խոսելով Լիբանանի աշխատավորական շարժումների հիմնական խնդիրների մասին, էլ-Արիսը նշեց, որ դրանք ամենակենսական պահանջի՝ աշխատանքային դեմոկրատական կողբքսի պահանջի բաղկացուցիչ մասերն են: Միտինգի վերջում քվեարկվեց կառավարության և պառլամենտի անդամներին ուղղված բանաձև, որով ներկաների անունից պահանջվում էր փութացնել կողբքսի քննարկումը⁴²:

Վերջապես աշխատանքային կողբքսի նախագիծը ուղարկվեց պառլամենտ, որտեղ սակայն, կապիտալիստները անդրկուլիսային լայն դործունեություն ծավալեցին: Նրանց հաջողվեց որոշ դեպուտատների համոզել, որ իբր այդ նախագիծը միակողմանի է, պաշտպանում է միայն աշխատավորների շահերը: Նրանց ձայնակցում էին ռեակցիոն թերթերը՝ նախագծի «անիրավացիության» մասին առասպելներ հյուսելով: Կապիտալիստական «Լը Ժուռ», «Ան-Նահր», «Կոմերս դյու Լիվան» թերթերը առաջարկում էին նորից վերանայել նախագիծը, իսկ «Խաթիբ» թերթուկը, այն «ազգային արդյունաբերությանը սպառնացող վտանգ» համարելով, թելադրում էր պարզապես հանել պառլամենտի օրակարգից⁴³: Կապիտալիստների այդ զինարշավը ծառայեց միայն նախագծի քննարկման ձգձգվելուն:

1946 թ. մարտի կեսերին Արձմիրությունների ֆեդերացիայի պատվիրակությունը պաշտոնապես բողոքեց Ռեսպուբլիկայի պրեզիդենտին, աշխատանքային կողբքսի նախագծի ոչնչով շարժարացող ձգձգման դեմ: Խոստումներ շուրջելով հանդերձ պրեզիդենտ Բեշարա էլ-Խուրին դրական ուշիշ շարեց: Ընդհակառակը, ֆեդերացիայի բողոքը ընդհանուր գործադուլի սպառնալիք համարելով, հրահանգեց ոստիկանությանը նախազգուշական միջոցներ ձեռք առնել արդյունաբերական օբյեկտները հավանական ելույթների դեմ պաշտպանելու համար: Այդ վերաբերմունքը խոր դայրույթ առաջացրեց Լիբանանի աշխատավորական բոլոր խավերում:

վելում կատարելուց հետո, «ազգասեր» կապիտալիստը գործարանում հաստատեց «տուգանքի գրություն մը. ամեն արժույթը բանի կամ պատրվակի համար 25 Լ. դ. տուգանքի կենթարկե աղջիկներուն: Մովսիսյանը այս և այս կարգի ուրիշ բռնատիջներով բանվորներին կյանքը անտանելի կղարձնե գործարանն ներս, որպեսզի անոնք զղվին և գործերին ձգեն երթան առանց հատուցումի»: [Նույն տեղում, 4 հոկտեմբերի 1945 թ.]

⁴⁰ «صوت الشعب» 10 أيلول 1945

⁴¹ «خطاب» بيروت أيلول 17 1945

⁴⁰ «Արարատ», 13 սեպտեմբերի 1945 թ.:

⁴¹ «Ժողովուրդի ձայն», 26 հուլիսի 1945 թ.: Աշխատավարձի հա-

Մարտի 24-ին, արհմիությունների ֆեդերացիայի նախաձեռնությամբ Բեյրութում կայացավ արաբ և հայ աշխատավորների նոր միտինգը: Բացահայտելով աշխատավորների անմխիթար վիճակը, ելույթ ունեցողները քննադատեցին կառավարության անտարբերությունը, նրա՝ կապիտալիստներին ձեռնառու ներքին քաղաքականությունը: Էլ-Արիսը նշեց. «Բայց կարելի չէ այս անիշխան դրությունը օլտսպես շարունակել: Հարյուրներով և հազարներով աշխատավորներ գործն կհանվին առանց իրենց հատուցումները ստանալու»: Միտինգի վերջում քվեարկվեց հատուկ բանաձև, որով պահանջվում էր աշխատանքային կողերսի անհապաղ վավերացումը⁴⁴:

Աշխատավորական միտինգներ գումարվեցին նաև Լիբանանի մի շարք ուրիշ քաղաքներում: Ապրիլի 7-ին, Բեկայի աշխատավորների միտինգում, հառախոսներ Ալ-Արիսը, Միշել Ազարը, Ժորժ Ֆրեհան, Արսեն Նաշարյանը և ուրիշներ պահանջեցին «աշխատանքի օրենսդրությունը վավերացնել, նկատի առնել ետք Միշսենսիկայական մարմնի (Արհմիությունների ֆեդերացիայի — Հ. Ք.) առաջարկները»⁴⁵: Իսկ ապրիլի 11-ին արհմիությունների ֆեդերացիան որոշեց մայիսի 1-ին ընդհանուր գործադուլ հայտարարել առ ի բողոք աշխատանքային կողերսի քննարկման ձգձգման դեմ⁴⁶:

Ի պատասխան դրա, կառավարությունը հրապարակեց հատուկ հայտարարություն ազդարարելով.

«1. Օրենքը խստորեն պիտի գործադրվի գործադուլ հրահրողներուն դեմ.

«2. Ան, որ երեք օր հաջորդաբար կբացակայի գործեն, հրաժարված պիտի նկատվի և իր տեղը ուրիշ մը պիտի զրվի: Չաշխատած երեք օրերուն համար թոշակ (աշխատավարձ—Հ. Ք.) չի վճարվիր.

«3. Ամեն բանվոր», որուն կհաղորդվի պարտավորիչ ծառայության (réquisition) հրահանգը, պետք է ենթարկվի»⁴⁷: Այդ ազդարարությունից հետո, արհմիությունների ֆեդերացիան նպատակահարմար դատեց հետաձգել մայիսի 1-ի համար նախատեսված ընդհանուր գործադուլը:

Մայիսի 1-ին Բեյրութում կայացավ աշխատավորական հսկա միտինգ, որտեղ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիայի ղեկավարներ Խալեզ Բեկդաշը, Ֆարաժալլա էլ-Հելուն, և ուրիշներ քննադատեցին կառավարությանը, նրա օտարերկրա մոնոպոլիաներին ձեռնառու քաղաքականությունը: Նրանք դրվատեցին արաբ և հայ աշխատավորության պայքարը դեմոկրատիայի և անկախության համար, ժողովրդական մասսաների կենսամակարդակի բարձրացման, նրանց լավագույն ապագայի համար: Աշխատավորության օրվա առթիվ տեղի ունեցան նաև խաղաղ ցույցեր. ցուցարարները կրում էին պաստառներ հետևյալ լոզունգներով. «Պաշտպանել աշխատավորներին պայքարելով անգործության դեմ», «Պահանջում ենք ութժամյա աշխատանքային օր», «Պահանջում ենք աշխատանքային դեմոկրատական օրենսդրություն» և այլն:

Արհմիությունների ֆեդերացիայի հետաձգված ընդհանուր գործադուլը տեղի ունեցավ մայիսի 20-ին: Ֆեդերացիայի կողմից գործադուլի կապակցությամբ բաց թողնված կոշում ասված էր. «Աշխատավորները կպահանջեն իրենց արդար ու օրինական իրավունքները պաշտպանող դեմոկրատական օրենսդրություն մը, որ զիրենք պաշտպանե հիվանդության, արկածի և գործարանատերերու քմահաճույքներուն դեմ»⁴⁸: Արձագանքելով ֆեդերացիայի կոշին, քաղաքների և գյուղերի աշխատավորները դադարեցրին աշխատանքը: Կյանքը դադարեց ամբողջ երկրով մեկ: Կառավարությունը զինված հսկողություն հաստատեց արդյունաբերական օբյեկտներում: Ծնշույ մեծամասնությամբ հայերով բնակված Բուրջ Համուզում ոստիկանությունը կրակեց ցուցարարների վրա...

Այդ արյունալի ղեպքերից հետո, նույն օրը երեկոյան կառավարությունը հավաստիք տվեց նախագծի քննարկումը անհապաղ սկսելու մասին⁴⁹:

Իրոք, մայիսի 27-ին պառլամենտը սկսեց աշխատանքային կողերսի նախագծի քննարկումը: Մակայն, մի շարք դեպուտատներ ղեկավարվում էին խոշոր արդյունաբերողների և մոնոպոլիաների շահերը պաշտպանելու սկզբունքով: Այդ բանը երևում էր թեկուզ նախագծի տարբեր հոդվածներում առաջարկված այսպես կոչված ուղղումներից: Արհմիություններին վերաբերող հոդվածներում,

44 «Ժողովուրդի ձայն», 26 մարտի 1946 թ.:

45 Նույն տեղում, 11 ապրիլի 1946 թ.:

46 Նույն տեղում, 17 ապրիլի 1946 թ.:

47 Նույն տեղում, 11 ապրիլի 1946 թ.:

48 Նույն տեղում 19 մայիսի 1946 թ.:

49 Նույն տեղում, 21 մայիսի 1946 թ.:

նրանք առաջարկում էին իրավունք տալ ներքին գործերի միևնույն «վատ գործող» արհմիութիւնները ցրելու⁵⁰: Բունն վեճերի առիթ տվեց նաև ստաժային հատուցման վերաբերող հողավածների քննարկումը: Դեպուտատներից ոմանք փորձում էին այնպես «ուղղել» այդ հողավածները, որ հնարավոր չափով սահմանափակվեին կամ ի չիք դառնար աշխատավորների ստաժային հատուցման իրավունքը: Օտարերկրյա մոնոպոլիաները, իրենց շահերի պաշտպանությունը ստանձնած դեպուտատների տեսակետին ուժ տալու նպատակով, անգամ մանր ձեռնարկատերերին բողոքի ցույցի մղեցին... Իրավացիորեն, Ֆարաժալլա էլ-Հելուն նշում էր, որ «մանր գործատիերը սխալ գործեցին գործազուլ հայտարարելով առ ի բողոք աշխատանքային օրենսդրության դեմ, քանի որ այս գործազուլը կրնա միայն օգտակար ըլլալ մոնոպոլիստական ընկերություն»⁵¹:

Ստաժային հատուցման վերաբերող հողավածների քննարկման ընթացքը առավել ևս խորացրեց արդյունաբերողների խուճապը, նրանց մղեց սաստկացնելու երկարամյա ստաժ ունեցող աշխատավորների դեմ սկսված հալածանքը: Միջոցների մեջ խտրություն չդնելով, նրանցից ոմանք սարքում էին գողության, անբարոյակախության կեղծ պատրվակներ, ուրիշներն էլ առաջ էին քաշում շուկայում պահանջարկի պակասելու շինժու պատճառը կամ անտանելի միջոցառում ստեղծում գործարանում երկարամյա ստաժ ունեցողներին, առանց համապատասխան հատուցման, փողոց նետելու համար⁵²: Բացի այդ, ստաժային հատուցման հարցում աշխատավորներին «չափավորության» հրավիրելու նպատակով, կապիտալիստներն առաջ քաշեցին 1945 թ. մարտի հավելման օրենքի

⁵⁰ «صوت الشعب» آيار ۲۹ ۱۹۴۵

⁵¹ «Ժողովուրդի ձայն», 2 հունիսի 1946 թ.:

⁵² Այդ կարգի սխալ գործությունը աչքի ընկան նաև մի շարք հայ ձեռնարկատերեր: Դրանցից Խանամիրյան-Գեղեյանները, շուկայում պահանջարկի պակասելու պատրվակով, իր «ժամանակավոր» աշխատանքից ազատում էին երկարամյա ստաժ ունեցող բանվորներին... Կոահելով նրանց հետին միտքը, բանվորները դատարան դիմեցին ստաժային հատուցում պահանջելով: Ամիսների անհոգի քաշքուկից հետո, երբ բացահայտ դարձավ, որ դատարանը վճռելու է իրավազրկված բանվորների [ձեռք մեծամասնությունը հայ] օգտին, նրանք հանդես եկան «ազգասերի» դիմակով, և կոչ արեցին բանվորների «ազգային նախաձայնագրությանը», ասելով՝ «ամոթ է որ հայ մը հայու դեմ դատ բանա» և այլն: Սակայն, այդ բարոզը, որի նպատակն էր հենց բանվորների համաձայնությունը դատը կարճել, մնաց սպառչյուն: [նույն տեղում, 18 հունիսի 1946 թ.]

անարդարացիության վերաբերյալ թեզը և մերժեցին այն գործադրել, չնայած նրանք արդեն մի անգամ հավանություն էին տրվել դրան:

Հունիսի 11-ին, բուլոքելով կապիտալիստների այդ կուրսի դեմ, Ռեժիի բանվորներն ու ծառայողները գործազուլ հայտարարեցին: Այդ գործազուլը, որը տեղեց ավելի քան երկու շաբաթ, նշանավորվեց արյունալի իրադարձություններով: Հունիսի 27-ին ժանդարմերիան կրակ բացեց Ռեժիի աշխատավորների վրա, սպանելով 1 և վիրավորելով 20 հոգի, այդ թվում բազմաթիվ կանանց⁵³: Այդ աննախընթաց դեպքերը հակահառավարական մասսայական գործադուլների և փողոցային ցույցերի հզոր ալիք բարձրացրին, հիմքից ցնցելով տիրապետող դասակարգի դիրքերը:

Իր իշխանությունը հենարաններ որոնելով, ազգային բուլժուազիան աստիճանաբար սահում էր դեպի բրիտանական իմպերիալիզմի որոգայթը: ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Երկրի ներսում աշխատավորների և ոմնևոր դասակարգի միջև եղած հակասությունների աճման և դասակարգային պայքարի սրման համեմատ ազգային բուլժուազիան ավելի ու ավելի է հակում գրսևորում համաձայնության գալու իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի հետ»⁵⁴:

Օգտվելով տիրապետող դասակարգի թուլությունից, բրիտանական իմպերիալիստները միջամտում էին Լիբանանի ներքին և արտաքին գործերին: Նրանց հաջողվեց Նուրի Սաիդից հետո Անկարա ուղարկել նաև Բեշարա էլ-Խուրիին, այսպես կոչված կարմիր վտանգի դեմ Արևելյան բլոկ կազմելու հարցի շուրջը բանակցելու համար: Այդ բլոկը կոչված էր ծառայելու, մի կողմից մեծ Սիրիայի ստեղծմանը, մյուս կողմից՝ բլոկի անդամ երկրներում դեմոկրատական շարժումների ճնշմանը: Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունների 1946 թվականին Դամասկոսում տեղի ունեցած խորհրդակցությունը նշում էր, որ «ավելի քան երեք անհրաժեշտ է» այդ քույր երկրների համագործակցությունը «պաշտպանելու համար իրենց անկախությունն ընդդեմ այն դավերու, որոնք կսարքվին անգլիական իմպերիալիստական շրջանակներու կողմ»⁵⁵:

Անգլիացիները աշխատավորական շարժումների վերելքը խափանելու հարցը համարում էին առաջնահերթը: Նրանք այդ

⁵³ «Ժողովուրդի ձայն», 28 հունիսի 1946 թ.:

⁵⁴ ՍՄԿԿ ծրագիր, Երևան, 1964, էջ 58:

⁵⁵ «Ժողովուրդի ձայն», 30 հունիսի 1946 թ.:

գործին լծում էին մասնագիտացած գործակալների: Նրանցից պետք է հատկապես նշել միստր Օդզին, որը իբրև բրիտանական «արհմիությունների» ներկայացուցիչ կահիրեում իր «տաղանդը» փորձարկելուց հետո, 1946 թ. սկզբներին փոխադրվել էր Բեյրութ: Լիբանանի ներքին գործերի մինիստրության արհմիությունների մեջ խցկված գործակալների միջոցով միստր Օդզը նախ և առաջ փորձեց «Ֆեդերացիայի հիմքերը բանգել...», սակայն հաջողություն չունեցավ: Ղարողացավ պառակտել բանվորների և ծառայողների միասնական ճակատը⁵⁶: Նրա կազմած այսպես կոչված «ազատ» կամ կառավարական արհմիությունները որևէ գեր ղարողացան կատարել...

Բրիտանական «առաքյալի» պաշտոնավարության ժամանակաշրջանում Լիբանանում մեծ շափերի հասան օժիրները: Օր նոր, օժիր նոր: Համարյա ամեն օր սպանված կամ վիրավորված քաղաքացիներ ընկնում էին փողոցում: Նոնակներ էին պայթում Բեյրութի թաղերում, շուկաներում, հրապարակներում, նույնիսկ պառամենտի շենքում, ամերիկյան և բրիտանական դեսպանատներում⁵⁷: Իսկ հայկական կյանքում, մամուլի սնանկ պայքարին առընթեր, դաշնակ շեֆերը սպարակ էին մղում մարտական խմբերը: Գրանք գինված հարձակումներ էին գործում Սիս, Մարաշ, Հաճրն, Թրատ, Հայաշեն, Աշրաֆիե և այլ հայաբնակ թաղերի աշխատավորների վրա, «գլուխ հանել վերջ իրենց հանձնարարված գործը... հերոսարար» անհայտանում⁵⁸: Առավել ցնցող օժիր էր «Աթ-Թարիխ» դեմոկրատական ամսագրի խմբագրներից Շարտունու սպանությունը: Ոստիկանությունը անգամ ձեռնարկներ չէր անհանգստացնում այդ քաղաքի շարաքների հեղինակներին: Ավելին. ոնակցիսն թերթերը փորձում էին ժողովրդին ներշնչել այն տպավորությունը, որ այդ բոլոր անկարգությունները աշխատավորների դասակարգային պայքարի շարունակությունն են... Այդպես վարվելով, միստր Օդզը և ոնակցի թուփակները ձգտում էին հասարակականությունը տրամադրել դեմոկրատական ուժերի դեմ, որ իրր առանց լուծարքի ենթարկելու կոմունիստական կուսակցությունը և Արհմիությունների ֆեդերացիան հնարավոր չէ ներքին կարգ ու կանոն հաստատել Լիբանանում:

⁵⁶ „Moyen-Orient“, Paris, 1949, № 5, p. 3.

⁵⁷ «Ջարթոնք», 21 օգոստոսի 1946 թ.:

⁵⁸ «Ժողովուրդի ձայն», 23 օգոստոսի 1946 թ.:

Սակայն, այդ մեքենայությունները արդյունք չտվին և ի վերջո, աշխատավորական շարժման հուժկու թափի ներքո աշխատանքային կողմերի համար պայքարի ելքը վճուվեց աշխատավորության օգտին: Չեռնարկատերերը ստիպվեցին գործադրել 1945 թ. հավելումների օրենքը և, երկրորդ, որ ամենակարևորն է, 1946 թ. սեպտեմբերի 23-ին պառամենտը վավերացրեց նախագիծը: Լիբանանի աշխատավորությունը ձեռք բերեց իր աշխատանքային կողմերը:

Դա խոշոր պատմական իրադարձություն էր մի երկրում, որտեղ գոյություն չունեի աշխատանքային ոչ մի օրենք, գրավոր ոչ մի կանոն, և աշխատավորական մասսաների շահագործումը թողնված էր մի բուռ կապիտալիստների ազատ կամքին...

* *
*

Լիբանանի աշխատանքային կողմերը, Մերձավոր արևելքի մյուս երկրների համապատասխան օրենքների համեմատությամբ, իրավացիորեն համարվում է ամենադեմոկրատականը: Սակայն շպետք է գերազանհատել նրա դերն ու նշանակությունը աշխատավորական մասսաների սոցիալ-տնտեսական կյանքում:

Աշխատանքային կողմերը դեմոկրատիայի սաղմեր պարունակելով հանդերձ բուրժուական է: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել կապիտալիստական երկրի պառամենտի կազմած աշխատանքային կողմերը:

Այնուամենայնիվ աշխատանքային կողմերը մի շարք կարևոր փոփոխություններ էր մտցնում Լիբանանի աշխատավորության կյանքում:

1. Նշանակալից փոփոխություն էր ութժամյա աշխատանքային օրվա հաստատումը: Գրանով աշխատավորները ազատագրվում էին նախկին, միջնադարից ժառանգ մնացած արևածագից մինչև մայրամուտ աշխատելու տաժանելի պարտավորությունից: Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկատերերին իրավունք էր տրվում արտաժամյա աշխատանք կազմակերպելու, պայմանով, սակայն, որ նրանք հանձն առնեին այդ ժամերի աշխատանքը սովորական աշխատաժամերի 50 տոկոսի շափով ավելի վարձատրելու⁵⁹:

⁵⁹ „Code du Travail“, traduit par T. D o n a t o, 2ème édition, Beyrouth, 1954, pp. 14, 15 et 16.

2. Ուշագրավ նորութիւնն էին աշխատավարձի միւնիմումին և դրա վճարման ձևերին վերաբերող հոգովածները: Գրանցում ասված է. «Մինիմում աշխատավարձը բավարար պետք է լինի աշխատավորի և նրա ընտանիքի անհրաժեշտ կարիքները հողալու համար: Աշխատավարձը չի կարող ավելի ցածր լինել, քան պաշտոնական միւնիմում աշխատավարձը», որը «սահմանվում է Ազգային տնտեսութեան մինիստրութեան, ձեռնարկատերերի և աշխատավորների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից»⁶⁰: Գալով աշխատավարձը վճարելու ձևերին, պարզ նշված էր, որ ձեռնարկատերերը պարտավոր են ծառայողների ամսական աշխատավարձը վճարել մի նվազով, բանվորներինը երկու նվազով, իսկ պայմանագրային աշխատանքի ղեպքում, առհաշիվ վճարում կատարել երկու շաբաթը մի անգամ⁶¹: Այդ հոգովածները կարևոր էին նրանով, որ դրանք ձեռնարկատերերին զրկում էին աշխատավարձը պարբերաբար նվազեցնելու կամ դրա վճարումը ձգձգելու միջոցով աշխատավորներին ճնշելու հնարավորութիւնից:

3. Վերացվեց ժամանակավոր աշխատավորի դրութիւնը: Երեք ամիս անընդմեջ միևնույն ձեռնարկութիւնում աշխատելուց հետո, աշխատավորը իրավունք էր ձեռք բերում մնայուն նկատվելու, և աշխատանքից հեռացվելու կամ հեռանալու ղեպքում նրան հասնում էր հատուցում մեկ ամսվա աշխատավարձի չափով: Հատուցման այդ չափը կրկնապատկվում էր առնվազն երեք տարվա ստաժ ունենալու ղեպքում: Փոխադարձաբար, ձեռնարկութիւնից հեռանալ ցանկացող աշխատավորը պարտավոր էր այդ մասին մի ամիս առաջ գրավոր հայտնել ձեռնարկատիրոջը, եթէ չէր ուզում հատուցման իրավունքից զրկվել: Մի խոսքով, աշխատանքային կողմերը աշխատավորներին պաշտպանում էր ձեռնարկատերերի քմահաճ կարգադրութիւնների դեմ, նրանց ցանկացած բոպեին աշխատանքից ազատվելու վտանգի դեմ⁶²:

4. Պակաս ուշագրավ չէր նաև այն, որ բոլոր աշխատավորները անխտիր ձեռք բերեցին տարեկան երկշաբաթյա վճարովի արձակուրդի իրավունք: Բացի այդ, բուժվելու կարիք ունենալու ղեպքում, աշխատավորներին հասնում էր մեկից մինչև երկուս ֆու կես ամիս արձակուրդ աշխատավարձի պահպանմամբ: Հղիութեան շրջանում կանայք իրավունք ունեին 40 օրվա արձակուրդի, նույնպես աշխա-

տավարձի պահպանմամբ: Ձեռնարկատերերին արգելվում էր արձակուրդում եղող աշխատավորներին աշխատանքից ազատելու հրաման տալ⁶³:

5. Սահմանափակվեց երեխաների և կանանց շահագործումը, որոշակի կարգ հաստատվեց նրանց աշխատանքի տեսակների և աշխատանքային ժամերի համար: Կողմերի հարակից փաստաթղթերից մեկում թվարկված են արդյունաբերութեան այն ճյուղերը, որոնցում արգելվում է երեխաների, պատանիների և կանանց աշխատանքը կամ այն արտոնվում է բժշկական հատուկ թույլտվութեամբ⁶⁴: Բացարձակապես արգելվեց 8 տարին չըրացած երեխաներին շահագործելը, իսկ մինչև 16 տարեկան պատանիներին չէր արտոնվում 7 ժամից ավելի աշխատել: Գիշերային աշխատանք չէր թույլատրվում ո՛չ երեխաներին, ո՛չ պատանիներին և ո՛չ էլ կանանց⁶⁵:

6. Աշխատանքային կողմերի մի շարք հոգովածներով, առաջին անգամ, թեև տարտամ և անհամարձակ, կենսաթոշակի իրավունքը մուտք գործեց Լիբանանի աշխատավորութեան կենցաղի մեջ: Կենսաթոշակի անցնելու իրավունք ձեռք բերեցին վաթսուս տարիքը ամբողջացրած կամ միևնույն ձեռնարկութիւնում քսանհինգ տարի աշխատած բանվորներն ու ծառայողները⁶⁶: Սակայն, պետք է ի նկատի ունենալ, որ դա բառի սոցիալիստական առումով կենսաթոշակ չէր: Թոշակի անցնող կամ հանգստյան կոչվող աշխատավորը պարզապես ձեռնարկատերից ստանում էր միանվազ կամ մասնավճար ձևով մի գումար, որի ընդհանուր քանակը չէր կարող ավելի բարձր լինել նրա տասներկու ամսվա աշխատավարձից: Այնուամենայնիվ, կենսաթոշակի այդ կապիտալիստական վարիանտը նախկին դրութեան համեմատութեամբ զգալի առաջադիմութիւն էր:

7. Աշխատանքային կողմերը բազմաթիվ հոգովածներ է պարունակում արհմիութիւնների մասին: Գրանք հետապնդում են մի հիմնական նպատակ՝ արհմիութիւնները վերածել ապաքաղաքական խմբակցութիւնների, խտորեն ենթարկելով պետական օրգանների վերահսկողութեանը: Աշխատավորներին և ձեռնարկատերերին հավասարապես արտոնվում էր իրենց համապատասխան արհմիութիւնները կազմելու, պայմանով, որ նախօրոք իրավունք ստացվեր

⁶⁰ „Code du Travail“, p. 17.

⁶¹ Նույն տեղում, էջ 18:

⁶² Նույն տեղում, էջ 10—11:

⁶³ „Code du Travail“, pp. 15—16.

⁶⁴ Նույն տեղում, էջ 12—13:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Նույն տեղում, էջ 19—20:

Ազգային տնտեսության մինիստրից: Այդ մինիստրության հավանությանը արժանանալուց հետո միայն կարող էր ուժի մեջ մտնել տվյալ արհմիութայան ներքին կանոնադրությունը⁶⁷: Բացի այդ, առանց այդ մինիստրության հավանության, արհմիությունները իրավունք չունեին փոխադարձ կապեր ստեղծելու կամ միավորվելու արհմիությունների ֆեդերացիա կազմելու նպատակով⁶⁸: Կողերսում բացորոշ ասված էր. «Արհմիություններին արգելվում է ամեն կարգի քաղաքական գործունեություն, ինչպես նաև նրանց մասնակցությունը քաղաքական բնույթ ունեցող հավաքույթների կամ ելույթների»⁶⁹: Բացի այդ, կառավարությանն իրավունք էր վերապահվում «իրենց պարտավորությունները անտեսող» արհմիությունների վարչությունները «լուծարքի ենթարկելու» և, անհրաժեշտ դեպքում, նրանց «անդամների դեմ դատական գործ հարուցելու» և այլն⁷⁰:

Աշխատանքային կողերսի հոգվածներից երևում է, որ տիրապետող դասակարգը զգալի գիշումներ կատարեց աշխատանքային ժամերի, աշխատավարձի և այլ հարցերում, բայց միաժամանակ փորձեց կաշկանգել աշխատավորների քաղաքական ազատությունը: Վերջին հաշվով, նրա սլաքների սուր ծայրը ուղղված էր կիրանանի կոմունիստական պարտիայի և արհմիությունների ֆեդերացիայի դեմ: Եվ իրոք, շուրջ մի տարի անց, հենվելով կողերսի հոգվածների վրա, կիրանանի կառավարությունը լուծարքի ենթարկեց ֆեդերացիան, իսկ ավելի ուշ ձերբակալեց նրա աչքի ընկնող անդամներին: Գրանից հետո 1947—1952 թթ. կապիտալիստները բազմիցս հարձակվեցին աշխատավորների կողերսով ձեռք բերված իրավունքների վրա, իսկ ուսակցիոն մամուլը աղմուկ բարձրացրեց այն մեթոդներով օգտին: Սակայն այդ փորձերը հանդիպեցին արար և հայ աշխատավորության կորովի դիմադրությանը և ձախողվեցին:

Կիրանանի աշխատանքային կողերսը, ունենալով հանդերձ իր որոշակի խոցելի կողմերը, զգալի շահով բարելավեց կյանքի բարիքներ կերտող մարդկանց աշխատանքային պայմանները, նրանց ապուլ տնտեսական շահերը ապահովելու որոշ հնարավորություն, նրանց պաշտպանելով ձեռնարկատերերի բմահաճ կարգադրություններից:

⁶⁷ Code du Travail, pp. 28—29.

⁶⁸ Նույն տեղում, էջ 33:

⁶⁹ Նույն տեղում, էջ 28:

⁷⁰ Նույն տեղում, էջ 33:

Կիրանանի աշխատանքային կողերսի ստեղծումը, որը հնարավոր դարձավ արար և հայ աշխատավորության համատեղ համապայքարի շնորհիվ, խոշոր հաղթանակ էր տիրապետող դասակարգի դեմ:

О. Х. ТОПУЗЯН

СОВМЕСТНАЯ БОРЬБА АРАБСКИХ И АРМЯНСКИХ ТРУДЯЩИХСЯ МАСС ЛИВАНА ЗА ТРУДОВОЙ КОДЕКС (1945—1946 гг.)

Резюме

Во время второй мировой войны промышленность Ливана достигла определенного подъема, что способствовало численному и качественному росту рабочего класса. 60 важнейших профсоюзов, насчитывающих в своих рядах более 30 тысяч арабских и армянских трудящихся, объединились под знаменем федерации профсоюзов Ливана. Пройдя славный путь национально-освободительных движений, передовые слои ливанских трудящихся важным условием упрочения приобретенной независимости считали социальные и экономические преобразования, установление подлинно демократических порядков. В этом смысле большое значение имело создание трудового кодекса.

В статье изложены страницы совместной борьбы арабских и армянских трудящихся за трудовой кодекс, а также показано сопротивление иностранных, арабских и армянских капиталистов, которые при содействии правящих кругов Ливана желали провалить принятие трудового кодекса. Защищая свои классовые интересы, арабские и армянские трудящиеся массы выступили единым фронтом. В результате огромного размаха массовых забастовок и митингов 23 сентября 1946 г. борьба за трудовой кодекс увенчалась успехом. В конце статьи изложены основные положения кодекса, показаны их роль и значение в социально-экономической жизни трудящихся масс Ливана.

THE JOINT STRUGGLE OF ARAB AND ARMENIAN
WORKMEN IN THE LEBANON FOR A LABOUR CODE
(1945—1946)

by O. KH. TOPOOZIAN

S u m m a r y

The economy of the Lebanon was marked by certain activation during World War II which contributed to the numerical and qualitative increase of the working class. Sixty key trade unions, counting in their ranks over thirty thousand Arab and Armenian workmen, united under the banner of the Federation of Lebanese trade unions. With a glorious record of national-liberation movement the most class-conscious section of the Lebanese workers regarded social and economic reforms and the establishment of truly democratic orders as the essential condition for the consolidation of the independence they had achieved. Accordingly the creation of a labour code would mean much.

The paper gives details of the joint struggle of Arab and Armenian workers for a labour code, and also the resistance of foreign, Arab and Armenian capitalists who were willing to secure the backing of Lebanese ruling circles in dooming the adoption of the labour code to failure. The Arab and Armenian working men came out with a united front in defence of their class interests. As a result of large-scale general strikes and meetings the struggle for a labour code was crowned with success on September 23, 1946. The basic regulations governing the code are appended to the paper. Their role and importance in the social and economic life of the workers of the Lebanon is also pointed out.

2. 2. ԿԱՐԵՍԻՐԱՅԱԿ

ԵՐԵՎԱՆԻ ԹՈՒՐԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ
(1908—1914 թթ.)

Ներկա հոդվածում փորձ է արվում տալ երիտասարդ թուրքերի ազգային քաղաքականությունը արաբական երկրներում երիտասարդ թուրքերի 1908 թ. ռեվոլյուցիայից մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:

1908 թվականի հուլիսին, երբ երիտասարդ թուրքերի շարժումը ստացավ զինված ապստամբության բնույթ, թուրքական կառավարությունը եկավ այն եղրակացության, որ հետագա դիմադրությունն անօգուտ է և հուլիսի 24-ի գիշերը Աբդուլ Համիդ II սուլթանը ստիպված եղավ ստորագրել Իրադե (հրամանագիր) կոնստիտուցիայի վերականգնման և ղեկավարողների պալատի ընտրությունների մասին: Երիտասարդ թուրքերի գրեթե անարյուն այս ռեվոլյուցիան, որը կայսրության բոլոր ժողովուրդների կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ, հռչակեց ազատության, հավասարության, եղբայրության և զուտ թուրքական սպեցիֆիկ արդարադատության լուրջունգները:

Որոշ ժամանակ թվաց, թե Օսմանյան կայսրությունում սկսվել է վերջապես սոցիալական ու ազգային իրավահավասարության դարաշրջանը: Թուրքերի եղբայրացումը ոչ թուրքերի հետ, քաղաքական բանտարկյալների ազատումը, գրաքննության վերացումը, նոր թերթերի լույս ընծայումը և քաղաքական ակումբների կազմակերպումը վկայում էին սուլթան Աբդուլ Համիդ II-ի բռնակալական ռեժիմի նկատմամբ ռեվոլյուցիայի տարած հաղթանակի մասին: Բայց դա ոչ թե ժողովրդական ռեվոլյուցիայի, այլ բուրժուական

սահմանափակ ուսուցիչի հաղթանակն էր, որի մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի ուսուցիչները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական և թուրքական ուսուցիչներն էլ բուրժուական համարել: Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ ուսուցիչներից և ոչ մեկի մեջ»¹:

Երիտասարդ թուրքերը իրենց գլխավոր խնդիրը համարեցին ուսուցիչի մտցնել «օրինական», «կոնստիտուցիոն» շրջանակների մեջ, պահպանել «կարգը» երկրում, որի տակ նրանք հասկանում էին՝ կասեցնել աշխատավորների դասակարգային պայքարը և ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը:

* * *

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը արաբական երկրներից Օսմանյան կայսրության մեջ մտնում էին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը (Բեյրութի, Գամասկոսի, Հալեպի վիլայեթները և Լիբանանի, Երուսաղեմի, Գեյր էզ-Ջորի սանջաքները), Իրաքը (Մոսուլի, Բաղդատի, Բասրայի վիլայեթները) և Արևմտյան Արաբիան (Հիջազի, Ասիրի և Եմենի վիլայեթները): Ձևականորեն նրա կազմի մեջ մտնում էր նաև Կենտրոնական Արաբիան, բայց այստեղ իշխող շեյխերի մեծ մասը լուկ անվանականորեն էր կախված Թուրքիայից:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիայի արաբական տիրապետությունների ընդհանուր տարածությունը կազմում էր (բացի Եգիպտոսից և Կենտրոնական Արաբիայից) 1,3 մլն քառ կմ՝ մոտ 10 մլն բնակչությամբ (կայսրության 50 տոկոսը)²:

Արաբական երկրների բնակչության մեծագույն մասը կապված է եղել Տոդին և զբաղվել է հողագործությամբ: Գյուղացիությունը գրեթե զրկված էր հողի սեփականությունից: Սիրիայում, օրինակ, մշակման համար պիտանի ամբողջ հողատարածության երեք քառորդը պատկանում էր կալվածատերերին, որոնք, իբրև կանոն, իրենք տնտեսությունը չէին վարում, այլ գրեթե ամբողջ հողը վարձակալության էին տալիս ֆելլահներին: XX դարի սկզբներին Սիրիայում արգեն գրեթե չէր պահպանվել հողի գյուղացիական անձնական սեփականություն³:

Գյուղացիությունը տնքում էր բաղմապիսի հարկերի ծանր բեռի տակ: Գյուղական բնակչությունից գանձվող հիմնական հարկը աշարն էր՝ տասնորդական հարկը: Գյուղացիներից հավաքում էին նաև հողահարկ, անասնահարկ (աղնամ), ճանապարհահարկ և այլն⁴:

Եթե արաբական երկրների գյուղատնտեսության ընդհանուր հետամնացությունն ավելացնենք արդյունաբերական քիչ թե շատ նշանակալի ձեռնարկությունների, խճուղային ճանապարհների բացակայությունը, կարելի է պատկերացնել, թե թուրք կեղծքիչներն ու օտարերկրյա կապիտալիստները ինչպիսի անողորմությամբ էին կողոպտում կայսրության արաբական վիլայեթները: Բավական է ասել, որ արաբական վիլայեթներում գանձվող հարկերի երկու երրորդը մտնում էր Օսմանյան կայսրության բյուջեն⁵:

Թուրքիայի արաբական տիրույթների տնտեսական խիստ հետամնացությունը եղել է այդ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման վրա թուրքական տիրապետության թողած խոր ազդեցության հետևանքը: Ինչպես արդարացի նշում է Մ. Ս. Լազարևը, «Թուրքիայի կառավարող դասակարգերը ո՛չ միայն իրենք էին թալանում ու շահագործում արաբ բնակչությանը, այլև նպաստում էին, որ օտարերկրյա կապիտալը ստրկացնի Սիրիան, Լիբանանը, Պաղեստինն ու Իրաքը, որ այդ երկրները վերածվեն արևմտյան տնտեսությունների կիսագաղութների»⁶: Իսկ եգիպտացի ժամանակակից բուրժուական պատմաբան Ամին Սաիդը թուրքական տիրապետու-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 537:

² См. М. С. Лазарев, Крушение турецкого господства на Арабском Востоке (1914—1918 гг.). ИВЛ, Москва, 1960, стр. 13. См. также „Levante-Handbuch“, Berlin, 3 Aufl., 1914, S. 13; P. R. Krause. Die Türkei, Leipzig und Berlin, 2 Aufl., 1918, S. 24—25; E. G. Mears. Modern Turkey, New York, 1924, p. 580.

³ См. М. С. Лазарев, Указ. соч., стр. 14.

⁴ N. Moutran, La Syrie de demain. Paris, 2 édition, 1916, p. 292

⁵ E. Jung, Les puissances devant la revolte arabe. Paris, 1906, p. 15.

⁶ М. С. Лазарев, Указ. соч., стр. 29.

թյան մասին գրում է, որ թուրք նվաճողներն իսկական պատերազմ հայտարարեցին արաբերեն լեզվին, ձգտելով այն փոխարինել թուրքերենով, որը դարձավ պաշտոնական պետական լեզու, հիմնարկությունների ու գրագրության լեզու: Թուրքական տիրապետության տակ գտնված արաբական բոլոր երկրների դպրոցներում, այդ թվում նաև տարրական, ուսուցումը վարում էին թուրքերեն լեզվով... «Թուրքերը,— շարունակում է Ամին Սաիդը,— հսկայական վնաս հասցրին արաբական երկրների տնտեսությանը: Առևտուրը լճանում էր, անկում ապրեց գյուղատնտեսությունը, աղքատությունն ու չքավորությունը հասան սարսափելի շափերի»⁷:

Անցնելով իշխանության գլուխ, երիտասարդ թուրքերը արաբական երկրներում հանդիպեցին հակաթուրքական տրամադրությունների, որը Աբդուլ Համիդի բռնակալական ռեժիմի օրով արաբական երկրներում կիրառված հակաարաբական շովինիստական ռեակցիոն քաղաքականության արդյունք էր:

Երիտասարդ թուրքերի 1908 թվականի ռևոլյուցիայի հետևանքով վերականգնված կոնստիտուցիան իր 7-րդ հոդվածով թուրքերեն լեզուն հռչակում էր իրեն պետության պաշտոնական լեզու, իսկ 9-րդ հոդվածով հայտարարում, որ, նախ, բոլոր օսմանցի հպատակները, առանց ցեղի ու ազգության խտրության, օգտվելու են նույն իրավունքներից և ունենալու են նույն պարտականությունները, և ապա, որ ոչ մուսուլմանները ևս ենթակա են լինելու զինապարտության⁸:

Օսմանյան կայսրության ժողովուրդների իրավահավասարության խոստումը, որը անշափ խանդավառել էր նրանց ռևոլյուցիայի սկզբնական շրջանում: «Երբեք չկենսագործվեց»⁹, և արաբները երկրի հասարակական քաղաքական կյանքում չկարողացան հասնել թուրքերի հետ իրավական հավասար վիճակի: Այս հանգամանքը չէր կարող չուժեղացնել արաբ ժողովուրդների հակաթուրքական տրամադրությունները: «Երիտասարդ թուրքերը,— գրում է Ա. Մանդելշտամը,— չկարողացան անգամ նվաճել արաբների մտահու-

թյունը, որոնք կազմում էին կայսրության ամենաբազմաքանակ մուսուլմանական տարրը: Ամբողջ այս ժամանակաշրջանի ընթացքում Սիրիայի և Միջագետքի ցեղերը անընդհատ հուզումների մեջ են եղել, և ինքնավարություն ձեռք բերելու համար ծավալված շարժումը զնալով ուժեղանում էր երիտասարդ արաբ մտավորականների շրջանում»¹⁰:

Երիտասարդ թուրքերի քաղաքական ծրագիրը, որը հրապարակվել էր 1908 թվականի սեպտեմբերին, և դրանից բխչ անց լույս տեսած ընտրական օրենքը գալիս էին առավել ևս ընդգծելու նրանց քաղաքականության ռեակցիոն և շովինիստական բնույթը, այլազգի ժողովուրդների փաստացի անիրավահավասարությունը:

Կոնստիտուցիայի համաձայն, ընտրությունները թուրքիայում երկաստիճան էին: Բնակչությունը նախ իր շարքերից ընտրում էր ընտրողներ: Այնուհետև, կոնստիտուցիայի 72-րդ հոդվածի համաձայն, այդ ընտրողները իրենց վիլայեթի ընտրական օկրուգներում, ընտրում են դեպուտատներ¹¹: Բայց ընտրական օկրուգները կազմակերպվում էին այն հաշվով, որ դրանցից յուրաքանչյուրում ապահովվի թուրքական տարրի գերակշռությունը այլազգի բնակչության նկատմամբ: Բացի դրանից, կոնստիտուցիան պառլամենտում ընտրվելու իրավունք էր վերապահում միայն այն անձանց, ովքեր տիրապետում էին թուրքերեն լեզվին: Երբ 1908 թվականի հոկտեմբերին սկսվեցին ընտրությունները, թուրքական իշխանություններն ու երիտասարդ թուրքերի կոմիտեները սկսեցին գործադրել այնպիսի բռնի ու լիտի մեղքեր, որ մի շարք վայրերում ոչ թուրք բնակչությունը բոլորովին հրաժարվեց ընտրությունների մասնակցելուց¹²:

Ա. Մանդելշտամի բերած տվյալների համաձայն, թուրքիայի պառլամենտում ընտրված 142 թուրք դեպուտատների դիմաց ընտրվել էին 60 արաբ, 25 ալբանացի, 23 հույն, 12 հայ, 5 հրեա, 4 բուլղար, 3 սերբ և 1 վալախ դեպուտատ, այսինքն՝ 133 ոչ թուրք դեպուտատ¹³, թուրքերից 9-ով պակաս:

¹⁰ A. Mandelstam, Le Sort de L'Empire Ottoman, Paris, 1917, p. 30.

¹¹ I. H. Danişmend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi, İstanbul, 1955, IV cilt, s. 368.

¹² См. А. Ф. Миллер, 50-летие младотурецкой революции, М., 1958, стр. 40.

¹³ A. Mandelstam. Op. cit., p. 16—17. Իսրգան, Գանիշմենըր, Ռուս-իկերը ապրիս են դեպուտատների ալլ, իրարամերթ թվերո Մենը հիմը ընդունեցինը Մանդելշտամի տվյալները:

⁷ Амнн Санд, Восстания арабов в XX веке. Пер. с арабского, М., 1964, стр. 16.

⁸ André Marie-Rousselières, La Turquie constitutionnelle. Contribution à l'étude de la politique intérieure turque. Rennes, 1925, p. 66—67.

⁹ Uriel Heyd, Foundation of Turkish Nationalism, London, 1950, p. 130.

1908 թվականի տվյալներով Օսմանյան կայսրության ամբողջ բնակչությունը 22 միլիոն էր, որից թուրքերը՝ 7.5 միլիոն, արաբները՝ 10.5 միլիոն, չհաշված գերազանցապես արաբ բնակչություն ունեցող նգիպոսը¹⁴։ Եթե համադրենք կայսրության բնակչության համեմատական թվերը նրա ներկայացուցչական օրգանում ընտրված ղեպուտատների թվի հետ, ահնհայտ կդառնա երիտասարդ թուրքերի հռչակած իրավահավասարության սկզբունքի ամբողջ կեղծիքը։ Բայց, չնայած դրան, միապետական Թուրքիայի համեմատությամբ, կայսրության ոչ թուրք ազգությունները ընտրություններում տարան դգալի հաղթանակ, պառլամենտ ուղարկելով իրենց շահերի պաշտպան կանգնող բավական մեծ թվով ղեպուտատներ։

Ինչպես ցույց են տալիս Թուրքիայի ղեպուտատների պալատի ազգային կազմի վերաբերյալ տվյալները, երիտասարդ թուրքերին չի հաջողվել այդ պալատում ապահովել թուրքական տարրի բացարձակ գերակշռությունը մյուս ազգությունների նկատմամբ։ Ի. Չ. Դանիշմենդը, նշելով, որ «թուրք համարվող» ղեպուտատների թվի մեջ մտնում էին նաև «բազմաթիվ բալկանյան մուսուլմաններ», ստիպված է դառնորեն խոստովանել, որ «համենայն դեպս, օսմանյան ղեպուտատների պալատում իսկական թուրքերի ընդհանուր թիվը մյուս տարրերի համեմատությամբ կազմում էր փոքրամասնություն, մի բան, որ վաղուց սարսափեցնում էր սուլթան Համիդին»¹⁵։ Իրենց քաղաքականության մեջ հետևելով սուլթանի սկզբունքներին, երիտասարդ թուրքերը ձգտում էին բոլոր միջոցներով ապահովել թուրքական տարրի գերիշխանությունը կայսրությունում, այն դարձնել «տիրապետող ազգ» («millet-i hakimiyе»)։ «Չնայած «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի բոլոր հերյուրանքներին, — շարունակում է Դանիշմենդը, — փաղիշահի այդ վախը մեջլիսի առաջին իսկ օրերից սկսած արգարացավ. քրիստոնյա տարրերը ազգային խմբերով պայքարի անցնելուց բացի, արաբ և ալբանացի մուսուլմանական տարրերն անգամ շատ շանցած սկսեցին երես դարձնել նրանցից, որի հետևանքով ղեպուտատների պալատը վերածվեց թուրքերի դեմ զանազան օսմանյան ազգությունների պայքարի թատերաբեմի»¹⁶։

¹⁴ Չ. Թուրյան, էջեր արաբական ազգային ազատագրական շարժումների պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 9, էջ 89։

¹⁵ I. H. Danişmend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi, s. 369.

¹⁶ I. H. Danişmend, aynı eser, s. 369.

1910 թվականի փետրվարին Գամաղ Ֆերիդ փաշան ղեպուտատների պալատի բննարկմանը ներկայացրեց մի նախագիծ թուրքական օրենքները վերանայելու մասին։ Ֆերիդ փաշայի կարծիքով սուլթան խալիֆայի իրավունքները շափից աճելի սահմանափակվել են նոր սահմանադրությամբ, մի բան, որ չի համապատասխանում մուսուլմանական սրբազան օրենքներին, և, ընդհակառակը, մեծ շափով ընդլայնվել են ղեպուտատների պալատի իրավունքները, իսկ դա կարող է հանգեցնել կայսրության քայքայմանը, քանի որ ընտրությունների գոյություն ունեցող սիստեմի պայմաններում պալատում կարող է կազմվել մեծամասնություն ոչ թուրք ազգությունների ղեպուտատներից։ «Մինչդեռ, — շարունակում է նա, — Թուրքական կայսրության հիմքը միշտ եղել է և պետք է մնա թուրքերի գերիշխանությունը կայսրության մնացած բոլոր ազգությունների նկատմամբ»¹⁷։

Թուրք ազգության գերիշխանության կողմնակիցները, ելնելով թուրքական նացիոնալիզմի շահերից, ձգտում էին պահպանել սուլթանի իրավունքը՝ նշանակելու ղեպուտատների գոնե երկու երրորդին, մինչդեռ ենթադրվում էր ամբողջ սենատը դարձնել ընտրովի։ Այս միջոցառման նպատակն այն էր, որ բարձրացնեն սենատի նշանակությունը և ապահովեն այնտեղ թուրքական մեծամասնությունը ի հակակշիռ ղեպուտատների պալատի, որտեղ նոր ընտրությունների դեպքում ոչ թուրք տարրերը կարող էին շահել մեծամասնություն։ «Այս տեսակետից, — հաղորդում էր Կոստանդնուպոլսի ուսական ղեսպան Չարիկովը, — թուրքերը վախենում են գլխավորապես արաբներից. գոյություն ունեցող ընտրական օրենքը ճիշտ կիրառելու դեպքում արաբները կարող են ստանալ 120 ղեպուտատական տեղ, այսինքն՝ ղեպուտատների պալատի անդամների ամբողջ թվի գրեթե կեսը»¹⁸։

Ելնելով անցյալի այդ դառը փորձից, Թուրքիայի պառլամենտի երկրորդ ընտրությունների ժամանակ, 1912 թվականի մայիսին, երիտասարդ թուրքերը, արդեն լինելով սահմանադրական Թուրքիայի տերը, աճելի կատարելագործելով ապօրինությունների, ճրնշումների ու խարդախումների մեթոդները, կարողացան ապահովել «Միասնություն և առաջադիմություն» պարտիայի բացարձակ գերիշխանությունը թուրքական պառլամենտում։ «Օսմանյան պալատի երկու հարյուր ութսուն ղեպուտատներից երկու հարյուր չլիքանա-

¹⁷ АВПР. Фонд «Политархив», д. 1038, л. 48.

¹⁸ Նույն տեղում, թ. 49։

սունը ներկայացնում էր «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի կամբը, դեպուտատներ, որոնց նա նշանակել էր հակառակ ընտրողների կամբի»¹⁹: Տեսականորեն, սկսած 1908 թվականից Օսմանյան կայսրությունն ուներ և՛ կոնստիտուցիա և՛ երկրում ապրող տարբեր ազգությունների կողմից ընտրված պառլամենտ: Իրականում թուրքիան չունեի ո՛չ պառլամենտ, ո՛չ օրենք և ո՛չ էլ կոնստիտուցիա: Ժողովուրդը կառավարություն ասելով հասկանում էր «Միասնություն և առաջադիմություն» կոմիտե, կոմիտե ասելով հասկանում էր կառավարություն:

Հատկանշական է, որ արաբական երկրներից ընտրված դեպուտատները, հավաքվելով Կոստանդնուպոլիս՝ պառլամենտի բացմանն ու առաջին նիստին, որոշել էին գործել միանգամայն անկախ ու ինքնուրույն և շննթարկվել երիտասարդ թուրքերի թելադրանքին, պառլամենտում քննարկվելիք հարցերը դիտել արաբների ազդալին շահերի տեսանկյունից, ելնելով այն իրողությունից, որ արաբական քաղաքակրթությունը բարձր է և ավելի հին մուսուլմանական մյուս բոլոր ժողովուրդների քաղաքակրթությունից²⁰:

Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Զինովևը հաղորդում է, որ «հոգ տանելով իրենց պարտիայի ուժեղացման մասին, երիտասարդ թուրքերի կոմիտեների ղեկավարները փորձում էին իրենց կողմը գրավել արաբներին, բայց այդ փորձերը ապարդյուն անցան: Նրանց արած առաջարկություններին արաբները պատասխանում էին վճռական մերժումով և առանձնապես զայրացած, երբ նրանց առաջարկվեց տալ մի երդում, որը պահանջում էին կոմիտեների կազմի մեջ մտնող բոլոր անձերից:

Արաբների համառությունը ընկճելու համար երիտասարդ թուրքերը դիմեցին սպառնալիքների. բայց արաբները սպառնալիքներին պատասխանեցին սպառնալիքներով: Նրանք հայտարարեցին ի միջի այլոց, որ պառլամենտի բացումից հետո իրենք կներկայացնեն օրինագիծ՝ երիտասարդ թուրքերի կոմիտեների նկատմամբ պատժիչ խիստ միջոցներ կիրառելու մասին իբրև անօրինական միությունների, որոնք բռնի կերպով իրենց ձեռքն են վերցնում կառավարության ֆունկցիաները և անարխիա ստեղծում թուրքիայում²¹:

Իշխանության գլուխ անցնելուց հետո երիտասարդ թուրքերը սկսեցին ուժեղացնել իրենց բռնակալական ուժերը և կառավարման բոլոր միջոցները կենտրոնացնել իրենց ձեռքում: Սահմանադրության հռչակումից հետո արաբների ցուցաբերած խանգավառությունը գնալով փոխարինվեց խոր հիասթափությամբ: Նրանք հավատում էին, որ Օսմանյան կայսրությունը, որը բաղկացած էր իրենց տարբեր լեզուն, սովորություններն ու տրագիցիաներն ունեցող բազմաթիվ ցեղերից ու ազգություններից, չի կարող հաջողությամբ ղեկավարվել կառավարման նման սխեմայով: Արաբները պահանջում էին իրոք կոնստիտուցիոն և ներկայացուցչական կառավարություն: Մինչդեռ երիտասարդ թուրքերի կառավարությունը լուրջ անվանապես էր կոնստիտուցիոն և ներկայացուցչական: Ավելին, երիտասարդ թուրքերը «կառավարություն էլ չէին,— ասում է թուրքիայում այն ժամանակվա ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն.— նրանք իրականում մի անպատասխանատու պարտիա էին, գաղտնի ընկերության նման մի բան: որը ինտրիգների, աշարեկման ու սպանությունների միջոցով ձեռք էր գցել պետական պաշտոնների մեծ մասը»²²: Կայսրության մնացած բազմաթիվ ազգություններն ու ցեղերը զուրկ էին հավասար իրավունքներից և հավասար հնարավորություններից: Կառավարական մարմինը կազմված էր միայն մեկ տարրից՝ թուրքականից: Այդ տարրն էլ գտնվում էր հրամայողի արտոնյալ դիրքում:

Երիտասարդ թուրքերը սկսել էին հետևողականորեն վարել արաբական տարրը թուրքական տարրի մեջ ձուլելու քաղաքականություն: Իբրև հետևանք այդ քաղաքականության, «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն պնդում էր, որ թուրքերենը պետք է լինի կայսրության պաշտոնական և միակ լեզուն: «Թրքացման» այս պրոցեսը դարձավ երիտասարդ թուրքերից արաբների դժգոհության մյուս կարևոր պատճառը²³:

Էդվին Պիրսը իր «Տասնհինգ տարի Կոստանդնուպոլսում» գրքում գրում է, որ երիտասարդ թուրքերի կոմիտեն «չի ցանկանում ոչ մի լեզու, թուրքերենից բացի», և ուզում է իր բազմազգ հպատակներից ստեղծել «մի ազգ, որը միասնական լինի լեզվով»:

²² H. Morgenthau. Ambassador Morgenthau's Story. New York, 1918, p. 11.

²³ S. u. Zeine N. Zeine, Arab Turkish Relations and the emergence of Arab Nationalism. Beirut, 1958, p. 95.

¹⁹ Les élections en Turquie. Comment le gouvernement Ottoman a falsifié le scrutin. Le Caire, 1912, p. 14.

²⁰ АВПР. Фонд «Политархив», д. 1031, л. 115.

²¹ Նույն տեղում:

Թուրքերենի ուսուցումը պարտադիր դարձավ յուրաքանչյուր զայրուցում: Հրաման արվեց փողոցների անունները դարձնել թուրքերեն, չնայած «վստահորեն կարելի է ասել, որ Թուրքիայի քաղաքները մեծ մասում բնակչության մեկ բաժնեբորոգ մասն էլ չէր կարող կարգալ թուրքերեն»²⁴:

Կիրանանցի ժամանակակից պատմարան Զեյնեն իր «Արաբա-թուրքական հարաբերությունները և արաբական նացիոնալիզմի առաջացումը» գրքում, արաբական շարժման լիզերներից մեկի՝ Աբդար-Մահման Շահբանդարի հիշողություններից մեջ է բերում մի էպիզոդ, որը տեղի է ունեցել 1910 թվականին և գալիս է հաստատելու այն անհերքելի իրողությունը, որ երիտասարդ թուրքերը կանխամտածված ու մշակված կերպով փորձում էին արաբներին դուրս մղել արաբական երկրներից և այն փոխարինել թուրքերենով: «Երբ մենք Միրիայում գտնվում էինք «Միսանություն և առաջադիմություն» պարտիայի կենտրոնական կոմիտեում,— նշում է նա,— դոկտոր Մուհարրամ Բեյի միջոցով կոմիտեի կենտրոնական գրասենյակից ստացանք բանավոր հրահանգ, որը մեզանից պահանջում էր թուրքերենը դարձնել հիշյալ կոմիտեի հետ մեր բոլոր գրագրությունների լեզու»²⁵:

Արաբները թուրքերենով փոխարինելու քաղաքականությունը սկզբից ևեթ դատապարտված էր ձախողման: Անհնար էր թուրքերենը պարտադրել արաբներին: «Արաբները,— ասում է Լամուշը,— որոնք կազմում էին կայսրություն ամբողջ բնակչության գրեթե մեկ երրորդը և մուսուլմանների կեսը, նույնպես հեռացել էին նոր ռեժիմից այն սահմանափակումների պատճառով, որ կիրառվում էին նրանց լեզվի պաշտոնական օգտագործման նկատմամբ, մի լեզու, որը իբր սրբազան բնույթով ու հարուստ գրականությամբ եղել է սովթանների պատկառանքի առարկան»²⁶:

Արաբական երկրներում գնալով խորանում էր ժողովրդի դժգոհությունը երիտասարդ թուրքերի բռնակալական ռեժիմից: Այդ դժգոհությունը զսպելու համար երիտասարդ թուրքերը նազիմ փաշային նշանակեցին կուսակալ և Միջագետքի կորպուսի հրամանա-

տար: Նա արգելեց արաբերենի օգտագործումը պաշտոնական փաստաթղթերում, ամեն կերպ հետապնդում էր տեղական մամուլի ներկայացուցիչներին: Ամենափոքր իսկ քննադատության համար փակում էր տեղական թերթերը, բոլորովին հաշվի չէր նստում վարչական խորհրդի սրտումների հետ²⁷: Չարիկովը, վկայակոչելով Բաղդատի գլխավոր հյուպատոս Օսլովի հեռագիրը և նկատի ունենալով արաբական ցեղերի ընդվզումները թուրքական տեղական իշխանությունների դեմ, 1910 թվականի մայիսի 2/15-ին հաղորդում էր, որ նազիմ փաշան, մեծ վեզիրին հայտնելով իր հայացքները երկրում տիրող դրության մասին, նրան իրազեկ է պահում, որ «ամբողջ տասնմեկերորդ դիվիզիան կենտրոնացրել եմ Բաղդատում՝ վարժեցնելու և այստեղից արաբների դեմ մասսայական գործողություններ ձեռնարկելու համար. բանտից ազատ եմ արձակել 13 շեյխի. մուշտեհիդից ստացել եմ ֆեթվա, որը հավանություն է տալիս խռովարար արաբների դեմ կառավարության պատժիչ միջոցներին»²⁸:

Նազիմ փաշայի գործունեության կապակցությամբ արաբական թերթերից մեկը գրում էր. «Մինչև այժմ մենք պայքարում էինք միայն Աբդուլ Համիդի դեմ, իսկ ներկայումս կան շատ նահանգապետներ, որոնք նրան ոչ մի բանում չեն դիջում»²⁹:

Արաբ ժողովուրդները լեզվի, գրականության ու կուլտուրայի նկատմամբ երիտասարդ թուրքերի վարած մեծապետական խտրական քաղաքականությունը խորապես վիրավորում էր նրանց ազգային արժանապատվությունը և առաջ բերում արաբական երկրների առաջադեմ մտավորականության բուռն զայրույթը: Արաբական ազատագրական շարժման մասնակիցներից Մուսթաֆա Ղալայինին (1885—1944), քննադատելով իթթիհատական կառավարության քաղաքականությունը կրթության բնագավառում, գրում էր. «Ստամպուլի և Սեյանիկի մեջ կիրարկված ուսումնական կանոնադրությունը Պեյրուիթի, Հայնպի, Պաղատտի և այլ արաբական նահանգներում մեջ չի քալեր, բանի որ այդ վայրերում ժողովուրդները

²⁴ Sir Edwin Pears, Forty Years in Constantinople. New York, 1916, p. 271.

²⁵ Zeine N. Zeine, Op. cit., p. 84—85.

²⁶ Colonel Lamouche, Histoire de la Turquie. Payot, Paris, 1953, p. 337—338.

²⁷ Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում: Երևան, 1964, էջ 87:

²⁸ АВПР. Фонд «Политархив», д. 1039, 1910 г., л. 184.

²⁹ Ե. Ղ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 87:

Թրքերենն տարբեր լեզու կըխոսին... Թրքերենը գրեթե ջնջած է արաբերենի հետքը... Կառավարությունը ավելի ճիշտ շարժած պիտի ըլլար, եթէ յուրաքանչյուր երկրամասին մեջ ուսումնական լեզու ընդունեն տեղւոյն բնակչության լեզուն... Այս մասին պետք է ուշադիր ըլլա կրթական նախարարությունը, անկախաբար այն բանն, թէ ատիկա կրնա վերավորել փառասիրությունը շատ մը թուրք երիտասարդներուն, որոնք կըջանան թրքացնել տեղւոյն ընդ որ տարբերը»³⁰:

Արարական երկրների նկատմամբ երիտասարդ թուրքերի վարած ազգային քաղաքականության հիմնական առանցքը կազմել է պանիսլամիզմի արդուհամիդյան իդեոլոգիան, որը ստեղծվել էր Օսմանյան կայսրության ոչ թուրք, այդ թվում նաև արաբական ժողովուրդների օրեցօր ծավալվող ազատագրական շարժումը զսպելու և ձնշելու համար: Պանիսլամիզմի ռեակցիոն իդեոլոգիայի կողմնակիցը ձգտում էին ապագուցել բոլոր մուսուլմաններին միավորելու անհրաժեշտությունը՝ արտաքուստ մուսուլմանական աշխարհը իբր եվրոպական տերությունների իմպերիալիստական քաղաքականությանը հակադրելու համար: Իսկ իրականում «պանիսլամիզմի գաղափարախոսները ծառայում էին ռեակցիոն ֆեոդալական խաներին և, առանձնապես, թուրքական սուլթաններին, որոնք ձգտում էին ընդլայնել ու ամրապնդել իրենց տիրապետությունը այսպես կոչված մուսուլմանական Արևելքի ժողովուրդների վրա»³¹: Երիտասարդ թուրքերը, իրենց թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ ապավինելով այդ հետադիմական զոհաբերության, ձգտում էին վերջնական փլուզումից փրկել քայքայվող Օսմանյան կայսրությունը, պահպանել նրա տերիտորիալ ամբողջականությունը և իրենց գերիշխանության տակ պահել իրենց անկախության համար պայքարող մուսուլմանական ժողովուրդներին ու պետություններին: Այդ միանգամայն որոշակի քաղաքական նպատակներին հասնելու համար թուրք պանիսլամիստները լայնորեն օգտագործում էին թուրքական սուլթան խալիֆի բարձր հեղինակությունը մուսուլմանական աշխարհում: Մինչդեռ թուրքական խալիֆայու-

³⁰ Մեջբերումը կատարված է ըստ Հովհ. Աղբաշյանի «Արաբական ազգային ազատագրական զարթոնքը» գրքի: Բեյրութ, 1959, էջ 47:

³¹ А. С. Тверитинова, Фальсифицированная версия о турецком халифате. (Из истории панисламизма в Турции). Известия Отделения общественных наук АН Тадж. ССР, № 5, 1954, стр. 179.

թյան վերստին ինքը, ինչպես արդեն ապացուցվել է, իրենից ներկայացնում է պատմության միանգամայն գիտակցական կեղծում: «Թուրք պանիսլամիստների կողմից թուրքական սուլթանի հռչակումը իբրև խալիֆ, նվազագույն չափով անգամ դրական արձագանք չի գտել նվաճված մուսուլմանական ժողովուրդների մոտ, որոնք թուրքական սուլթանին երբեք չեն ճանաչել իբրև խալիֆ, և միշտ համառ պայքար են մղել թուրքական լծից ազատագրվելու համար»³²:

Մյուս կողմից, արաբական ժողովուրդները միանգամայն այլ կարծիքի էին թուրքերի կրոնասիրության մասին: Արաբների կարծիքով, թուրքերը դարեր շարունակ իրենց գործողություններով ամեն կերպ վարկաբեկել են մուսուլմանական աշխարհը³³:

Պանիսլամիզմի համիդյան ռեակցիոն քաղաքականության վառ արտահայտությունը հանդիսացավ Հեջազի երկաթուղագծի կառուցումը: Երկաթուղագծի շինարարությունը ձևականորեն պլանավորված էր իբրև սոսի կրոնական նախաձեռնություն, այն է՝ հեջտացնել ռեալիտետների ուղևորությունը ղեպի մահմեդականության սուրբ վայրերը: Քանի որ պետությունը զուրկ էր այդ շինարարությունը կատարելու համար անհրաժեշտ միջոցներից, իսկ Գերմանիան մերժել էր միջոցներ տրամադրել այդ նպատակի համար, որովհետև դեռևս վտանգի մեջ էր գտնվում Բաղդատի երկաթուղագծի շինարարության գործը³⁴, սուլթան խալիֆը ստիպված եղավ դիմելու մուսուլմանական աշխարհին, որպեսզի դրամական հանգանակություն կատարվի երկաթուղագծի կառուցման օգտին³⁵: Եվ բանի որ երկաթուղագծի շինարարությունը համապատասխանում էր նաև թուրքական նորելուկ ազգային բուրժուազիայի տնտեսական շահերին, ապա Աբդուլ Համիդին հաջողվեց Չինաստանից, Հնդկաստանից, Ղոնդյան կղզիներից ու այլ վայրերից հանգանակությունների միջոցով հավաքել 95 մլն. ֆրանկի մի խոշոր գումար³⁶: Եր-

³² Նույն տեղում, էջ 180: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս В. А. Гордлевский, Был ли турецкий султан халифом? Известия Отделения общественных наук АН Тадж. ССР, № 5, 1954, стр. 17—27.

³³ V. Moras, La Question de Turquie. Paris (s. d.), p. 5. 7.

³⁴ J. T. Parfit, Twenty years in Baghdad and Syria. London (undated), p. 60.

³⁵ P. Imbert, La renovation de l'Empire Ottoman. Paris, 1911, p. 104—105. J. T. Parfit, Op. cit., p. 60.

³⁶ В. А. Гурко-Кряжин, История революции в Турции. Москва, 1923, стр. 25.

կաթուղու կառուցումը պետք է օգնեք սուլթանին ամրապնդելու իր քաղաքացիական իշխանությունը Կոստանդնուպոլսում և կրոնական իշխանությունը Մեքքայում, միաժամանակ հնազանդության մեջ պահելու արաբական ցեղերին և հատուկ դրուղներին, որոնք ատում էին թուրքերի բռնակալական քաղաքականությունը³⁷: Երկաթուղազծի հանդիսավոր բացումից հետո, որը տեղի ունեցավ երիտասարդ թուրքերի իշխանության օրով, 1908 թ. սեպտեմբերին³⁸, թուրքական իշխանությունները երկաթուղազծի երկայնքով բնակվող բազմաթիվ արաբների բռնի կերպով տեղահան արեցին և քշեցին հեռու վայրեր, նրանցից խլած հողերն էլ առանց փոխհատուցման տվեցին «մուլուանդ շերքեզներին, որոնք ավելի վատահելի էին կանոնավոր դորբերի օգնությամբ արաբներին թալանելու և երկաթուղազծը թուրքերի օգտին պաշտպանելու համար»³⁹: Սուլթանն էլ երկաթուղազծի կրոնական բնույթը բնորոշելու համար այն հանձնում է էվթաֆի, այսինքն՝ հողեր-բարեգործական բույժերի մինիստրության տնօրինությանը⁴⁰:

Վ. Ի. Լենինը, բացահայտելով պանիսլամիզմի հակաժողովրդական բովանդակությունը, իբրև կարևոր խնդիր առաջ էր քաշում, որ «անհրաժեշտ է պայքարել պանիսլամիզմի և նման հոսանքների դեմ, որոնք փորձում են եվրոպական և ամերիկյան իմպերիալիզմի դեմ ուղղված ազատագրական շարժումը միացնել խաների, կալվածատերերի, մուլաների և նմանների դիրքի ամրացման հետ»⁴¹:

Օսմանյան կայսրության ժողովուրդների ազգային փոխհարաբերությունների ամենից ավելի բնորոշ դիժն այն էր, որ կենտրոնական Անատոլիայից բացի տիրապետող ազգը, այսինքն՝ օսմանյան թուրքերը ոչ մի տեղ բնակչության գերակշռող տարրը չեն կազմել⁴²: Ե՛վ Արաբիայում, և՛ Միջագետքում, և՛ Քուրդիստանում, և՛ Հայաստանում թուրքերը ներկայացված էին լոկ մի խումբ պաշտոնյաներով ու ղինվորներով, որոնք միանգամայն օտար էին այդ երկրների բնակչությանը և հանդիսանում էին երիտասարդ թուրքերի բռնակալական քաղաքականության կիրառողները տեղերում: Որքան

ավելի էր խստանում թուրքական իշխանությունների ճնշումը ոչ թուրք ազգությունների նկատմամբ, այնքան ավելի այդ ժողովուրդների մեջ ամրապնդվում էր ապակենտրոնացման ճգնուժը՝ սկսած վարչական ինքնավարությունից մինչև քաղաքական ավտոնոմիան: Թուրքիայի մասնատման հեռանկարը երիտասարդ թուրքերին հարկադրեց ազգային քաղաքականության հարցում դիմելու նոր միջոցի: Եվ այդ նոր միջոցը կայսրության բոլոր ոչ թուրք ազգությունների բռնի ասիմիլյացիայի, այսինքն՝ թուրքացման մոլի շուրջնիստական քաղաքականությունն էր, որ նրանք վերջնականապես ձևակերպեցին 1911 թվականի հոկտեմբերին կայացած համազումարում: Համազումարի որոշման մեջ ասված էր, որ ուրիշ ազգերին պետք է զրկել կաղմակերպվելու իրավունքից, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը թուրքական կայսրության նկատմամբ դավաճանությունն են: Ազգային փոքրամասնությունները կարող են պահպանել կրոնը, սակայն ոչ լեզուն: Թուրքերին լեզվի տարածումը հանդիսանում է մահմեդականության փրկիշխանության ստեղծման և ուրիշ ազգերի ասիմիլյացիայի ամենաբարձրագույն միջոցը⁴³:

Պանօսմանիզմի այդ քաղաքականության էությունը ավելի բացահայտ արտահայտել են իրենք՝ երիտասարդ թուրքերի պարագլուխները: Էնվեր փաշան հեղափոխությունից անմիջապես հետո բացականչում էր, որ այսուհետև բուլղարացի «չկա», հույն «չկա», մակեդոնացի «չկա», արաբ «չկա» և որ բոլորը «հավասար» են և բոլորը «օսմանցիներ» են⁴⁴: Միասնություն և առաջադիմություն» պարտիայի հիմնադիրներից դ-ր Նազիմը հետևյալ կերպ է բնութագրում այդ քաղաքականությունը. «Թուր Սոֆիայի և Աթենքի ազիտատորները դադարեն մեզ խանգարելուց, այն ժամանակ մենք կհաստատենք իսկական ազատություն, և այն ժամանակ դուր կտանենք, թե մենք ինչպես հեշտությամբ կծուլենք բոլոր հույներին, արաբներին, ալբանացիներին և նրանցից կշինենք մեկ ժողովուրդ մեկ մայրենի լեզվով, և ղեռ նրանք մեզ ընդառաջ կվազեն»⁴⁵: Իսկ այդ պայտիայի կոմիտեն իր շրջաբերականներից մեկում գրում էր.

37 J. T. Parfit, Op. cit., p. 60.

38 P. Imbert, Op. cit., p. 111.

39 J. T. Parfit, Op. cit., p. 62.

40 В. А. Гурко-Кряжин, Указ. соч., стр. 25.

41 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 171:

42 В. А. Гурко-Кряжин, Указ. соч., стр. 46.

43 См. Битаев, Проблемы Турции, Л., 1925, стр. 114. 6. Ղ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 67—68:

44 Е. В. Тарле, Соч., т. V, М., 1958, стр. 199. 6. Ղ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 67:

45 В. А. Гурко-Кряжин, Указ. соч., стр. 46.

«Մենք պետք է ամենից առաջ բուն երկրի ներսում ոչնչացնենք մեր բազմաթիվ և վտանգավոր թշնամիներին: Միայն այն ժամանակ մենք կմաքրենք հին հաշիվները մեր հարևանների հետ»⁴⁶:

Երիտասարդ թուրքերի պանօսմանիզմի դոկտրինան ամենից ավելի ճակատագրական եղավ Քուրբիայի հետագա բախտի համար: Այդ մոլի շովինիստական քաղաքականությունը, որ նրանք ամենայն դաժանությամբ կիրառում էին կայսրության բոլոր կողմերում ու բոլոր ոչ թուրք ազգությունների նկատմամբ, շատ շուտով ավելց իր կործանարար արդյունքները. շիկացավ քաղաքական մթնոլորտը ամբողջ կայսրությունում, խիստ ակտիվացավ ոչ թուրք ժաշովուրդների ազատագրական պայքարը և վերջապես Քուրբիան կանգնեց Բալկանյան շորս երկրների՝ Հունաստանի, Բուլղարիայի, Չեոնոգորիայի և Սերբիայի ռազմական դաշինքի դեմ օրհասական պատերազմ մղելու փաստի առաջ: Բալկանյան պատերազմում Քուրբիայի կրած ռազմական պարտությունները և եվրոպական թուրքիայում ունեցած տերիտորիալ կորուստները խարխալեցին երիտասարդ թուրքերի պանօսմանիզմի քաղաքականության բուն հիմքերը: Եվ Երիտասարդ թուրքերը, առայժմ չհրաժարվելով այդ, արդեն սնանկացած, գոկարինայից, իրենց մոլի նացիոնալիստական ձգտումներին հազորդ տալու համար ազգային հարցում և մասնավորապես արտաքին քաղաքականության ընդհանուր դիմեցին մի նոր, ավելի շովինիստական, խիստ ագրեսիվ կոնցեպցիայի՝ պանթուրքիզմին և պանթուրանիզմին: Այդ սեպտեմբրյան ուսմունքով նրանք բարոզում էին թուրքական բոլոր ժողովուրդների ազգային պետական և կրոնական-կուլտուրական բլուրի ստեղծում՝ Միջերկրից մինչև Բոսֆոր, Վոլգայից մինչև Միջերկրական ծով:

Իսլամի քաղաքական հզորության լիակատար անկումը և այդ կրոնը Օսմանյան կայսրության ղեկավարների հետ միավորող կապի թուլացումը ամենացայտուն կերպով երևան եկավ 1914 թվականին, երբ Մեհմեդ V սուլթանը հայտարարեց սրբազան պատերազմ (ջիհադ): Հնդկաստանի ու Աֆրիկայի, արաբական երկրների միլիոնավոր մահմեդականները շանսացին խալիֆի ձայնին:

«Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի պարագլուխները հույս ունեին պանիսլամիզմի ու պանօսմանիզմի կրեկնց սեպտեմբրյան

ցիոն գոկարինաների օգնությամբ դեռևս հնազանդության մեջ պահել կայսրության մուսուլմանական ժողովուրդներին: Բայց նմանում ծավալված երկարատև ազատագրական պայքարն ու արևմտյան մուսուլմանների ակտիվ մասնակցությունը Ալբանիայի ապստամբությանն ու Ալբանիայի անկախության հռչակումը խիստ զգաստացրին նրանց: Պանթուրքիզմի մեր օրերի ներկայացուցիչներից մեկը՝ էմին էրիշիրգիլը, խոսելով այդ շրջանի մասին, ստում է, որ արևմտյան մուսուլմանների մասնակցությունը ապստամբությանը համարվում էր իթիհհազ վե թերաքրի սխալ քաղաքականության հետեվանքը, ուստի այն ժամանակ ստում էին. «Արդեն ինչ լինելու էր եղավ: Մրանից հետո Օսմանյան կայսրությունում թուրքերն ու արաբները պետք է պաշտպանեն մուսուլմանությունն ու տարածեն իսլամիզմը»⁴⁷: Այդ քաղաքականությունը համարելով ճիշտ ելք ստեղծված վիճակից և, ձգտելով ցույց տալ թուրք ազգի ղեկավարներին արաբ ժողովուրդների նկատմամբ, էրիշիրգիլը մեջ է բերում թուրք բանաստեղծ Սանան Մեհմեդ Աքիֆի այն շրջանում գրած մի բանաստեղծության հետևյալ երկտողը.

„Türk Arapsız, yaşamaz, kim ki yaşar der delidir,
Arabın Türk ise hem sağ gözü, hem sağ elidir“⁴⁸.

Պանիսլամիզմի ավանտյուրիստական զազափարախոսության ցատագովները երբեք չէին մոռանում իրենց հիմնական քաղաքական նպատակը, այն է՝ թուրքերի գերիշխանությունը ստեղծվելիք կայսրությունում: Քանի որ երիտասարդ թուրքերը արաբական երկրներում շարունակում էին վարել արաբական ցեղերին միմյանց դեմ գոգոսելու, նրանց թուլացնելու, և իրենց գերիշխանությունը ապահովելու և դրանով իսկ նրանց ուշագործությունը ազատագրական պայքարից շեղելու արդուհամիզյան քաղաքականությունը, արարական բազմաթիվ ցեղեր, գուշակելով թուրքական իշխանությունների նենդ մտքերը, հաճախ զենքը ուղղում էին հենց այդ իշխանությունների դեմ. և էրիշիրգիլը ստիպված է դատնությունը նշելու, որ «օսմանյան թուրքերը այդ արաբներից նյութական ու բարոյական շատ վնաս են տեսել»⁴⁹:

⁴⁷ Emin M. Erişirgil, Türkçülük devri, milliyetçilik devri, insanlık devri. Ankara, 1948, s. 61.

⁴⁸ «Առանց արաբի թուրքը չի ապրի, խելագար է նա, ով ստում է՝ կապրի, թուրքն էլ արաբի և աջ աչքն է և աջ ձեռք» (Նույն տեղում, էջ 61):

⁴⁹ Նույն տեղում:

⁴⁶ См. П. Семеновт. Турция сегодня, вып. II, СПб., стр. 15. б. 2. У а р а г ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 67:

Երիտասարդ թուրքերի ստեղծած սահմանազրական նոր **ոեթիմը** թուրքիայում բազմազգ պետության ժողովուրդներին ո՛չ խոստացված քաղաքական ազատությունները տվեց, ո՛չ էլ նրանց առանց այն էլ վատթար տնտեսական վիճակի բարվոքում բերեց: Արաբական երկրների ժողովուրդները, որոնք կայսրության մյուս ժողովուրդների հետ միասին խանդավառությամբ ընդունեցին երիտասարդ թուրքերի ռեյուցիան և բավական վառ հույսեր էին կապում մահմեդական աշխարհի կրոնական ղեկավար սուլթան խալիֆի հետ, շատ շուտ զգացին ու հասկացան, որ թուրքիայի նոր կառավարիչների բոլոր հանդիսավոր խոստումներն էլ լոկ պատրանք են եղել: Ուստի նրանք սկսեցին երես շուռ տալ նոր **ոեթիմից**, և իրենց կրոնակիցների նկատմամբ ունեցած հանդուրժողական վերաբերմունքին փոխարինեցին դժգոհությունն ու ատելությունը: Անգլիացի միսիոներ Զ. Պարֆիտը, որը քսան տարի շարունակ ապրել է արաբական երկրներում, իր ճանապարհորդական նոթերում հիշատակում է, որ «արաբական ցեղերը մեծ մասամբ ատում են թուրքերին», և որ «թուրքերի հեղինակությունը որոշակիորեն գնալով ընկնում է»⁵⁰: Նշելով, որ պրոսպերիների ծրագրի մեջ մտնում էր «հերոսական սերբերի ոչնչացումը բուլղարների ատելության, և խելացի հայերի ոչնչացումը թուրքերի խորամանկության միջոցով», Պարֆիտը ավելացնում է, որ «...ղեռ մնում է արաբական ժողովրդի ահեղ անտապոնիզմը, որը ավելի ու ավելի է տրամադրվում փշրելու թուրքերի շղթաները»⁵¹:

Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Զինովևը 1909 թվականի մարտին հազորդում էր. «Իրերի ներկա վիճակը ամենևին չի բավարարում Հալեպի վիլայեթում բնակվող ժողովուրդներին: Թուրքերը, որոնք իրենց համարում են արտոնյալ ուսսա, չեն կարող հաշտվել կոնստիտուցիայով հռչակված ընդհանուր իրավահավասարության սկզբունքի հետ: Արաբները չափազանց դժգոհ են այն աննշան դերից, որ թուրքերը տվել են իրենց երկրի կառավարման գործում, որին նրանք բավական լայն մասնակցություն են ունեցել նախկին **ոեթիմի** օրով»⁵²:

«Թայմս» թերթը 1909 թ. հունիսի 5-ի համարում զետեղել է

մի թղթակցություն, որտեղ փորձ է արվում բացատրել Միջագետքում տիրող լարված վիճակի պատճառները: «Թուրքական կառավարության նկատմամբ նրանց (արաբների.— Շ. Մ.) թշնամության պատճառները կայանում են թուրքական իշխանությունների կաշառակերության և վաճառվածության մեջ, որոնք դարձացել են այնպիսի չափերով, որոնց օրինակները մինչև այժմ չեն պատահել անգամ Օսմանյան կայսրությունում: Ի վիճակի չլինելով զսպել ցեղերին, թուրքական շինովնիկները գերադասում են ձուկ որսալ պղտոր ջրում: Նրանք մի շեյխին գրգռում են մեկ ուրիշի դեմ և այդպիսով ստեղծում և խրախուսում են խռովությունները»⁵³:

Երիտասարդ թուրքերի վարած այդ պառակտողական քաղաքականության հետևանքով էլ արաբական ժողովուրդների ազատագրական շարժումը երկար ժամանակ մնացել էր մասնատված, առանց ուժեղ ղեկավարության և, միջցեղային երկպառակությունների հետևանքով նրա ուժերը շարունակ ջլատվում էին: Բայց երբ ցեղերը իրենց վրա կրում էին թուրքական իշխանությունների անողոք ճնշումը, նրանք, մոռանալով իրենց արհեստականորեն հրահրված թշնամանքը միմյանց նկատմամբ, միանում էին և ղենքը ուղղում թուրք կեղեքիչների ու ստրկացնողների դեմ: «Պազրան (բեն-լյամ) և չիհուզ ցեղերի ապստամբությունը,— հաղորդում էր Զինովևը, վկայակոչելով Կոստանդնուպոլսում լույս տեսնող մի թերթի թղթակցությունը,— որոնք միացել են, չնայած նրանց միջև վաղուց գոյություն ունեցած թշնամությանը, չի կարելի հավասարեցնել նախկինում գոյություն ունեցած ավազակությանը: Այն ընդունել է կառավարության դեմ ուղղված ապստամբության բնույթ»⁵⁴:

Իրենք՝ երիտասարդ թուրքերն անգամ չէին կարող ժխտել այն իրողությունը, որ իրենք այլևս ի վիճակի չեն հնազանդության մեջ պահել ապստամբությունների մշտական բուն հանդիսացող արաբական երկրների ժողովուրդներին: Բաղդատի ռուսական հյուպատոս Օռլովը հեռագրում էր, որ «ղեպուտատ Իսմայիլ Հաքբին վերադարձավ Միջագետք կատարած ուղևորությունից և երիտասարդ թուրքերի ժողովում հայտարարեց, որ «թուրքական իշխանությունը գոյություն ունի միայն Բաղդատում»⁵⁵:

⁵⁰ J. T. Parit, Op. cit., p. 50.

⁵¹ Ibid., p. 59.

⁵² АВПР. Фонд «Политархив», д. 1034, л. 55. Секретная депеша Зиновьева, № 37 от 21 февраля—6 марта 1909 г.

⁵³ «Թայմս», 1909 թվականի հունիսի 5: АВПР. Фонд «Политархив», д. 1034, л. 170.

⁵⁴ АВПР. Фонд «Политархив», д. 1034, л. 179.

⁵⁵ АВПР. Фонд «Политархив», д. 1039, л. 418.

Օսմանյան ընդարձակ կայսրությունում ապստամբությունների անմար օջախ է եղել Եմենը՝ թուրք կառավարողների մշտական մտահոգության առարկան: Դեռևս 1909 թվականի մայիսին, զիջելով Եմենի իմամ Յահյայի՝ Կոստանդնուպոլիս ժամանած պատվիրակներին համառ պահանջներին, Թուրքիայի մինիստրների խորհուրդը ստիպված եղավ քննության առնել այդ պահանջները և անհրաժեշտ համարեց Եմենի մի քանի կազաներից կազմել մի մարզ, որի կառավարումը տասը տարով հանձնել իմամ Յահյային, ավտոնոմիա շնորհել Ասիրին, իսկ Թուրքիայի գերագույն իրավունքները պաշտպանելու համար մի քանի կետերում պահել թուրքական կայազորները: Կառավարության այդ զիջումը դրական արձագանք գտավ հասարակության տարբեր շրջաններում, քանի որ այդ զիջման գնով կառավարությունը, «ազատվելով Եմենում մշտական ռազմական էքսպեդիցիաներ կազմակերպելու անհրաժեշտությունից, հնարավորություն կստանա այդ երկրում ապարդյուն վատնելով ուժերը օգտագործել անհրաժեշտ վերափոխումներ անցկացնելու համար»⁵⁶:

Քանի որ այս համաձայնությունը չկենսագործվեց, ապստամբությունը Եմենում նոր ուժով բորբոքվեց 1911 թվականի սկզբներին, ընդունելով մեծ չափեր: Երկրի գլխավոր քաղաք Սանաան շրջապատվել էր արաբական ապստամբ ցեղերի կողմից, որոնք ենթարկվում էին շեյխ Յահյային և Սեիդ Իդրիսին: Շարժումը ընդգրկել էր ոչ միայն Հարավային Արաբիան, այլև սպառնում էր տարածվել Հեջազի ցեղերի վրա և անգամ վարակել Մեքքայի ու Մեդինայի շերիֆներին⁵⁷:

Թարձրագույն Դուռը սրոշում ընդունեց ապստամբությունը ճնշելու համար Եմեն ուղարկել 31 զուամարտակ և լեռնային հրետանու 5 մարտկոց, մինչդեռ հուժկու ապստամբությունը ճնշելու համար պահանջվում էր երկու անգամ ավելի մեծ քանակությամբ զինված ուժեր⁵⁸:

Այս հրատապ հարցի շուրջը խոր տարածայնություններ առաջացան Կոստանդնուպոլիսի կառավարող շրջաններում: Մեծ վեճերը և ներքին գործերի մինիստր Թալաաթ բեյը պահանջում էին ձեռ-

նարկել ամենախիստ ռեպրեսիվ միջոցներ, իսկ ռազմական մինիստր Մահմուդ Շեֆքեթ փաշան աշխատում էր բավաբարվել սակավաթիվ զորքեր ուղարկելով և սահմանափակ ռազմական հաջողություններով⁵⁹: Մահմուդ Շեֆքեթ փաշային անհանգստացնող մտքերը երկակի բնույթի էին: Մի կողմից նա չէր ցանկանում զգալի քանակությամբ զորք ուղարկելով Արաբիա, դրանով իսկ թուլացնել Եվրոպական Թուրքիայի ուժերը, միաժամանակ դժվարացնելով ընդհանուր զինվորական ռեֆորմը երկրում, որ նա նոր էր սկսել: Դրա հետ մեկտեղ, լինելով բաղադատցի արաբ, ռազմական մինիստրը առանձին համակրանքով չէր վերաբերվում Արաբիայի նկատմամբ թուրքերի բացարձակ գերիշխանությունը հաստատելու գաղափարին, առավել ևս, որ ինքը, իբրև ռազմական մինիստր, շատ լավ էր հասկանում, որ դա շատ դժվար է և գրեթե անհնար⁶⁰:

Եմենի հարցի վերաբերյալ վերջնական համաձայնությունը կայացավ 1912 թվականի սկզբներին, երբ Թուրքիայի ղեկուսատաների պալատը ցրվել էր: Այս հանգամանքը չափազանց բարենպաստ պայմաններ ստեղծեց իմամ Յահյայի հետ կնքված համաձայնագրի կենսագործման համար: Նախ, վերացավ համաձայնագիրը պառլամենտում քննարկելու անհրաժեշտությունը: Համաձայնագրով իմամ Յահյային տրվում էր ոչ միայն լայն ավտոնոմիա, այլև փաստական անկախություն կենտրոնական կառավարությունից: «Այդ համաձայնագրի լրիվ տեքստը, — հաղորդում էր Չարիկովը 1912 թվականի հունվարի 9-ի (22-ի) հեռագրում, — չհրապարակվեց և նույնիսկ չհայտնվեց ղեկուսատաներին, շնայած այն արդեն մտել էր ուժի մեջ, և թուրքական զորքերը արդեն հեռանում էին Սանաայից ու Եմենի մյուս ներքին կետերից: Կառավարությունը երկյուղ էր կրում, թե Եմենին շնորհված արտոնությունների հրապարակային քննարկումը կարող է ինքնավարության և ապակենտրոնացման համանման պայմանների պահանջ առաջացնել արաններին, մակեդոնացիների, հայերի ու քրդերի շրջանում»⁶¹:

Օսմանյան կայսրության արաբական միլիայններում ազգային-ազատագրական շարժման հիմնական շարժիչ ուժը գյուղացիությունն էր, ֆեյլահներն ու բեդվինները և քաղաքի ստորին խավերը՝ բանվորները, արհեստավորները, մանր առևտրականներն ու ցածր հոգևորականությունը: Ազգային բուրժուազիան և կալվածատերերը,

56 Նույն տեղում, գ. 1034, թ. 152—153:

57 Նույն տեղում, գ. 1041, թ. 92:

58 АВПР. Фонд «Политархив», д. 1041, л. 92.

59 Նույն տեղում, թ. 18 և 26:

60 Նույն տեղում, թ. 26:

61 Նույն տեղում, գ. 1044, թ. 10:

որոնց ձեռքում էր գտնվում հիմնականում այդ շարժման ղեկավարությունը, ինչպես նաև բազմաթիվ քաղաքական պարտիաներն ու ընկերությունները հետապնդում էին շափազանց սահմանափակ նպատակներ և հաճախ այդ նպատակներին հասնելու համար էլ բավականաչափ հետևողականություն չէին ցուցաբերում: «Տեղի ունեցավ միտինգ, որին մասնակցեց 40000 մարդ,— հաղորդում էր ուսական ղեկավար Չարիկովը, 1911 թ. հոկտեմբերին,— արտասանվեցին հայրենասիրական ճառեր և բացվեց կամավորների ցուցակագրում: Այսօր ցուցակագրվեց 5000 մարդ. ստորին դասում անկեղծ ոգևորություն է տիրում: Չինովնիկներն ու սպաները ինչպես Քաղզատում, այնպես էլ վիլայեթում կես ամսվա աշխատավարձը զրհարեցրում են պատերազմի կարիքներին: Բարձր դասի արարները շարախնդում են, բայց վախենում են արտահայտել թշնամական զգացումները թուրքերի նկատմամբ»⁶²:

Օսմանյան կայսրության արաբական ժողովուրդների ազգային ինքնագիտակցության այդ դարձումն ու բուռն աճը բուրժուական պատմաբաններն ու սոցիոլոգներն անվանում են «նացիոնալիզմի» սկզբնավորում ու զարգացում, դրանով իսկ ազձատելով ազգի ու ազգային գաղափարախոսության բուն էության հարցը: Բուրժուական գրականության մեջ «նացիոնալիզմ» տերմինը գուրկ է քիչ թե շատ որոշակի բովանդակությունից. այդ տերմինով նրանք արտահայտում են ինչպես ազգային-ազատագրական շարժումը, այնպես էլ բուրժուա-նացիոնալիստական քաղաքականությունն ու գաղափարախոսությունը: Ազգի ձևավորման պրոցեսում նացիոնալիզմը ծագում է իբրև մի օրինաչափ երևույթ, որը արտահայտում է ձևավորվող ազգի ձգտումը՝ պահպանելու իր լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի ու հոգեկան կառուցվածքի ընդհանրությունը, հիմնավորելու տվյալ ազգի պատմական գոյության իրավունքը: Իմպերիալիզմի ժամանակաշրջանում ճնշող ազգերը նացիոնալիզմն օգտագործում են որպես ուրիշ ժողովուրդներին ստրկացնելու միջոց, իսկ ճնշված ժողովուրդները՝ իբրև ազատագրական պայքարի գործիք:

Թուրքիան ինքը հանդիսանալով իմպերիալիստական մեծ տերություններից քաղաքական ու տնտեսական կախման մեջ գտնվող պետություն, իր հերթին ամենադաժան միջոցներով ճնշում էր իր կազմի մեջ եղած այլազգի բազմաթիվ ժողովուրդների ազա-

տություն ու անկախության ձգտումները: Պետության կյանքի շրջադարձային պահերին էվոլյուցիա է ապրում նաև նացիոնալիզմի բուն էությունը: Երբ որևէ ազգ ձեռք է բերում քիչ թե շատ նշանակալի քաղաքական ու տնտեսական անկախություն, նկատելի կերպով ուժեղանում է ազգային բուրժուազիայի, այդ թվում նաև նրա շափավոր թևի ձգտումը՝ ժողովրդական մասսաներին հեռացնելու երկրի քաղաքական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալուց: Համազգային խնդիրներ լուծելու շրջանում նացիոնալիզմի քաղաքականության մեջ հանդես են գալիս երկու տենդենց. առաջին տենդենցի էությունը կայանում է այն բանում, որ իշխանությունն ու արտոնությունները պահպանվեն ազգային բուրժուազիայի ձեռքում (բուրժուական նացիոնալիզմ), իսկ երկրորդ տենդենցը իրենից ներկայացնում է ժողովրդական լայն մասսաների դեմոկրատական նացիոնալիզմը:

Հետագայում միայն, քաղաքական ու տնտեսական սուվերեն դարգացման ուղին թևակոխած գաղութային ու կախյալ երկրների ազգային բուրժուազիան, պրոլետարիատը, գյուղացիությունն ու ինտելիգենցիան ձգտում են միասնական հակաիմպերիալիստական ձևակառույց շրջանակներում իմպերիալիստների նացիոնալիստական, շտվինիստական քաղաքականությանը հակադրել իրենց ազգային գաղափարախոսությունը, որի մեջ նացիոնալիզմը պահպանում է իր նախասկզբնական նշանակությունը իբրև ձևավորվող ազգի պաշտպանության միջոց, իմպերիալիզմի գաղութարարական քաղաքականության զեմ միասնական ազգային ձևակառույցի պայքարի գործիք:

Արաբական ժողովուրդների ազատագրական պայքարի համար հատկանշական է եղել այն, որ ընդհուպ մինչև 1914 թվականի սկզբները, երբ երիտասարդ թուրքերն սկսեցին դաժանորեն հետապրնդել ու ջրել, արաբական բոլոր կազմակերպությունները, այդ շարժումը զլխավորող քաղաքական պարտիաների, ղանազան միությունների ու խմբավորումների ծրագրերում, նույնիսկ 1913 թ. հունիսին Փարիզում զումարված առաջին արաբական կոնգրեսի ընդունած որոշման մեջ, չէր դրվում Օսմանյան կայսրությունից լրիվ անջատվելու խնդիր և պահանջ, այլ բոլորն էլ սահմանափակվում էին վարչական ավտոնոմիայի և ռեֆորմների պահանջներով:

Կիրանանցի պատմաբան Ջեյնեն իր վերոհիշյալ գրքում գրում է. «...թեև արաբներն ունեցել են թուրքական կառավարությունից դժգոհ լինելու բազմաթիվ առիթներ, նրանք, բացառությամբ Լիբանանի մարոնիներից և Արաբիայի վահաբիներից, չէին պաշտպա-

62 АВПР. Фонд «Политархив», д. 1042, л. 358.

նում Օսմանյան կայսրությունից անջատվելու ոչ մի գաղափար: Հիմնական շեշտը նրանք դնում էին ռեֆորմների վրա: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք անողոք քննադատում էին սուլթանությունը, լոյալ էին մնում խալիֆայության նկատմամբ: Այնուամենայնիվ քսաներորդ դարի սկզբին, 1908-ից մինչև 1918 թվականի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ երիտասարդ թուրքերը կանգնած էին իշխանության գլուխ, արաբա-թուրքական հարաբերությունները մեծ չափով լարվեցին և զգալի փոփոխություն կրեցին: Արաբները շարունակում էին պահանջել ռեֆորմներ, բայց այդ ռեֆորմների գլխավոր նպատակը մնում էր արաբական ավտոնոմիան իրենց սեփական նահանգներում՝ Օսմանյան կայսրության շրջանակներում: Արաբական լիակատար անկախության և արաբական ազգային սուվերենության հաստատումը հետին միտք էր»⁶³:

Սակայն 1914 թ. սկզբներից արաբական զրեթե բոլոր քաղաքական կազմակերպությունները սկսեցին հեռանալ նախկին ռեֆորմիստական տակտիկայից: Օրակարգի հարց դարձավ՝ ավտոնոմիայի լոզունգը փոխարինել արաբական վիլայեթների լիակատար ազատագրության լոզունգով:

* * *

Օսմանյան կայսրության արաբական ժողովուրդների նկատմամբ երիտասարդ թուրքերի վարած մեծապետական շովինիստական քաղաքականության սնանկության վառ ապացույցը հանդիսացավ արաբական երկրների զարգացման հետագա պատմությունը: «Արաբական երկրները, — գրում է Ամին Սաիդը, — որոնք անջատվեցին թուրքիայից, կարճ ժամկետում հասան ավելի բարձր մակարդակի, համեմատած այն մակարդակի հետ, որում նրանք գտնվում էին թուրքական տիրապետության ժամանակաշրջանում, իսկ մի քանիսը անցան թուրքերից և գերազանցեցին նրանց բոլոր բնագավառներում, առանձնապես լուսավորության և արտագրության բնագավառում»⁶⁴:

Վերջին տարիներին արաբական որոշ երկրներ, նվաճելով քաղաքական ու տնտեսական լիակատար անկախություն, կատարեցին նոր առաջադիմական քայլ, ազգայնացնելով իրենց էկոնոմիկայի

առաջատար ճյուղերը, որը անհրաժեշտ պայմաններ ապահովեց այդ երկրների էկոնոմիկայի հետագա բուռն զարգացման և քաղաքական անկախության ամրապնդման համար:

А. Г. МАРТИРОСЯН

ПОЛИТИКА МЛАДОТУРОК ПО НАЦИОНАЛЬНОМУ ВОПРОСУ В АРАБСКИХ СТРАНАХ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1908—1914 гг.)

Резюме

После провозглашения второй турецкой конституции в 1908 году и, особенно, после свержения султана Абдул Гамида II и прихода к власти младотурецкой партии „Единение и прогресс“, на время показалось, что в Османской империи наступила эра социального и национального освобождения. Однако младотурки очень скоро предали забвению торжественно провозглашенные принципы „свободы“, „равенства“, „братства“ и специфически турецкого лозунга „правосудия“ и на деле уклонились от демократического решения национального и других вопросов. Более того, они повели решительное наступление против национальных интересов народов, населявших Османскую империю.

